թեանց, և շնորհաց։

ИЗЪ КНИГЪ
Ի
ԳՐԵԱՆՑ
Ռոստոմայ
ՄԱԴԱԹԵԱՆՑ
№ 18
РОСТОМА МАДАТОВА
5

...թեան բնութեան
..., շնորհին աստուծոյ
...մք ուրանալ և հեռև
...աչիւ հանդերձ։
...տեցի գոլ յոյժ լքեց
...ի պակասութիւն ինչ։
...րձրագունից և գաղտ
...նցն ոչ անքննելեաց։
...պաճինութիւն ընմիայ
...ում սևեռելի է։

...րք Չորրորդ։

Թէ որքանիւք պատկառանօք վեր ընդ-
ունելի իցէ քրիստոս։
Թէ մեծ բարութիւնն և սէրն ոչ ըն
Սրբազնութեան ընծեռելի մարդկան։
Թէ օգտակար իցէ միշտ հաղորդիլն։
Թէ բազումք բարիք պարգևեցին ջերմ-
եռանդապէս հաղորդեցելոց։
Յաղագս արժանաւորութեան սրբազ-
նութեան և կացութեան քահանայականի
Հարցումն ներկրթութեան յառաջ քան
զհաղորդութիւնն։
Յաղագս զննման յատկականի խղճի մտաց
և զսպման յառաջադրութեան։
Յաղագս մատուցելութեան 'ի խաչին,
վերանշանելութեանն ինքեան սեփա

# ԳԻՐՔ
# ՄԵԿՆՈՒԹԵԱՆ
# ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ
## ՍՐԲՈՅ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵ ՏԱՐԱՆՉԻ.

Ի լատինացւոց թարգմանեցեալ՝ ի հայ բարբառ. ՚ի Պետրոսէ վար դապետէ Թիֆլիզեցւոյ։

Տպագրեցեալ ներ տպարանում սրբոյ Էջմիածնի, և սրբոյ Սարգ սի զօրավարի։

Ի Հայրապետութեան Տեառն Նահապետի Կաթուղիկոսի ամենայն հայոց։

---

Ի Կոստանդինուպօլիս. ՚ի Գաղաթի.

Թուաբերութեան հայոց. ՌՃԽԹ.
և ԺԵ ին յունվարի ամսոյն.

փրկչին. 1700. յունվարի ԺԵ.

Աղօթք առ երկնային Երուսաղէմն · ըն բուրելով
ալյէ գլ. Դր.

Ով լուսաւոր տուն այ Երուսաղէմ երկնային · սիրեցի զվայելչութիւն քո · և զտեղի բնակութեան փառաց տեառն իմոյ, աստեղծողին և շինողին քո ։ Առ քեզ հառաչէ պանդխտութիւն իմ տիւ և գիշեր ։ Առ քեզ հեծէ սիրտ իմ · առ քեզ են աչք մտացս · և առ քեզ ժամանել ցանկայ, հոգի իմ ։ Աղաչեմ նմա որ արարն ըզքեզ զի ստացայց զիս ՚ի քեզ · զի նա արար զիս և զքեզ ։ Այլ մանաւանդ դու ասա նմա, և դու աղաչեա · զի արժանի արասցէ զիս մասնակից լինել փառաց քոց Օ ի զսուրբ ընկերակցութեանն քո · և զզարմանալի գեղեցկութեանն քո ոչ խնդրեմ վասն արդեանց իմոց, այլ վասն արդեանցն արեան նորա · որով գնեցաք ես և դու · հասցեն ՚ի թիկունս իմ մեղաւորիս մաքրագոյնք և նուրբ աղօթք քոյք, որք ոչ երբէք առ ած անընդունելիք կարեն լինել ։

Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ յայսմիկ աքսորանաց վայրի · և պանդխտութիւն իմ երկար եղև յոյժ ։ Առ գետս · այսինքն անցաւորս ։ Բաբելոնի · այսինքն աշխարհիս այսորիկ նստիմ և լամ · մինչ յիշեմ



զքեզ

զքեզ սիօն զմայրդ մեր երուսաղէմ ուր
ոչ ինչ է անցաւոր, այլ յաւիտենական և
մնացական. վ̃ոյ կամիմ բաժանիլ. 'ի մար
մնոյս և լինել ընդ քեզ. Ով երուսաղէմ
փառաւոր քաղաք այ̃. երբ արդեօք ե-
կեալ հանգիցեմ 'ի քեզ. Երբ արդեօք
նստայց ընդ հովանեաւ որմոց քոց և եղէց
ապահով 'ի հողմոյ սատանայականի փոր
ձութեն. 'ի տապոյ մարմնոյս ցանկութե-
նա և 'ի ցրտոյ աշխարհիս փառաց. Երու-
սաղէմ, երուսաղէմ. արա՛ աղաչեմ զքեզ
զի զկնի ստեղծողին քոյ դու միայն լի
ցիս խնդութիւն հոգւոյս, և ցնծութիւն
սրտիս Ամէն.

## Յաղագս օգտութեան և գերազանցութեան գրք գոյս ցուցմունն յօհաննու.

Մեծագոյն շահն և բազում օգ-
տութիւնն. որ յայսմանէ գըր
գոյս առ մ̃ք եկեղեցին բղխէ,
երևի 'ի բանից յայնցանէ, զորս
յօհաննէս ըն սկզբանն ասէ գրգոյս.
Երանի որ ընթեռնու. և լսէ զբանն մար
գարէութեանն այսորիկ, և պահէ զայնս.
որք 'ի սմին գրեցեալք են. Եւ ևս թէ
որքան սիրականէ այ̃, կամ թէ որքան 'ի
մարդկանէ

մարդկանէ յարգիլ պարտէ գիրս այս· ցուցանէ մեզ բանն այն, որ 'ի վախճանի գրոյս ասէ: Ես յս͞ առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղեցեացդ: Եւ զկնի սակաւուց ասէ· վկայեմ ես ամենայ նի, որ լսէ զբանն մարգարէութեան գը րոյս այսորիկ· եթէ ոք յաւելցէ 'ի սա· յաւելցէ, 'ի վերայ նորա ա͞ծ զեօթն հա րուածս գրեցեալսն 'ի գիրս այս: Եւ ե- թէ ոք պակասեցուսցէ 'ի բանից մարգա րէութեան գրոյս այսորիկ, պակասեցուս ցէ, եւ հատցէ ա͞ծ զբաժին նորա 'ի գրոյն կենաց:

Արդ, կամեցաւ ա͞ծ 'ի ձեռն գրոյս այսո րիկ յայտնել զաճումն, եւ զնուազումն եկե ղեցւոյն իւրոյ· նա եւ զյաջողութիւնս, եւ զձախորդութիւնս, որք եկին եւ գալոց քեն 'ի վերայ եկեղեցւոյ իսկզբանէ ն͞ր, մինչեւ 'ի վախճանն ն͞ր:

Ո՛չ էր պատեհ թէ գրեանքն հընոյ կտա կարանին լիագոյնք եւ ճոխագոյնք 'իցէին, քան զգրեանսն նորոյ կտակիս· այլ մանա ւանդ, ո՞չ նոր օրէնս առաւատագոյնէ շնոր հօք քան զհինն, սապէս ոչ էր պատեհ թէ գրեանքն նորոյ կտակիս նուազագոյնք քան զհինն իցէին: Արդ· գիրն հընոյ կտակա րանին բաժանին 'ի դ͞: Որոց մինն է օրէ նաց· եւ սոքա բաժանին 'ի ե͞ գիրքն մովսէ սի· Երկրորդնէ պատմողական, եւ սոքա

են Դ գրեանքն Դ Թագաւորութեանցն ։
Երրորդ գիրնէ բարոյական, և սա բաժա
նի 'ի գիրն յոբայ և յիմաստութեանն սողո
մոնի ։ Իսկ չորրորդ գիրգնէ մարգարէա
կան ։ որ բաժանի 'ի մարգարէութիւնս
չորից մեծագունից, և ԺԲ անից փոքրա
գունից մարգարէից ։

Այնպէս և, ինորում կտակարանոջս ու
նիմք վարդապետութիւնս օրինականս, և
այսէ Դ գլուխ աւետարանն ։ Ունիմք ըզ
պատմողականս ։ որ է գործ առաքելոցն ։
Ունիմք զգրեանսն բարոյականսն, որք
են Թուղթք առաքելոց ։ Ուրեմն ապա,
առ 'ի ոչ գոլ նուաստագոյն նոր կտակա
րանս քան զՀինն, պարտէր ունիլ և ըզ
մարգարէականն, և այսէ Յայտնութիւնն
յոհաննու ։

Դարձեալ, գիրգն կտակարանին Հնոյ կա
րի գեղեցկաբար խօսեցաւ զառաջնոյ գա
լստենէն Քի, և զչարագոյն նեռանէ, ա
պա ուրեմն պարտէր և գիրգ իմն 'ի նո
րում կտակարանոջս, որ խօսիցէր զայսցա
նէ ։ և գիրգս այսէ Յայտնութիւնն յոհան
նու ։

Ծանիր եղբայր իմ ընթերցող, տեսցես
բազում տեղիս զորս ոչ ճկնեցի ։ այս
եղև յաղագս յայտնի գոլոյն նոցա ։



Եւ օրհնէին զերգս նորս՝ և ասէին. արժա
նի ես առնուլ զգիրսդ և բանալ զկնիքս
դորա զի զենար և գնեցեր ա͞յ արեամբ քով.
Յայտ. ե. գլխ. 9 

## Գլուխ առաջին.

1. Յայտնութիւն յի՛ ք՛ի, զոր ետ նմա բն
ա՛ծ առ ՚ի յայտնել ծառայից իւ-
րոց։
Զյայտնութիւնս այս Հայրն եր մեկ
կնաւոր պարգեւեաց մարդկութեանն ք՛ի
որպէս զվարձ հնազանդութեան. եւ չար
չարանաց նորա։ Զի ետ մարդկութեանն
որդւոյ իւրում զկարողութիւն յայտնելոյ
զխորինս խորհուրդան ապագայս եւ զան
ցեալս։ (Որ լինելոց է վաղվաղակի. եւ նշա
նակեաց առաքելով ՚ի ձեռն հրեշտակի իւ-
րոյ առ յօհաննէս ծառայ իւր։ (Զոր ինչ
տեսաց. ետես եւ լուաւ յօհաննէս յայսմիկ
գրոջս. զա՛մ եցոյց ք՛ս, եւ զա՛մ լուաւ ՚ի ք՛է,
բայց ոչ անմիջապէս, այլ միջնորդութ՟բ
հրեշտակին։ Զի զոր ինչ ասէր, եւ ցուցա
նէր ք՛ս հրեշտակին, զնոյնն հրեշտակն
ասէր. եւ ցուցանէր յօհաննու, եւ յօհաննէս
աւանդեաց ծառայիցն ք՛ի. այսինքն եկե
ղեցւոյն ք՛ի.
2. Որ վկայեաց զբանն ա՛յ. եւ զվկայու բն

թիւն յի քի զոր ետես · և որ էրն · և որ
լինելոցէ յետ այսորիկ ·

մեկ Որ էրն այսինքն զքս եցոյց յօհաննու ոչ
միայն · Որ էրն · այսինքն զանցեալն, այլ
և որ լինելոցն է ·

բն 3 · Երանի որ ընթեռնու զբանն մարգա
րէութենս այսորիկ · և որ լսէ և պահէ
զոր ինչ 'ի սմա գրեցեալ է ։ Զի ժամա
նակս մերձեալ է ։

մեկ Զի թէպէտ հեռի էր կատարած աշխարհի ·
և ժամանակն նեռանն · զորմէ խօսելոցէ յ-
հան էս, սակայն բազումք մարգարէու
թիւնք գրոյս կատարեցան սակաւ ինչ
զկնի յօհաննու ։

բն 4 · Յօհաննէս առ Է եկեղեցիս · որք են
յասիայ · շնորհք ընդ ձեզ և խաղաղութի
յէէն, և որ էրն, և որ գալոցնէ, և'ի յեօ
թանց ոգւոցն որք առաջի աթոռոյ նորա
կան ·

մեկ Յէէն · այսինքն հայրն ած · որ ցմովսէս ասաց ։
Որ էնն առաքեաց զիս ։ Որ էրն, այսինքն
որդին · զորմէ յօհաննէս ասէ · իսկզբանէ
էր բանն, և բանն էր առ ած · որ գալոց
նէ, այսինքն հոգին սբ, որ ոչ միայն եկն
յաւուրն պէնտէկոստէի · այլ և միշտ գայ
'ի հոգիս և 'ի սիրտս հաւատացելոց ։ Եւ եւթ
յեօթանց ոգւոցն · այսինքն · յեօթանց շը
նորհացն հոգւոյն սրբոյ · զորոց խօսելով
եսայի ասէ ։ Հանգիցէ 'ի վերայ նորա ·
այսինքն 'ի վերայ մեսիայի · ոգի իմաստու



թեան

թեան և հանճարոյ. հոգի խորհրդոյ և
զօրութե հոգի գիտութեան և ածպաշ
տութե և լցէ զնա ած հոգի երկիւղիւ։
5. Յսւյէ Քէ հաւատարմէ վկայէ. որ է բն
անդրանիկ մեռելոց և իշխան թագաւո
րութեանց երկրի. որ սիրեացն զմեզ. և
ելոյծ զկապանս մեղաց մերոց. արեամբն
իւրով։
6. Որ արար զմեզ թագաւորս. և քահա բն
նայս այ և հօր իւրոյ. նմա փառք և զօրու
թիւն յաւիտեանս յաւիտենից Ամէն։
Համայնք բարիք քրիստոնեայք ասին քա մեկ
հանայք, զի են անդամք քահանային այսո
րիկ զորմէ դաւիթ ասէ. Դու ես քահա
նայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի։
Նա և ասին քահանայք. զի հանապա
զորդ զինքեանս որպէս զմաքուր ողջակէզս
աղօթիւք և զղջմամբ սրտի մատուցանեն
այ. Նա և թագաւորք կոչին, զի հոգին
տիրէ մարմնոյն. և բանականութիւնն ցաս
ման և ցանկութեան։
7. Ահաւասիկ գալոցէ ընդ ամպս երկնից բն
և տեսցեն զնա ամ աչք. և որք խոցեցին
լացցեն զինքեանս ի վերայ նորա ամենայն
ազգք երկրի այո Ամէն։
Զայսմանէ կանխասաց մարգարէն զաքա մեկ
րիա ասէ. ժբ. գլխ. Հայեսցեն ի յիս զոր
բևեռեցին, և կոծեսցեն ի սուգ մեծ ողբ
ի վերայ միածնի։
8. Ես եմ ալֆա և օմեգա, այսինքն ա բն

ռաջին

ւաջինն եւ յետինն, ասէ տր̃ ած̃, եւ որ էն,
եւ որ էր, եւ որ գալոցէ տէր ած̃ ամենակա
լող:

մեկ Արդ. այս գիրս. ա. սկիզբնէ այբ եւ բեն
գրոցն յունաց որպէս է եւ մերն. իսկ. օ.
գիրն է վերջին գիրն որպէս է գիրն մեր
ք. վն̃ այս գիրս. ա́. այսինքն այբ
գիրն. որ է սկիզբն գրոց. ցուցանէ ըզ
սկիզբն ած̃աշունչ գրոցն որ ասէ. Իսկզ
բանէ արար ած̃ զերկինս եւ զերկիր. իսկ
գիրն. օ́. որ է վերջին գիրն ցուցանէ
զնր̃ աւետարանն, որ է վախճան հին օրէ
նացն զորմէ տրն̃ ասէ. Օրէնք. եւ մարգ
արէք մինչեւ ցյօհաննէս:

9. Ես յօհաննէս եղբայր ձեր. եւ մասնա
բն կից 'ի վիշտս եւ յարքայութեան. եւ համբե
րութեան 'ի ք̃ս յս̃. եղէ 'ի կղզին որ կոչի
պատմոս վասն բանին այ̃ եւ վկայութեան
յիսուսի:

մեկ Զի յօհաննէս վասն բանին այ̃. այսինքն
վասն քարոզութեանն սուրբ աւետարա
նին աքսորեցաւ 'ի պատմոս կղզին.

10. Եղէ ես յոգի յաւուրն կիրակէի. եւ
բն լուայ զկնի իմ զձայն մի մեծ իբրեւ զփո
ղոյ ասելով:

11. Զոր տեսանեսդ գրեա́ 'ի գիրս. եւ
բն առաքեա́ առ Է̃ եկեղեցիս որք են յասիայ.
յեփեսոս, 'ի զմիւռնեայ, 'ի պերգամոս.
'ի թիւատիր. 'ի սարդիկեայ. 'ի փիլադել
փեայ. եւ 'ի լաւոդիկեայ:

12. Եւ դարձայ 'ի տեսանել զձայնն որ բն
խօսէր ընդ իս. և 'ի դառնալն իմ տեսի
զէ ճրագարանս ոսկեայս։

Մեկ. Ձայնն ոչ տեսանի, այլ լսի. բայց մեկ
յաղագս հաւաստեայ գոլոյն ասէ. Տեսի
Եօթն ճրագարանքնեն է եկեղեցիքն,
առ յորս յօհաննէս գրէ. Մեկ. ճրա
գարանաց նմանեցուցանէ զէ եկեղեցիսն,
նախ զի եկեղեցին ոչ է ծածուկ. այլ
յայտնի է որպէս զլոյս ճրագի. Երկրորդ
զլոյսն աշխարհիս որ է Քս, և զվարդապետու
թիւն նր հանգոյն ճրագի աշխարհիս ցու
ցանէ. Եւս է ոսկեայ. նախ վասն սիրոյն
այ և մարդկան. զոր ոսկին ցուցանէ.
Երրորդ, զի հանգոյն ոսկւոյ կռանաւն
հալածանաց փորձեցաւ, լայնացաւ, և
տարածեցաւ.

13. Եւ 'ի մէջ ճրագարանացն նման որդ բն
ւոյ մարդոյ զգեցեալ զպճղնաւոր. և գօ
տեւորեալ առ ստեամբքն զգօտի ոսկեղէն.
Քրիստոս տէրն մեր կայ 'ի մէջ ճրագարա մեկ
նացն, այսինքն 'ի մէջ եկեղեցւոյն ըստ
խոստմանն իւրոյ որ ասաց. Ուր իցեն ժո
ղովեցեալք բ կամ գ յանուն իմ, անդ
եմ ես 'ի միջի նց. երկրորդ. առ 'ի լուսաւ
որել զխաւարեալսն միտս. գ առ 'ի հե
ղուլ զձէթ ողորմութեան իւրոյ 'ի վերայ
այնոցիկ, որք ցամաքեալք են տրտմութ.
Մեկ. ոչ միայն կայ Քս 'ի մէջ եկեղեցւոյ
անտեսանելեաւ ածութեամբ ըստ որում

 գտա

գտանի ա՟մ ուրեք, այլ և կայ յատկաւ ե-
զանակաւ 'ի միք տեսանելեաւ. այսինքն
'ի ձեռն մ՟ք մարմնոյ, և պատուական ա-
րեանն իւրոյ: Զգեցեալ է զպճղնաւոր
Պճղնաւորս այս է հանդերձ քահանայա
կան: Ի՟որդ. յօհաննէս կոչէ զք՟ս նման որ
դւոյ մարդոյ, այլ ոչ մարդ բաձարձակա
պէս, առ 'ի ցուցանել թէ, ոչ միայն էր
մարդ. այլ և որդի ա՟յ և ա՟ծ: Եւ ասէ
զգեցեալ զպճղնաւոր, առ 'ի ցուցանել
թէ էր քահանայ ըստ կարգին մելքիսե
դեկի: Գօտեւորեցեալ էր ոսկեաւ գօ
տեաւ; ոչ առ երիկամաւն հանգոյն այլոց
մարդկանց, այլ ստեամբն, առ 'ի ցուցա
նել թէ, ա՟ծայինն այն յ՟ս, ոչ ունէր ըզ
կարիս սանձելոյ զմարմնոյ ցանկութիւնն,
որ բնաւին ոչ գոյր 'ի նմին:

բն 14. Եւ գլուխ նորա, և հերքն էին սպի
տակք որպէս զասր և որպէս զձիւն:
Եւ աչք նորա որպէս զբոց հրոյ:

մեկ Ի՟որդ. սպիտակութիւնք գլխոյ և հերացն
ծնանի 'ի ծերութենէ, և 'ի հնութենէ
ժամանակին. Եւ ցուցանէ զք՟ս. որ թէ
պէտ ժամանակաւորէր ըստ մարդկութե՟ն,
սակայն. հին և անժամանակէր ըստ ա՟ծու
թեանն: Ի պակասութենէ բնական ջեր
մութեան ծերութիւն, և 'ի ծերութենէ
ծնանին խելք, բանականութիւնք և հան
ճարք, ապա ուրեմն պատճառն խելաց,
բանականութեան, և հանճարոյ է պակա

 սութիւն

նուԹիւնն բնական ջերմուԹեանն։ Այն
պէս և, յայնժամ ծնանի 'ի մարդս խելք-
բանականուԹիւն, և հանճար · յորժամ
պակասի 'ի մարդս ջերմուԹիւնն ցանկու-
Թեան և ախտից։ ՍպիտակուԹիւնն գլխ-
ոյն ցուցանէ զմաքրուԹիւնն բանականու-
Թեանն և կամաց։ Զի որպէս 'ի սպիտակ
գլխոյն ծնանին հերք սպիտակք, սապէս
և 'ի մաքուր բանականուԹենէ և կամաց
ծնանին հերք սպիտակ· այսինքն խորհր-
դք մաքուրք։ Սպիտակք որպէս զասր
ՍպիտակուԹիւնն ասեր գոլով միջակ, է
անվնաս աչաց· Այնպէս և տեսուԹ՟ին
քի ոչ միայն անվնասէր տեսողաց, այլ
մանաւանդ եմարգելի աննախանձք ոչ յագե-
նային հայելով 'ի նա։ Պարձեալ, ասրն գո-
լով կակուղ համակերպի ընդ մարմնոյն
զգեցողացն· Այնպէս և, ք՟ս զիջանէր
և համակերպէր զինքն ընդ տկարուԹեան
մարդկան։ Նա որպէս զձիւն) արդ, ձիւնն
ունի առաւել զսպիտակուԹիւն, և ցուցա-
նէ զանճառելի մաքրուԹիւնն քրիստոսի։
Ունի և զսաստիկ պաղուԹիւն, որ ցու-
ցանէ զյանդիմանական բանսն նորա որով
յանդիմանէր զդիպերս և զփարիսեցիսն
ասելով վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց։
Ա.չք Նորա 'ի բրև զբոց հրոյ) բոց հրոյն
չորս իրս առնէ· այսինքն, լուսաւորէ·
ջերմացուցանէ· երկեցուցանէ · և այրէ։
Ա.րդ, բոց հրոյեն աչքն քի, որով հայե-


լով

րով. յարգարուն. լուսաւորէ զնոսա իմաս
տութեամբ. ջերմացուցանէ ողորմութբ.
և ահացուցանէ զանզեղջս արդարութբ.
և այրէ զնոսա հրով գեհենոյն.

բն 15. Եւ ոտք նր նման պղձի ծխեցելոյ ՚ի
մէջ հընոցին. հրակէզ. և ձայն նորա որ
պէս զձայն ջուրց բազմաց.

մեկ Ոտք քի ցուցանեն զմր մարմինն. և զմարդ
կութիւնն նորա. Զի որպէս մեք ոտիւք
քայլեմք, սապէս և քս մարդկութբն եկն
յաշխարհ. Նմանին պղնձի ծխեցելոյ ՚ի բոց
հրոյ) Զի մարդկութիւնն նորա և մարմինն
տանջեցաւ ՚ի հնոցի խաչին և չարչարանացն.
Եւ ձայն նորա որպէս զձայն ջուրց բազ
մաց) Արդ. ձայնն քի է ածաշունչ
գիրքն, որ ասի նման ջուրց բազմաց. Զի
թէպէտ զզանազանս ունի զիմացուածս
ըստ նկարագրին, բայց սակայն. որպէս
բազումք անձրևոց ջուրք համաձայնեալք
հնչեն, այսպէս և նոյնք իմացուածք ած
աշնչին զքէ համաձայնեալք հնչեն. Եւ
և. թէպէտ բազումք վարդապետք բազ
մապատիկ բար. և զանազանապէս մեկնեն
սակայն զմիոջէ քէ խօսին.

բն 16. Եւ ունէր յաջ իւր զաստեղս եօթն
և ՚ի բերանոյ նորայ սուրերկսայրի սրեցեալ
ելանէր. և երես նորա ՚իբրև զարեգակ
Ճառագայթէր ՚իզօրութեան իւր.

մեկ Եօթեանք աստեղքն են եօթեանք հրեշ
տակքն. այսինքն եպիսկոպոսք եօթանց ե

 կեղեց

կեղեցեաց։ Արդ, աստեղք կոչին եպիսկո-
պոսքն, առ 'ի ցուցանել թէ։ որպէս աս-
տեղքն ներհեղուն զզօրութիւնս իւրեանց
'ի բոյսս և 'ի տունկս, սոյնպէս և եպիսկո-
պոսաց պարտէ զովացուցանել զհաւատա-
ցեալսն ներհեղլով 'ի նոսա զխրատս վար-
դապետականս։ Երկրորդ, որպէս աս-
տեղքն լուսաւորեն զստորնայինսն իւրեանց
սոյնպէս և պարտէ եպիսկոպոսաց լուսա-
ւորել բարեաւ օրինակաւ զժողովուրդն։
Երրորդ, որպէս մի միայն աստղն մեծա-
գոյնէ քան զբոլոր աշխարհս. սոյնպէս
պարտէ եպիսկոպոսին մեծագոյն լինիլ
սրբութեամբ. քան զամ աշխարհականսն.
Աստեղքս այսոքիկ կային յաջն Քի։ Որ
թէպէտ Քս պահպանէ զամ, սակայն յատ-
կաւ կերպիւ իւիք պահպանէ և կառավա-
րէ զվերակացուս եկեղեցեաց։ Սուր երկ-
սայրի յերկուց կողմանց յաջ և յահեակէ
սրեցեալն, ցուցանէ զվճիռն, որ յաւուրն
դատաստանին ելանելոց է 'ի բերանոյն Քսի
Արդ, յորժամ ասասցէ ցաջակողմեանս
Եկայք օրհնեալք հօր իմոյ. կտրեսցէ
յաւիտենական մահն յարդարոց. և մինչ
ասասցէ առ ձախակողմեանսն։ Երթայք
յինէն անիծեալք, հատցէ 'ի նոցանէ ըզ-
կեանս յաւիտենականս։ Եւ է լինելոց
այնքան մեծ բաժանումս այս, մինչ զի
ոչ երբէք. և ոչ իւիք կերպիւ միաւորիլ
կարեն։ Այս է օրն այն, զորմէ ած խօսե

 Արդ

լով յերկրորդ օրէնս ԼԲ գլխ. ասէ. Եթէ սրիցեմ զսուր իմ որպէս զփայլակն. և առցէ ձեռն իմ զդատաստան. հատուցից զվրէժ թշնամեաց իմոց. Երես նորա 'ի բրև զարեգակ ճառագայթէր։) Արդ, յաւուրն դատաստանին յորժամ ելցէ սուրն 'ի բերանոյն Քի առ 'ի զատել զարդարսն 'ի մեղաւորաց, յայնժամ ցուցցէ զարեգակնակերպ զերեսն իւր յարքայութեանն երկնից ըստ խոստմանց իւրոց, որ յառաջն ասացեալ նէր։ Որ սիրէ զիս, սիրեսցի 'ի Հօրէ իմմէ, և ես սիրեցից զնա, և յայտնեցից զիս նմա։ Յայնժամ կատարեսցի մարգարէութիւնն եսայեայ որ ասէ. Եւ եղիցի լոյսն լուսնի որպէս զլոյս արեգական. և լոյս արեգականն եղիցի եօթնապատկաբար որպէս եօթանց աւուրց, յաւուր յորում տէր պատեսցէ զվէրս ժողովրդեան իւրոյ. Արդ, լուսինն որպէս զարեգակն ճառագայթող, է մբ եկեղեցին. Օ ի սուրբ եկեղեցին յաւուրն այնմիկ նմանիցի Քի, որ է արեգակն արդարութեան, որպէս յօհաննէս ասէ. գիտեմք զի մինչ յայտնեսցի. նմանիք նմին եղիցուք, քանզի տեսցուք զնա որպիսի իսկէ։ Եւ արեգակն որ ունելոցէ զպայծառութիւն եօթեանց աւուրց, է նոյն ինքն Քս, զի որպէս արեգակս այս նիւթաւոր, Է անգամ պայծառ էր յաւուրն ստեղծագործութեան, քան թէ որ է այժմյս, սոյն

պէս և, Քս տէրն մեր, պայծառագոյն
է երևելոց մարմնով առ հայր զկնի կատա
րածի աշխարհիս, քան թէ որէր առ մեզ
աշխարհիս այսմիկ. վնյ աւուրսն չարչա
րանաց իւրոց աղօթաց առ հայր ասելով.
Եւ այժմ փառաւորեա զիս հայր առ 'ի
քէն փառօք, զոր ունէի յառաջ քան ըզ
լինելն աշխարհիս.
17. Եւ մինչ տեսի զնա, անկայ առ ոտս բն
նորա որպէս զմեռեալ. և եդ զաջ ձեռն
'ի վերայ իմ, ասելով. Մի՛ երկնչիր, ես
եմ առաջին. և յետինն.
Քրիստոս է՛ առաջինն ըստ ածութեն, մեկ
և յետինն է ըստ մարդկութեանն.
18. Եւ ես եմ կենանք, և ես եմ որ մեռայ, բն
և ահաւասիկ կենդանի եմ, յաւիտեանս յա
ւիտենից, և ունիմ զփականս մահու և
կենաց.
Փականս այս է կարողութիւնն Քի. զի մեկ
զնախաստահմանեցեալսն ազատէ 'ի բան
տից դատապարտութեան ըստ ողորմու
թեանն. իսկ ներփակէ զդատապարտեց
եալս 'ի բանտն դժոխոց, ըստ մեծի ար
դարութեան իւրոյ.
19. Գրեա՛ ուրեմն, զոր տեսերդ, և որք բն
են, և որք պարտին լինել յետ այսորիկ.
20. Խորհուրդն եօթեանց աստեղացն բն
զորս տեսեր յաջ իմ, և եօթն ճրագարանսն
ոսկեայս. եօթեանք աստեղքն եօթեանք
հրեշտակքն եօթեանց եկեղեցեացն, և

Ճրագարանք եօթեանք, է եկեղեցիքն են։

## Գլուխ երկրորդ։

բն 1. Եւ Հրեշտակին եփեսոսի գրեա՛։ Այս ասէ որ ունի զեօթն աստեղս յաջ իւր որ շրջի ՚ի մէջ է ճրագարանաց ոսկեղինաց։

բն 2. Գիտեմ զգործս քո, եւ զաշխատանսդ, եւ զհամբերութիւնն քո։ եւ քանզի ոչ կարես տանել զչարսն, եւ փորձեցեր զնոսա, որք զինքեանս ասեն զառաքեալս գոլ, եւ ոչ են, եւ գտեր զնոսա սուտս։

մեկ Հրեշտակս այս է եպիսկոպոսն եփեսոսի, այսինքն մեծն տիմոթէոս այր մի եւ ընտիր։

3. Եւ զհամբերութիւն ունիս, եւ համ
բն բերեցեր վասն անուան իմոյ եւ ոչ պակասեցար։

բն 4. Այլ ունիմ ընդդէմ քեզ, զի զսէրն առաջին թողեր։

մեկ Ոչ ասէ թէ ամենեւին ոչ ունիս զսէր, այլ թէ, զառաջին սէրն ոչ ունիս։ այս ինքն, զառաջին ջերմեռանդութիւնն։ Եւ այսու ծանուցեալ լինի տկարութիւն մարդկային բնութեանն։ զի բազմիցս եւս մեծամեծք ոմք, եւ որք կատարեալք կարեն թուլանալ ինախնկնոյ ջերմեռանդութենէ։ Թէպէտ այր կատարեալ էր սուրբն տիմոթէոս, սակայն վասն թուլա



նալոյ

նալոյ իւրոյ յանդիմանի, զի կատարելոց
արանց ոչ է բաւական ոչ գործել զմահա
ցու մեղս, այլ և պարտին հրաբորբոքք սի
րով մինչ յառաջանալ 'ի բարիս։

5. Յիշեա ուստի անկար, և ապաշխարեա Բն
և զառաջին գործսն գործեա, ապա թէ
ոչ, գամ առ քեզ, և շարժեցից զճրագա
րանն քո 'ի տեղւոջէ իւրմէ եթէ ոչ ա-
պաշխարեսցես։

Շարժեցից զճրագարանն քո. այսինքն Մեկ
բարձից 'ի քէն զեկեղեցին քո, զի մի՛ ևս
իցես դու գլուխ և եպիսկոպոս եկեղեցա-
ւոյն քոյ, և տացից զնա այլում եպիսկոպոսի։

6. Բայց զայս ունիս, զի ատեցեր զգործ Բն
սն Նիկողայոսացւոց զորս և ես ատեցի։

Գործն Նիկողայոսականաց էր, զի թոյլ Մեկ
տային պոռնկել, և ուտել զզոհեցելոցն
կռոց։

7. Որ ունի զականջս լսելոյ, լուիցէ, զինչ Բն
ասէ Հոգին առ եկեղեցիսն։ Որ յաղթէ,
տաց նմա ուտել 'ի փայտէն կենաց, որ
կայ 'ի դրախտին Այ իմոյ։

Արդ, երկուք էին փայտք 'ի դրախտին, Մեկ
որոց մինն փայտ կենաց, և միւսն փայտ
գիտելոյ զչարն և զբարին անուն իւր։
Որ ոք ուտէր 'ի փայտէն կենաց ոչ մեռա
նէր յաւիտեան։ Իսկ որ ուտէր զփայտէն
գիտութեան չարի և բարւոյ, թէ ևս ան
մահ իցէր ուտողն այն, սակայն մեռանէր
յաւիտենականաւ մահուամբ։ Արդ, դրա



խտնէ

խանէ եկեղեցին․ և ծառն կենաց 'ի մէջ
դրախտին է՝ Ք՟ս 'ի մէջ եկեղեցւոյն։ Իսկ
ծառն գիտութեան չարի և բարւոյ ի մէջ
դրախտին, այսինքն 'ի մէջ եկեղեցւոյն․ է՛
սատանայ․ զի և նա շրջի 'ի մէջ հաւա
տացելոց ոպ՟ ասէ պետրոս։ Ոսոխն ձեր սատա
նայ որպէս զառիւծ մռնչէ, շրջի և խնդ
րէ, թէ զո՞ կլանիցէ։ Արդ, զփայտն կե
նաց, այսինքն զՔ՟ս ուտողքն կենդանանան և
ծնան անմահականք։ Իսկ որք ուտեն զփայտն
գիտութ՟ե չարի, և բարւոյ, որ է սատա
նայն, յաւիտենականապէս մեռանին․ նա
ուտէ զՔ՟ս որ կամացն Ք՟ս հետևի։ Եւ
նա ուտէ զսատանայ, որ ցանկութեամբ
մարմնոյ, և կամաւն սատանայի հեշտանայ։
Եւ որպէս նախկնոյ կնոջն առաւել հա
ճոյ թուեցաւ փայտն գիտութեան չարի
և բարւոյ, քան թէ փայտն կենաց․ սոյնպ՟
ևս, առաւել հաճոյք թուին մեղաւորացն
փառք և հեշտութիւնք աշխարհիս այ
սորիկ, որք միայն մարմնաւորօք աչօք տե
սանեն․ քան թէ փառքն երկնից արքայ
ութեանն որ հոգւոյ աչօք միայն տեսա
նեն։ Օ այս փայտս կենաց․ Ք՟ս միայն յաղ
թողացն խոստանայ, և նա յաղթէ, որ 'ի
գործս բարիս մինչև 'ի մահ յարատևէ․
զի Ք՟ս ոչ զսկսողս միայն, այլ զյարատևող
սն պսակէ ըստ այնմ, թէ որ համբերես
ցէ իսպառ, նա կեցցէ։

բն 8․ Ու հրեշտակն զմիւռնոյ եկեղեցւոյն



գրեա՛

գրեամ։ Զայս ասէ նախկին և յետինն․
որ մեռաւ և կեայ․

9․ Գիտեմ զնեղութիւնս քո, և զաղքա բն
տութիւնն, բայց հարուստ ես․ և հայհոյիս
՚ի նոցանէ, որք զինքեանս ասեն գոլ հրէ
այս, և ոչ են․ Այլ են ժողովուրդ սա
տանայի․

Եպիսկոպոս այս մարմնաւորօք ընչիւք․ մեկ
աղքատէր, բայց հարուստէր հոգևորօք
առաքինութեմք․ Սնկ ասէ, հարուստես․
10․ Մի երկնչիր յայնցանէ զորս կրելոց բն
ես․ Ահա սատանայն առաքելոց է զոմանս
՚ի ձէնջ՚ի բանտ զի փորձիցիք, և ունիցիք
զվիշտս աւուրս տասն․ Լեր հաւատա
րիմ մինչև ՚ի մահ․ և տաց քեզ զպսակ կե
նաց․

Բանտն ցուցանէ հասարակաբար զնմ նե մեկ
ղութիւնս զորս կրեցին և կրելոց էին
նոքա մարտիրոսքն․ և նոյն նշն Պօղիկար
պոս որէր եպսկս զմիւռինաքաղաքին։ Ունիցիք
զնեղութին զաւուրս տասն) Արդ առ ՚ի բա
ցայայտել զայս տասնեակ թիւս․ բազումք
բազմապատկաբար մեկնեցին, և առ ՚ի յի
մանալ զստոյգն, մանաւանդ քրտամբ, քան
թէ մելանաւ թացին զգրիչս իւրեանց․
Բայց ստոյգն այսէ որ, այս տասնեակ
թիւս զբազումս ցուցանէ, ըստ սովորու
թեան ածաշունչ գրոց, ուր տաս թիւն
փոխանակ բազմաց առնանի․ որպէս յայտէ
՚ի Ղև գ֊ գլուխն ծննդոց, ուր յակոբ ցլա

քան աներն իւր ասաց. փոխեցեր զվարձս
իմ տասն անգամ. այսինքն բազում անգամ:
Առաջին Թագաւորաց առաջին գլուխն
հայրն սամուէլի ցկինն իւր ասաց. Ոչ ա-
պաքէն լաւագոյն եմ ես քան զտասն որ
դիսն, այսինքն քան զբազում որդիս.
Յոբ յառաջին գլուխն ասէ. Տասն ան
գամ նախատեցէք զիս, այսինքն բազմիցս
նախատեցէք զիս. Այսպէս ես աստ ասե
լով: Ունիցիք նեղութիւնս աւուրս տասն
կամի ասել թէ. Աւուրս բազումս:

բն 11. Որ ունի ականջ լսելոյ լուիցէ, զինչ
հոգին ասէ առ եկեղեցիսն. Որ յաղթես
ցէ, ոչ վնասեսցի 'ի յերկրորդ մահուանէ

մեկ Երկրորդ մահըն է մահըն յաւիտենական,
այսինքն դատապարտութեան 'ի դժոխս:
Մահըն դժոխոց կոչի մահ երկրորդ հա
մեմատելով 'ի մահն մարմնոյն. Զի դժո
խայինքն նախ մարմնով աստ մեռանին,
ապա թէ անդ 'ի դժոխս հոգւով մեռա
նին. Զայսմանէ խօսելով տէրն ասէ. Մի
երկնչիք յայնցանէ, որք սպանանեն զմար
մին, զի հոգին ոչ կարեն սպանանել, այլ
մանաւանդ երկերուք յայնմանէ, որ կարէ
զհոգին և զմարմինն կորուսանել 'ի գեհեան

բն 12. Եւ առ հրեշտակն պերգամոյ գրեա.
Զայս ասէ, որ ունի զսուրերկսայրին յեր
կուց կողմանց սրեցեալ:

մեկ Հրեշտակն, կամ եպիսկոպոսն գաւառիս
էր նըն կարպոս. Իսկ զսուրերկսայրւոյն

խօսեցաք 'ի ձիգ թիւն առաջնոյ գլխոյն։
13․ Գիտեմ թէ ուր բնակիս, ուր աթոռ բն
նէ սատանայի․ Ունիս զանուն իմ, և ոչ
ուրացար զհաւատսն իմ յաւուրս որս Անթի
պաս վկայն իմ հաւատարիմ եղև․ որ սպա
նաւ 'ի ձէնջ, ուր սատանայն բնակէ։
Անդ բնակէր եպիսկոպոսս այս, ուր ա- մեկ
թոռն սատանայինէր․ Զի 'ի գաւառն
պերկամոյ սատանայն թագաւորէր 'ի ձեռն
հեթանոսական կռապաշտութեան և ա-
ղանդոյն նիկողայոսացւոյ․ մեծ գաւառս
այս առաւել քան զայլ գաւառսն հալա
ծէր զքրիստոնեայսն․ Գովէ Քս զեպիս
կոպոսս այս․ զի յաւուրսն այնոսիկ․ յորս
Անտիպաս մարտիրոսացաւ վասն անուանն
Քի, եպիսկոպոսս այս ոչ ուրացաւ զհա
ւատն Քի մն ահելն հեթանոսաց, որպէս
ուրացան ոմանք։
14․ Այլ ունիմ ընդդէմ քո սակաւ, զի բն
ունիս անդ զոմանս որք ունին զվարդապե
տութիւնն բաղաամայ, որ ուսուցանէր բա
ղակայ դնել գայթագղութիւն առաջի
որդւոցն իսրայելի ուտել և պոռնկել։
Արդ, եթէ բաղաամ որպէս ուսոյց իս
րայելացւոց զպոռնկութիւն և զուտելն 'ի մեկ
զոհեցելոց, կարես ընթեռնուլ զքսան և
Ե գլուխն թւոց․ Այնպէս և աղանդ նի
կողայոսականաց ոչ խտրէր 'ի պոռնկու
թենէ, և յուտելոյ զզոհեցեալ միս կռոցն։
Եւ թէպէտ ուտելն զոհեցելոց ըստ ին

 քեան

'քեան ոչ էր մեղք, սակայն արգելեցին առաքեալքն զուտելն, առ 'ի բառնալ զգայթագղութիւնն. Որպէս և բարւոք գիտէր առաքեալն պօղոս զի ոչ էր մեղք ուտելն զմիս, սակայն ասաց. Եթէ եղբայրն իմ գայթագղեսցի, զմիս ոչ կերից յաւիտեան.

բն 15. Որպէս ունիս և դու որք ունին զվարդապետութիւնն Նիկողայոսականաց.

բն 16. Նմանապէս ապաշխարեա, ապա թէ ոչ, եկից առ քեզ շուտով, և պատերազմեցայց ընդ նոսա սրով բերանոյ իմոյ.

մեկ Նմանապէս. այսինքն որպէս ասացի ցզմիւռնոյ եպիսկոպոսն զի ապաշխարեսցէ. նմանապէս ասեմ քեզ ապաշխարեա, ապա թէ ոչ, պատժեցից զնոսա, և զքեզ, եթէ ոչ արգելուցես նոցա, զի ապաշխարեսցեն. (Պատերազմեցայց Սրովն բերանոյ) այսինքնս ուր երկսայրեայ յԲ կողմանց սրեցելով. այսինքն մահուամբ մարմնոյ և հոգւոյ.

բն 17. Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ. զինչ հոգին ասէ առ եկեղեցիսն. Որ յաղթեսցէ տաց նմա զմանանայն թագուցեալ և տաց նմա զկարկեհան սպիտակ. և ի կարկեհանում զանուն նոր գրած, զոր ոչ ոք գիտէ եթէ ոչ նա, որ առնու.

մեկ Մանանայն է սբ մարմինն Քի յորում թաքուցեալ կայ ածութիւնն բանին. կարկեհանն է քար մի որ ոչ միայն լուսատու է 'ի տունջեան, այլ և 'ի գիշերի. ցուցանէ զա

 ւեռարակէն

ւծատարական վարդապետութիւնն, որ լու
սաւորեաց զխաւար կռապաշտութեան.
'իսմին կայ գրած անուն Ն. Ր. Անուանս այս
է. Յ͞ս, որ 'ի հրեշտակէն նորապէս կոչե
ցաւ. Զանուանս այս ոչ ոք գիտէ. եթէ
ոչ նա որ առնու. Ո՛չ գիտաց արիոս, և
ոչ այլք անհաւատք գիտացին թէ զինչ է
յ͞ս, զի ոչ առին և ընդունեցին զնա որպէս
զա͞ծ, այլ որպէս զլոկ մարդ միայն. Այլ
քրիստոնեայքն գիտեն թէ զինչ է յ͞ս ա-
նուն որ թարգմանի. փրկիչ. զի քրիստո
նեայքն առին զնա 'ի վերայ իւրեանց ըն
մկրտութեան, և ս առնուն միշտ 'ի խորհր
դում պատարագին. Արդ, քան զի 'ի
հնում ժամանակի. որք յաղթողք յասպա
րիզի գտանէին, առնուին 'ի վարձ յաղ
թութեան զկարկեհան քարն. Ո͞նկ ք͞ն
տ͞րն մեր անուամբ կարկեհանին խոստա
նայ զինքն ոչ միայն եպիսկոպոսին պերգա
մոյ, այլ և համայնից այնոցիկ, որք յասպա
րիզի աշխարհիս այսորիկ ընդդէմ ցանկու
թեան մարմնոյ, հեշտութեան աշխարհիս
և փորձութեան սատանայի յաղթողք գտա
նին. Այս է խոստումն այն. վ͞նյ ս͞բն անդ-
րէաս առաքեալն ոչ միայն ոչ երկեաւ 'ի
խաչէն, այլ մեծաւ սիրով գրկեաց զնա.
Այս է վարձն այն, վ͞նյ սրբոյն լորենցիո
սի հրակեզ երկաթեայ տապակն, որպէս
ծաղկաւէտ անկողին երևէր. Այս է խոս
տումն այն. վ͞նյ ս͞բ. յօհաննէս առաքեալն


զձիթալից

զձիթալից կանթեղն հրացեալ, որպէս ըզ վարդէջրեայ բաղանիս համարէր։ Այսէ խոստումն այն, վ՜յ ո՛րն ստեփաննոս նախավկային զքարինս, և ո՛րն սեբաստիանոս ըզ երկաթեայս սլաքսն որպէս զվարդս և ըզ մանուշակս ընկալան։ Ադէ ուրեմն ո՛վ հոգի իմ համբարձ զաչս քո յերկինս առ վարձն քո յ՟ս, և աստ ցնա լալով։ Ծարաւ է անձն իմ առ քեզ յ՟ս, յե՞րբ արդեօք եկեալ երևեցայց առաջի երեսաց քոց։ Տ՟ր յ՟ս, հան 'ի բանտէ մարմնոյս և աշխարհիս զանձն իմ։ զի քեզ սպասէ խեղճ հոգի իմ մինչև հատուցես նմա։ Ո՛վ քաղցր տ՟ր յ՟ս, յե՞րբ տեսից զքեզ։ յե՞րբ երևեցայց առաջի երեսաց քոց։ յե՞րբ յագեցայց գեղեցկութեամբ քո՛վ։ յե՞րբ հանցես 'ի խաւարայնոյ բանտէ զանձն իմ։ յե՞րբ մտից յայն զարմանալի և գեղեցիկ տունն քո։ ուրձայն խնդութեան, և ալէլուեան ցընծութեան յարահընչի յարաժամ։ Երանի որք բնակեն 'ի տան քո տ՟ր, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։ Ո՜հ թէ որքան զարմանալի է, ո՜հ թէ որքան գեղեցիկ է։ ո՜հ թէ որքան ընդունելի է տեղին բնակութեան տան քո, տէր զօրութեան, ցանկայ մտանել անդր մեղաւոր հոգի իմ։ Տ՟ր յ՟ս, սիրեցի զվայելչութիւն տան քոյ։ Առ ուրեմն զհոգի իմ, և ընկալ և հովուեա զնա ըստ կամաց քոց։ որպէս զի քև առաջնորդաւ ելցէ առ այն երկիրն

փափկութեան, յորում հովուեսցէ զնոսա
էր․ զի անդ եւս օրհնեցից զքեզ յաւիտ
եանս յաւիտենից․ Ամէն։
18․ Եւ առ եկեղեցին Թիւատիրայ գրեա բն
Զայս ասէ որդին այ, որ ունի զաչս որպէս
զբոց հրոյ, եւ ոտք նորա որպէս պղնձի
ծխեցելոյ) Զայսմանէ արդէն խօսեցաք
'ի վերոյ։
19․ Գիտեմ զգործս քո, եւ զհաւատն, եւ բն
զսէրն քո, եւ զպաշտօնն․ եւ զհամբերութիւն
քո․ եւ զգործս քո վերջին, որք բազմա
գոյնք են քան զառաջինսն։
20․ Այլ ունիմ ընդդէմ քեզ զսակաւ․ զի բն
թոյլ տաս եզաբէլ կնոջն, որ զինքն մար
գարէուհի դոյ ասէ, ուսուցանէ, եւ մո
լորեցուցանէ զծառայսն իմ, պոռնկել․ եւ
ուտել զզոհեցելոց․
Եզաբէլս այսէ դուստր Թագաւորին մէկ
տիւրոսի․ եւ կինն աքաբու Թագաւորին,
որ 'ի տիւրոսէ զբաաղ․ եւ զբաաղացիսն
եհան 'ի հրէաստան, եւ հալածեաց զեղիա,
եւ զայլ ածապաշտսն։ Արդ, աստ յոհան
նէս ոչ խօսի զայսմանէ եզաբելայ, այս
ինքն զկնոջէն աքաբու, այլ զայլ ումեքէ
կնոջէ, եզաբէլ կոչեցելոյ․ Կինս այս ե
զաբէլ էր հարուստ յոյժ, եւ զինքն մար
գարէուհի ձեւացուցանէր, եւ որպէս առա
ջին եզաբէլն բազումս 'ի յածապաշտիցն
ածէր 'ի կռապաշտութիւն, սոյնպէս եւ
այս նոր եզաբէլս, զբազումս յաշակեր


տացն

տացն քրիստոսի, ածէր յաղանդն Նիկողայոսացւոցն.

բն 21. Եւ ետու նոցա ժամանակ ապաշխարել. զպոռնկութիւնն իւրեանց. եւ ոչ ապաշխարեցին.

բն 22. Ահաւասիկ արկանեմ ես զնա 'ի հնոցն եւ զգործակիցս իւր ընդ որ շնացաւ. 'ի նեղութիւնս մեծամեծս եղիցին, եթէ ոչ ապաշխարեսցեն 'ի գործոց իւրեանց.

բն 23. Եւ զորդիս նոցա սպանցեմ մահուամբ, եւ գիտասցեն ա͞մ եկեղեցիք թէ ես եմ քննօղ երիկամանց եւ սրտից, եւ տաց իւրաքանչիւր ումեք ձերոց ըստ գործոց իւրոց.

բն 24. Բայց ձեզ ասեմ եւ այլոց որք 'ի Թիւատիրէք, որ ոչ ունիք զվարդապետութիւս այս, եւ որք ոչ ծանեան զխորհրդութիւնն սատանայի. որպէս ասեն ոչ առաքեցից 'ի

մեկ վերայ ձեր զայլ ծանրութիւն.) Որք ոչ ունիք զվարդապետութիւնս այս. այսինքն եզաբելի եւ սուտ առաքելոցն. Եւ ոչ ծանեան զխորհրդութիւնն սատանայի. այսինքն, որք ոչ հաւանեցան խրատուցն էբիոնի եւ կերինթոսի, որք որպէս զսատանայ բարձրամտեալք քարոզեցին ընդդէմ քրիստոսի եւ ուրացան զա͞ծութիւնն նր͞. Որպէս ասեն. այսինքն սուտ առաքեալքն ասեն թէ համանգամայն ընդ օրէնսին ք͞ի պարտէ պահել եւ զօրէնսն մովսէսի, բայց մի' հաւատայք նոցա, զի ոչ առաքեցից 'ի



վերայ

վերայ ձեր զմովսիսական օրէնն՝ որ յոյժ
ծանր է. այլ բաւական է պահել ձեզ զօ
րէնն իմ որ է թեթեւ եւ քաղցր.
25. Սակայն զայդ զոր ունիք պահեցէք բն
մինչեւ եկից.
26. Որ յաղթեսցէ եւ պահեսցէ մինչեւ
ցվախճան զգործս իմ, տաց նմա զկարողու բն
թիւն 'ի վերայ ազգաց,) Որ յաղթեսցէ մեկ
սատանայի, մարմնոյ եւ աշխարհի մինչեւ
ցմահ, յաւուրն դատաստանին տացէ նմա
Քս զկարողութիւն դատելոյ զամբարիշտ
ազգս.
27. Եւ հովուեսցէ զնոսա գաւազանաւ բն
երկաթեաւ.) Փայտեայ գաւազանն շուտ մեկ
ով բեկանի, իսկ գաւազանն երկաթեայ
երկարօրէն մնայ. ցուցանէ թէ դատա
պարտութիւնն ամբարշտաց յաւիտենական
մնալոց:
28. Որպէս եւ ես առի 'ի հօրէ իմմէ, եւ բն
տաց նմա զաստղն առաւօտեան:) Աստղն մեկ
առաւօտեան է տէրն մեր յս քս. Զայսմա
նէ խօսելով յոբ լը գլ. ասէ. Ո՛չ ապա
քէն հանես զարուսեակն 'ի ժամանակի
իւրում. Արդ, յայնժամ եհան հայրն երկ
նաւոր զքս 'ի ժամանակի իւրում, յորժամ
եկն լրութիւն ժամանակի առաքեաց ած
զորդի իւր ծնեալ 'ի կնոջէ. եղեալ
ընդ օրինօք, զի զնոսա որք ընդ օրինօք
նէին փրկեսցէ. Որպէս զարուսեակ աստղ
երեւեցաւ որդին այ. զի որպէս արուսեակ



աստղն

աստղն փախուցանէ զխաւար գիշերոյն, սոյնպէս քո հալածեաց զխաւարն մեղաց և մոլորութեանց։ Եւ որպէս սաստղն առաւօտեան աւետիս բերէ մեզ ՚ի ծագմանէ արեգականն, սոյնպէս և քո յարութեամբ իւրով որպէս կարապետ զաւետիս ետ մեզ յարութեան մարմնոց մերոց որք կատարածի աշխարհիս որպէս զարեգակ պայծառասցեն, որպէս տէրն ասէ Յայնժամ ծագեսցեն արդարքն որպէս զարեգակն։

29. Որ ունի ականջս լուիցէ զինչ հոգին ասէ առ եկեղեցիսն։

բն

## Գլուխ Երրորդ։

1. Եւ առ հրեշտակն սարդիկեցւոց գրեա։ Այս ասէ որ ունի զէ հոգիս այ, և զէ աստեղս․ գիտեմ զգործս քո․ (զի զանուն կենդանոյ ունիս և մեռեալ ես։) Հրեշտակնէ եպիսկոպոսն սարդիկեցւոց, և եպիսկոպոսս այս կոչիւր մելիտոն, բայց ոչ սրբն մելիտոն, այլ այլ օմն մելիտոն կոչեցեալ։

բն

ձկ

Եօթն հոգիքն են է եպիսկոպոսունքն, և է աստեղքն են է եկեղեցիք ասիայ․ Գիտեմ զգործս քո) այսինքն ես որ քննեմ զսիրտս և զերիկամունս ծանեայ զգործս քո ոչ միայն արտաքինս, այլ և զխորհուրդ սրտիդ։ Դու թէպէտ զանուն կենդան



ւոյ

ւոյ ունիս, այսինքն թէպէտ յաչս մարդ-
կան մէջ երևիս, սակայն ես յորմէ ոչ ինչ
գաղտի կայ, տեսանեմ զի մեռեալ ես
հոգւով։

2. Լեր արթուն և հաստատեա զայլս, որք բն
մեռանելոցք էին. զի ոչ գտանեմ զգործս
քո լիակատար առաջի այ իմոյ։) Արթնա- մեկ
ցի՛ր 'ի քնոյ մեղաց և ձանձրացեալ զպակասու-
թիւնն քո։ Ամաչի՛ր յանուանէ քումմէ,
զի հրեշտակ կոչիս և գործդ սատանայի է.
Ո՛չ գտանեմ լի զգործ քո) այսինքն ոչ են
կատարեալք գործք քո։ Զի նմանես ծա-
ռի միոյ որ զծաղիկ ունի և ոչ զպտուղ.
այնպէս ևս դու զնմանութիւն միայն ու-
նիս առաքինւոյ եպիսկոպոսի, բայց ոչ ու-
նիս զգործ բարի։ Հաստատեա զայլս,
որք մեռանելոցք էին) այսինքն զարթիր
և ժրացիր 'ի գործս բարիս, և բարի օրի-
նակ տալով շինեա զնոսա, որոց չար օրի-
նակ տալով պատճառ հոգևոր մահուան
եղեր։

3. Յիշեա ուրեմն թէ որպէս առեր. և բն
լուար, և պահեա և ապաշխարեա. ապա
ուրեմն եթէ ոչ հսկեսցես եկից առ քեզ
որպէս զգող, և ոչ գիտասցես յորում ժա-
մու եկից առ քեզ։) Յիշեա թէ զորպիսի մեկ
խրատս յինէն առեր և լուար. Եկից առ
քեզ որպէս զգող.) այսինքն ապա եթէ ոչ
զարթիցես 'ի մեղաց քնոյդ գայցեմ առ
քեզ յանկարծ։ Զի որ քնի 'ի մեղաց քունն

ոչ կամի ապաշխարել եթէ ոչ յետին օրն
կենաց իւրոց. վնկ ասա սպառնայ Քս Ե-
պիսկոպոսիս ասէ. դու որ խորհիս ա-
պաշխարել յետին աւուրն կենացդ. ոչ գի-
տես զի յանկարծ որպէս գող եկից առ
քեզ և կորուսից զհոգի և զմարմինդ.
Դու որ այժմ կարես և ոչ կամիս ապաշ
խարել, եկեսցէ ժամանակ, յորում կամի
ցիս և ոչ կարասցես ապաշխարել:

4. Այլ ունիս սակաւ անուանս 'ի Սարդի-
բն կեայ, որք ոչ աղտեղեցին զզգեստս իւր-
եանց. և շրջեսցին ընդ իս 'ի սպիտակս զի
մէկ արժանիքեն:) Աստ անունն ցուցանէ զքրս
և զանուանի այրս, զորս Ած զանուանէ կո
չէ. այսպէս ասաց Ած Մովսէսի: Յանուա
նէ քումմէ ճանաչեցի զքեզ: Եւս Քս
զոչխարս իւր զանուանէ կոչեսցէ: Սա
կաւք անուանք, այսինքն արք սակաւք կայ
ին 'ի Սարդիկեայ. որք զհանդերձս իւր
եանց, այսինքն զանմեղութիւն 'ի մկրտու
թեանն ընկալեալք ոչ ապականեցին:
Եւ շրջեսցին 'ի սպիտակս. այսինքն 'ի մա
քուր շնորհսն աստուածոյ ոտ̃ եսայի ասէ:
Ցնծալով ցնծացայց 'ի տր. զի զգեցոյց
ինձ զհանդերձ փրկութեան:

բն 5. Որ յաղթեսցէ. այսպէս զգեստաւո
րեսցի սպիտակ զգեստուք, և ոչ ջնջեցից
զանուն նորա 'ի գրոյն կենաց և խոստովա
նեցայց զանուն նորա առաջի հօր իմոյ.
և առաջի հրեշտակաց նորա:

6. Որ ունի ականջս լուիցէ զինչ Հոգին բն
ասէ առ եկեղեցիս։
7. Եւ առ եկեղեցին հրեշտակին եղբա
րաւիրաց եկեղեցւոյ գրեա՛։ Ա՛յս ասէ
սբ̃ն և ճշմարիտն՝ որ ունի զբանալին դաւ
թի. որ բանայ՝ և ոչ ոք փակէ, փակէ և
ոչ ոք բանայ՝։

Փականն և բանալին դաւթի է մարդկու մեկ
թիւնն ք̃ի՝ զոր էառ յազգէն դաւթի.
Բանալի ասի՝ զի 'ի ձեռն մարդկութեանն
ք̃ի բացաւ ա̃մ. զոր ինչ ա̃ծ խոստացեալ էր
ցդաւիթ. և զոր ինչ դաւիթ մարգարէա
կան հոգւով խոստացաւ զմարդկութենէն
ք̃ի։ Նա եբաց զա̃մ խորհուրդս որք 'ի
հին կտակարանոջ ծածկեցեալ էին և փա
կեցեալ. և զայնս ոչ ոք կարէ փակել։
Փակեաց զդուռն լիմպոսին. և ը՛զ նոյնն
ո՛չ ոք կարէ բանալ։ Եբաց զդուռն երկ
նից արքայութեանն՝ և ոչ ոք կարէ փա
կել. փակեաց զդուռն արքայութեանն
ընդ դէմ անարժանից՝ և ո՛չ ոք կարէ բա
նալ։

8. Գիտեմ զգործս քո՝ ահա՛ ետու առա բն
ջի քո զդուռն բացեալ զոր ոչ ոք կար է
փակել։ զի ունիս զսակաւ զօրութիւնս,
և պահեցեր զբանն իմ. և ո՛չ ուրացար զա
նուն իմ.

Այսինքն՝ քան զի վասն խոնարհութեան մեկ
քո զքեզ փոքր և ո՛չ ինչ համարիս։ Վասն
որոյ զա̃մ յոյս քո 'ի յիս զետեղես. Վասն

այսորինակ տայ քեզ զդուռն բացեալ։ Ա.յի-
նքն՝ զիմաստութիւն՝ որով ոչ միայն զՀե-
թանոսս՝ այլ և զՀրէայս ածցես յեկեղեցի
իմ։ Ըստ այն այսորինակ 'ի հետագայ թիւն
ասէ։ Ա.հաւասիկ տայ 'ի ժողովուն սատա-
նայի որք զինքեանս ասեն գոլ Հրէայս՝
և ոչ են։

բն 9. Ա.հաւասիկ տաց 'ի ժողովոյն սատա-
նայի՝ որք ասեն զինքեանս գոլ Հրէայս՝
և ոչ են՝ այլ ստեն։ Ա.հաւասիկ արարից
զնոսա զի եկեսցեն և երկիրպագցեն առա-
ջի ոտից քոց՝ և գիտասցեն զի ես սիրեցի
զքեզ։

մեկ Տացից 'ի ժողովոյն սատանայի։ Ա.յինքն
ըզ Հրէայս՝ որք ասեն թէ 'ի ժողովոյն
այ են, բայց ոչ են, այլ 'ի ժողովոյն սատա-
նայի են։ զի հակառակ կան ընդ դէմ քի
և հալածեն զքրիստոնեայսն՝ զայսոսիկ տա-
ցից քեզ 'ի ծառայս՝ զի դարձցին առ քս
և զղջացեալք յառաջնոյ մոլորութենէ եր-
կիրպագցեն։ Ա.յինքն՝ անկեալք յոտս քո
մեղայ ասիցեն և թողութիւն խնդրեսցեն
'ի քէն։

բն 10. Վ.ան զի պահեցեր զբանն համբե-
րութեան իմոյ. և ես պահեցից զքեզ 'ի
ժամէ փորձութեան որ գալոց է 'ի տիե-
զերս ամ, 'ի փորձել զբնակիչս երկրի։

մեկ Ա.յինքն՝ զի դու պահեցեր զբանն իմ
որով զքեզ խրատեցի՝ զի համբերութե
և երկայնմտութեամբ տանիցէիր զամ հա-



լածանս

լածանս և զնեղութիւնս: Պահեսցից և զքեզ ՚ի ժամու փորձութեան: Այսինքն՝ ՚ի ժամանակի յայնմիկ յորում տրայիանոս կայսրն հալածեսցէ զհաւատացեալս: Զհալածանն տրայիանու եղև յոյժ սաստիկ և համարակ՝ որ որպէս ըզ հուր բորբոքիլ սկսաւ՝ բայց յոյժ կարճ մնաց:

11. Ահաւասիկ գամ վաղվաղակի կալ զոր ունիս՝ զի մի ոք առցէ զպսակն քո: — բն

Որդ՝ ընթերցեր զպատմութիւնն: ի խ: մանկանցն սեբաստիոյ, ուր բարւոք կարես իմանալ թէ որպէս ոք կարէ զպսակ այլոց առնուլ: — մեկն

12. Որ յաղթեսցէ արարից զնա սիւն ՚ի տաճարի այ իմոյ. և ոչ ևս ելցէ արտաքս. և գրեցից ՚ի վերայ նորա զանուն այ իմոյ. և զանուն քաղաքին այ իմոյ նոր երուսաղէմայ. որ իջանէ յերկնից յայ իմմէ. և զանուն իմ նոր: — բն

Որդ՝ քան զի եպիսկոպոսս այս լոնարհէր՝ զինքն տկար համարէր. և ապաւէնն իւր զած առնէր. Վասն այսորիկ տէր զնա որպէս զսիւն հաստատուն կամի առնել. եթէ մնասցէ միշտ ՚ի խոնարհութեան իւրում: Այսպիսի սիւն եղև յայ երեմիաս. որ ասաց տր: Ես տուր զքեզ ՚ի քաղաք ամուր. և ՚ի սիւն երկաթի. Եւ ոչ ևս ելցէ արտաքս: Այսինքն՝ զայն հաստատ կալոյ շնորհն զոր ստացեալ. այնքան հաստատուն մնասցէ մինչ զի ոչ երբեք ջամ — մեկն

ժեսցէ

ժեսցի աստ 'ի յեկեղեցւոյ, ո՛չ ևս անդ-
յերկնայնոյ երուսաղեմայ: Եւ գրեցից 'ի
վերայ նորա. Այսինքն 'ի վերայ սեանն:
Որդ՝ սովորութիւն էր յառաջնում ժա
մանակում, զի յաղթողք 'ի պատերազմի
կանգնեցուցանէին զսիւն՝ և գրէին 'ի վե
րայ այնմիկ զանուանս իւրեանց: Զանուն
ա՟յ իմոյ՝ և զանուն քաղաքին ա՟յ իմոյ Նոր
երուսաղէմայ՝ և զանուն իմ նոր: Ե, որ ա-
նունն է, անունն յի՟ որ կոչեցաւ 'ի Հրեշ
տակէն:

բն 14. Եւ առ Հրեշտակն լաւոդիկեցւոց
եկեղեցւոյն գրեա՛: Զայս ասէ ամէնն՝
վկայն հաւատարիմ, և ճշմարիտն. որ է
սկիզբն ստեղծուածոցն ա՟յ:

մեկ Ամէնն թարգմանի հաստատ. կայուն. և
ճշմարիտ:

բն 15. Գիտեմ զգործս քո՛ զի ո՛չ ցուրտ ես՛
և ոչ ջերմ. երանի թէ ցուրտ իցես, կամ
ջերմն:

մեկ Որդ՝ ջերմն է նա՛, որ արդար է և ա՟ծ
ասէր: ցուրտն է մեղաւորն՝ և ցուրտ 'ի սէ
րոյն ա՟յ: Բայց ճանաչէ զմեղս իւր, և
զինքն մեղաւոր համարէ:

բն 16. Այլ զի գաղջես, և ոչ ցուտ և ո՛չ
ջերմ, սկսիմ փսխել զքեզ 'ի բերանոյ իմոյ:

մեկ Որդ՝ գաղջն է մեղաւորն այն՝ որ թէ
պէտ մեղաւոր է. սակայն ո՛չ ճանաչէ ըզ
մեղս իւր, և վասն կեղծաւորութեան զին
քն բարի համարէ. Որդ՝ ասէ ք՟ս երանի

թէ ջերմ իցես։ Այսինքն՝ արդար․ կամ
ցուրտ իցես։ Այսինքն՝ զքեզ մեղաւոր
համարիցես։ Որպէս ես իսկ․ գուցէ
վասն ահին ա̅յ դատաստանին ապաշխար
իցես։ Բայց քանզի գաղջ ես և ոչ ես
արդար, և գոլով մեղաւոր, զքեզ մեղաւոր
ո՛չ համարիս վասն հպարտութեան քո։
Վասն այսորիկ կամիմ փոխել զքեզ 'ի բե
րանոյ իմմէ։ Արդ՝ որովայնն ա̅յ է որ ե-
կեղեցին՝ իսկ բերանն եկեղեցւոյն է մկր
տութիւնն՝ որով մտանեմք յեկեղեցին։
Յայնժամ փոխէ ա̅ծ զգաղջ մարդն յո
րովայնէ և 'ի բերանոյ․ յորժամ մարդ կո
րուսանէ զշնորհն մկրտութեան․ և զրկի
'ի հաղորդութենէ սրբոյ եկեղեցւոյն։

17․ Զի ասես թէ հարուստ եմ և ճոխա բն
ցեալ, և ոչ ընչի կարօտ իմ, և ո՛չ գիտես զի
դու ողորմելի ես և թշուառական և աղ
քատ՝ և կոյր՝ և մերկ։

Եպիսկոպոսս այս հարուստէր մարմնաւոր մեկ
ընչիւք։ Բայց թափուրէր 'ի հոգևոր ա-
ռաքինութեանց, իրաւի՛ որ լի էր ա̅մ
թշուառութեամբ, զի անցաւոր հարստ
ութիւնն ո՛չ փրկէ զմարդ թարց առաքի
նութեան։

18․ Յորդորեմ զքեզ գնել յինէն զոսկի բն
փորձեալ հրով․ զի ճոխասցիս՝ և զզգեստս
սպիտակ զգեցցիս, և ո՛չ երևեսցի նախա
տանք քոյոյ մերկութեան․ և դեղօք օծեա՛
զաչս քո զի տեսցես։

 Արդ՝

քեամն ձախորդութեամբ. Եւ զընթրիս արարից ընդ նմա, և նա ընդ իս. Տես թէ որ քանւոյ համարէ տր̃ զշնորհս իւր ոչ արտաքսիլ, և զներշնչումն նորա ընդունիլ. Տես թէ որ քան սիրէ ած̃ զարտասուս՝ զզջումն սրտի և զդարձումն մեղաւորաց առնա՛. զի զայսոսիկ զցանկալի կերակուր, զանոյշագոյն խորտիկ. և զխն դալի խրախճան իւր համարէ ասելով.

Զընթրիս արարից ընդ նմա.

բն 21. Որ յաղթէ տաց նմա նստել ընդ իս յաթոռ իմ. որպէս և ես յաղթեցի և նստայ ընդ Հօր իմոյ յաթոռ նորա։

մեկ Տ. յսնքն՝ մասնակից առնեմ զնա արքայութեան իմում, ուր կայ լոյսն յաւիտենական. Հանգիստ կատարեալ, խնդութիւն անճառելի՛ և փառք մշտնջենական. իմա՛ յայսոսիկ եօթն թուղթս՝ առ եօթն եկեղեցիս՝ քս զյաղթանակն և զբարութիւնն խոստանայ միշտ յաղթողաց. Տ. յսնքն՝ այնոցիկ որ.ք յաղթեն ցանկութեան մարմնոյ. փորձութեան դիւաց՝ և փառաց աշխարհի։

բն 22. Որ ունի ականջս լուիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս։

## Գլուխ Չորրորդ.

բն I. Եւ յետ այսորիկ տեսի ահա դրունք երկնից բացեալքէին. և ձայնն առաջին զոր լուայ որպէս զփող

խօսէր ընդ իս և ասէր. Եկ՛ այսր և ցուցից
քեզ որ ինչ լինելոցէ առապայն։
2. Եւ վաղվաղակի եղէ ես յոգի. և ա-
հա աթոռ անդ յերկինս. և՛ ի վերայ աթո
ռոյն նստեալ։
Երկինքնէ եկեղեցին քի՝ աթոռն սիրտք մեկ
սրբոց յորս որպէս յաթոռի հանգչի նս
տեալն։ Այսինքն՝ ած։ որպէս պօղոս ա-
սէ։ Տաճարն այ սբ է՝ որ էք դուք։
3. Եւ որ նստէր նմանէր քարին յասպի բն
սոյ. և սարդիոնի՝ և ծիածան կայր շուրջ
զաթոռովն նման տեսութեան զմրխտոյ։ մեկ
Նստեալն է որն մեր յն քս՝ որ մեծա-
պատճառաւ նմանի քարանցն յասպիսոյ և
սարդիոնի։ Զի յասպիսն՝ կամ յասպին
կանանչագոյնէ. որ ցուցանէ զածութին
նորա որ է միշտ կանաչ. Այսինքն՝ ան
թառամ և անմահ. իսկ սարդիոնն որ է
կարմիր՝ ցուցանէ զմարդկութիւնն և
զմարմինն նորա արեամբ ներկեցեալ. զոր
մէ եսայի ասաց։ Ընդէր են կարմիրք
ձորձք քոյք. Եւ ծիածան կայր շուրջ
զաթոռովն նման տեսութեանն զմրխտոյ։
Ծիածանն է ողորմութիւնն այ՝ որով ա-
մենուստ շրջապատի եկեղեցին. զոր ած
ետ ցնոյ 'ի նշան ողորմութեան և գթու-
թեան։ Նման տեսութեանն զմրխտոյ։
Զի որպէս զմրուխտն առողջացուցանէ
զաչս տկարացեալ. այսպէս մեղաւորք մար
դիկք կուրացեալք հոգւոյ աչօքն՝ և յուսա

 հատեալք,

հատեալք, հայելով յողորմութիւնն Այ,
որովք պտղնիկք, մաքսաւորք, և աւա
ղակք փրկեցան. յայնժամ յուսադրեալք
առողջանան յուսահատութէ իւրեանց։
բն 4. Եւ շուրջ զաթոռովն աթոռք քսան
և չորս. և 'ի վերայ աթոռոցն քսան և չորս
երիցունք նստեալք. զգեցեալք զգեստուք
սպիտակօք, և 'ի գլուխս նոցա պսակք ոս
կեայք։
մեկ Որդ՝ քսան և չորս երիցունքն քսան և
չորս մարգարէքն, և քսան և չորս աթոռք
նեն քսան և չորս գիրք նոցա մարգարէա
կանք։ Եւ այսոքիկ քսան և չորս գրեան
քս մարգարէականք աթոռ կոչին։ Քան
զի որպէս մինչ ոք վաստակեալ նստելով
յաթոռ հանգստանայ, այսպէս մարգա
րէքն դադարեալք յաշխարհական հոգւոց
և պարապեալք յընթերցմունս Ածաշունչ
գրեանց որպէս յաթոռ հանգստանային
Ի այց աստ հարցանի։ Արդ հետև աթո
ռն նշանակէ զեկեղեցին Քի որ է եկեղե
ցի նոր. զի արդ՝ կարէ ասել Թէ քսան
և չորս գրեանքն որք են հինք, էին շուրջ
զաթոռովն՝ որ է նոր եկեղեցին քրիստոսի։
Պատասխանեմ և ասեմ Թէ յորժամ տա
նուտէր ոք կամի զտունն իւր ապահով
պահել 'ի գողից և յաւազակաց՝ ամրացու
ցանէ զտունն այն որմօք և պարսպօք։ Նյս
պէս եւ Քս Տրն մեր առ ի ապահով և ան
վնաս պահել զեկեղեցին որ է տուն իւր՝

ընդ

ընդ դէմ հերետիկոսաց՝ ամրացոյց զնա և
շրջապատեաց գրեամբքն հին կտակարա
նաց, Իբրև զի զոր ինչ այժմ եկեղեցին
հաւատայ և դաւանի՝ զնոյնն յառաջմէ նա
խագուշակեցին քսան և չորս գրեանքն
մարգարէից։ Սպիտակ զգեստքն զմաք
րութիւն վարուցն սրբոց ցուցանեն։ Իսկ
ոսկեայ պսակքն զվարձս նոցա. որոց ած
վասն մաքրից վարուցն խոստանայ։

Ե. Եւ յաթոռոյ ելանէին փայլատակմ բն
ունքն ձայնք, և որոտմունք. և եօթն զամ
բարք բորբոքեցեալք առաջի աթոռոյն.
որք են եօթն ոգիք այ։

Փայլատակմունքն ցուցանեն զհրաշս՝ որք ճէ
եղեն և լինին յեկեղեցւոջ։ Ձայնքն նշանա
կեն զքարոզութիւնն վարդապետաց եկե
ղեցւոյն։ Իսկ վասն որոտմանցն իմացեալ
լինի ահարկութիւնն զոր վարդապետքն քա
րոզեն։ Զի նախանձայոյզք վարդապետքն
մինչ սիրով ոչ կարեն զմեղաւորս առ ած
դարձուցանել. յայնժամ՝ սկսին զսարսա
փելիս քարոզել. որովք դարձուցանեն զնս
՚ի մեղաց առ ած։ Եւ եօթն ղամբարքն
որք են եօթն ոգիքն այ՝ ցուցանեն զեօթն
արփեան շնորհսն՝ որովք կեայ, և լուսաւո
րի եկեղեցին քի։

Զ. Եւ առաջի աթոռոյն որպէս զծով բկ
ապակեայ նման բիւրեղի. և ՚ի մէջ աթո
ռոյն՝ և շուրջ զաթոռովն չորք կենդանիք
լի՝ աչօք յետոյ և առաջնոյ։


Ծովն

Մեկ Ծովս այս՝ օրինակէ սրբոյ Մկրտութեն.
Եւ ըստ որում ծովս այս է ապակեայ
ցուցանէ զբեկանաւորութիւնն և զանկայ
ութիւնն մարդկային։ Քանզի զշնորհս
Մկրտութեան 'ի մարմնի մերում որպէս յա
պակեղէն անօթոջ տեսանեմք։ իսկ բիւր
եղն որ է հաստատուն քան զապակին,
ցուցանէ թէ այն շնորհն Մկրտութեան
որ աստ 'ի մարմնի անկայունէ վասն մարդ-
կայնոյ տկարութեանն. յերկինս լինելոցէ
հաստատուն. կայուն՝ և պինդ որպէս բիւ
րեղ։ Եւ չորք կենդանիքն լի՛ էին աչօք
յետոյ և յառաջոյ։ Չորք կենդանիքն են
չորք գլուխք աւետարանիչքն. Աչքն ու
նին զաչս յետոյ և յառաջոյ։ Առաջինն է
ժամանակն անցեալ. իսկ յետինն է ապառ
նին։ Արդ՝ խոհեմութիւնն է նայելով յան
ցեալն և ըստ նմին տրամադրել զինքն առ
ապառնին. ուստի ունիլ զաչս յետ կոյս
և յառաջ կոյս զխոհեմութիւն աւետարան
չացն ցուցանէ։

Քն 7. Եւ առաջին կենդանին էր նման ա-
ռիւծու։ Երկրորդն՝ նման էր երնջոյ։
Երրորդ կենդանին ունէր զերեսս մար
դոյ։ Եւ չորրորդ կենդանին նման ար
ծուոյ թռուցելոյ։

Մեկ Արդ՝ երեսն մարդոյն ցուցանէ զմաթէ
ոս՝ զի սա զաւետարանն իւր 'ի մարդկու
թենէ քի սկսաւ ասելով. գիրք ծննդեան
յի քի։ Երեսն առիւծոյն ցուցանէ զմար



կոս՝

կոս՝ որ զաւետարանն իւր սկսաւ գրել 'ի գոչմանէ անապատին ասելով։ Ձայն բարբառոյ անապատի։ Արեան զուարակի ցուցանէ զղուկաս. զի սա 'ի քահանայութէ գրեաց ասելով։ Եղև քահանայոմն. քանզի գործ քահանայի էր մատուցանելն զզուարակն։ Իսկ արծուին ցուցանէ զյօհաննէս՝ որ հանգոյն արծուոյ մտօք վերացաւ յերկինս՝ և սլացաւ մինչև յածութիւնն բանին և ասաց։ Իսկզբանէ էր բանն, և

բանն էր առ ած։

8. Եւ չորք կենդանիքն՝ իւրաքանչիւրք նոցա ունէին զթևս վեց։ Եւ շուրջ զինքեամբք և 'ի ներսն լի՝ աչօք և ոչ հանգչէին ոչ տիւ և ոչ գիշեր յասելոյ, սբ սբ սբ տր ած ամենակալ՝ որ էր՝ և որ է, և բն

որ գալոց է։

Սուրբք աւետարանիչքն առին զթևս իմաստութեանն հոգւոյն սրբոյ՝ զի ուր վարդապետք հնոյ կտակին զածաշունչ գրեանսն մարմնաւորապէս, և ըստ նկարագրին միայն իմանային և մեկնէին. Սաորոյ և որպէս մարմնաւորք կենդանիք յերկիր սողային։ Սուրբք աւետարանիչք առեալք զշնորհս հոգւոյն սրբոյ որպէս զթևս՝ սլացեալք մտօք յերկինս՝ ուստի զիմացուած և զիմաստութիւնն. և զհոգևոր մեկնութիւնն ածաշունչ գրոցն առ մեզ իջուցեալ բերին։ Եւ թևքն որք զաւետարանիչսն բարձրացուցանէին յեր մեկ



կինս՝

կինա՛ են վեց առաքինութիւնքն։ չորք
կարտինալականքն այսինքն․ խոհեմութի
ողջախոհութիւն արիութիւն․ արդարու
թիւն․ և երկուս ևս սէր Այ, և սէր մերձա
ւորին։ Տիւն ցուցանէ զաջողութիւնն․ և
գիշերն զձախորդութիւնն։ Զի ոչ է
բաւական միայն յաջողութեան․ այլ և 'ի
գիշերի։ Այինքն՝ ձախորդութեան օրհ
նել զա̃ծ և ասել՝ սբ սբ սբ տր զօրու
թեանց։

բն 9․ Եւ յորժամ տային կենդանիքն զպա
տիւ՝ զփառս և զօրհնութիւն նստողին 'ի
վերայ աթոռոյն կենդանւոյն յաւիտեանս
յաւիտենից։

10․ Անկանէին քսան և չորս երիցունքն
առաջի նստողին յաթոռ՝ և երկիրպագան
էին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից․
և արկանէին զպսակս իւրեանց առաջի
աթոռոյն ասելով։

11․ Արժանի ես տր Այ մեր առնուլ զփա
ռս և զպատիւ՝ և զզօրութիւն՝ զի դու
ստեղծեր զա̃մ․ և վասն կամաց քոց էին
և ստեղծան։

ծկ Զինչ կարէ մարդ տալ քեզ, կամ զինչ կա
րէ առնուլ քեզ 'ի մարդկանէ զոր ոչ իցէ
աւետեալ յԱյ։ կամ զինչ կարէ առնել
մարդ թարց նմա, որ ասէ։ Առանց իմ
ոչ ինչ կարէք առնել։ Ով անճառելի բա
րութիւնն քո։ Զի փախձանէ զարքայու
թիւնն երկնից, և կամի զի գինն արքայու
թե

թեան իցէ բարեգործութիւնն։ Նուքան
զի գիտէ զի բարեգործութիւնն առանց
ինքեան ոչ կարէ ունիլ։ Վասն որոյ մայ
զշնորհս իւր՝ որով մարդս կարասցէ բա
րիս գործել, և նոքօք զարքայութիւնն
գնել։ Արդ՝ երիցունքն արկանէին ըզպսա
կս իւրեանց առաջի նր՝ զի գիտէին բար
ւոք, թէպէտ զպսակս այնոսիկ վասն բա
րեգործութեան նոցա ետ ած նոցա։ Սա
կայն ևս նոյնք բարեգործութիւնքն շնոր
հօք և օգնականութեամբն նր գործեցան։

## Գլուխ հինգերորդ։

1. Եւ տեսի յաջոյ ձեռին որ նստէր բն
յաթոռն զգիր գրեցեալ. ներ
քոյ և արտաքոյ կնքեցեալ եօթն կնքովք։
Գիրն զհին և զնոր կտակարանն ցուցանէ մեկ
և գիր առի եղական թւով, նախ զի եր
կաքանչիւրքն միով հոգւով նյ գրեցան։
Երկրորդ՝ զի զմիոյ քն խօսին։ Ներքին
գրածն զհոգևոր իմացուածն. իսկ ար
տաքինն զնկարագրին իմացումն ցուցանէ.
Իսկ զեօթն կնքոցն որովք կնքեցեալէր
զգիրն խօսեսցուք յետոյ։
2. Եւ տեսի զհրեշտակ մի զօրաւոր՝ որ բն
քարոզէր ձայնիւ մեծաւ և ասէր. ով է
արժանի բանալ զգիրն, և լուծանել ըզ
կնիքս նորա։
Հրեշտակն զօրաւոր է գաբրիէլ հրեշ մեկ


տակապետն

տակապետն․ որ զօրութիւն ա̃յ թարգմանի։

Բն 3․ Եւ ո՛չ ոք կարէր՝ ո՛չ յերկինս, ո՛չ յեր-
կրի, և ո՛չ 'ի ներքոյ երկրի, բանալ զգիրն
ո՛չ և հայել 'ի նա։

4․ Եւ ես լայի յո՛յժ՝ զի ոչ ոք արժանի գը-
տաւ բանալ զգիրն, և ո՛չ տեսանել զնա։

Մեկ Ո՛չ յերկինս․ Այսինքն՝ հրեշտակք․ ոչ յեր-
կրի․ Այսինքն՝ մարդիկք․ ո՛չ և 'ի ներ-
քոյ երկրի․ Այսինքն՝ 'ի լիմպոսն հոգիք
արդարոց հարց սոքա ո՛չ այնքան յայտնապէս
ծանեան զխորհուրդ մարդեղութեանն
ք̃ի․ որպէս զկնի առաքման հոգւոյն սր-
բոյ որ ծանուցաւ աշխարհի․ Վասն ո-
րոյ և լայր յոհաննէս․

Բն 5․ Եւ մին 'ի յերիցանցն ասէ մի՛ ող-
բար՝ ահա՛ յաղթեաց առիւծն յազգէն
յուդայ յարմատոյն դաւթի բանալ զգիրն
և լուծանել զեօթն կնիքս նորա։

Մեկ Առիւծն յազգէն յուդա՛յ է տ̃րն մեր ք̃ս՝
զորմէ խօսելով յակոբ ասէ․ կորիւն առիւ-
ծու յուդա․ Արմատն և դաւթի է ք̃ս՝
զի թէպէտ արմատն մարդկութեանն ք̃ի
է՛ դաւիթ, Սակայն ըստ ա̃ծութեանն ք̃ս
է արմատ, և սկիզբն և ստեղծօղ դաւթի։

Բն 6․ Տեսի 'ի մէջ աթոռոյն՝ և չորից կենդա-
նեաց՝ և 'ի մէջ երիցանց գառն կայր իբրև
զենեալ․ որոյ էին եօթն եղջիւրք, և
եօթն աչք․ Որք են եօթն հոգիք ա̃յ ա-
ռաքեցեալք ընդ ա̃մ երկիր։

Մեկ Գառանն ք̃ս զոր յոհաննէս մկրտիչն մա

տամբ եցոյց ասելով։ Ահա գառն այ։
Ասէ գառն որպէս զենեցեալ, և ոչ ասէ
բացարձակապէս զենեցեալ։ Զի թէ
պէտ զենաւ, սակայն ոչ ապականեցաւ մար
մին նորա։ Եօթն եղջ՛իւրքն քի են եօթն
շնորհք հոգւոյն սրբոյ որովք լի էր քս։
Եւ քան զի զօրութիւնն կենդանեաց կայա
նայ յեղջիւրս նոցա։ Վասն այսորիկ ըստ
զօրութեանն եղջիւրք կոչին եօթն արփ
եան շնորհք։ Բայց քան զի շնորհքն հո
գւոյն սրբոյ ոչ միայն զօրաւորք են. այլ
և են լուսաւորք։ Վասն այսորիկ ըստ լու
սաւորութեանն աչք կոչին։ Հոգիք այ ա
սին, զի յայ որին։ Եւ առաքին ընդ ամ
երկիր, զի որպէս ընդ ամ երկիր ել բար
բառ անուանն քի. այսպէս և յամ տեղիս
գտանի շնորհք հոգւոյն սրբոյ։

7. Եւ եկն և էառ յաջոյ՝ որ նստէր յա
թոռ զգիրն։ բն

8. Եւ յորժամ եբաց զգիրն՝ չորք կեն
դանիքն և քսան և չորք երիցունքն անկան
առաջի գառին՝ ունելով իւրաքանչիւրքն
զքնարս և զբուր վառ ոսկեղէնս լի հոտոց
որք են աղօթք սրբոցն։

Մարդկութիւնն քի էառ զգիրն։ Այս ճէկ
ինքն՝ զամ իմաստութիւն ՚ի հօրէ այ և
զզօրութիւն որով լուսաւորէ և ջատագո
վէ զեկեղեցին իւր, և զամ հաւատացեալսն։
Չորք կենդանիքն։ Այսինքն՝ աւետարա
նիչքն՝ առաքեալքն՝ և ընդ նոսա համայնք

մէք նորայս կտակի։ Եւ քսան և չորս երե
ցունքն։ Այսինքն՝ քսան և չորս մարգա
րէքն՝ և ընդ նոսա համայնք նահապետք և
ամ մէք հնոյ կտակին՝ մինչ տեսին զգիրն
բացեալ։ Այսինքն՝ յորժամ յայտնեցաւ նմ
ամ խորին խորհուրդս 'ի ձեռն քի՝ անկան
առաջի նորա վասն յոյժ սոսկացեալք գո
լոյն՝ այն քանիցս անկանին առաջի քի որ
քանից խոկան զքն անպատմելոյ խոնարհ
ութենէ. և խոնարհեցուցանեն զինքեանս
։ Քնարքն են սիրտք նոցա որովք երգեն
զգովասանութիւնս այ. Իսկ բուրվառքն
են բերանք նոցա յորոց ելանեն քաղցրա
համ բուրումն խնկահոտ աղօթից՝ զորոց
դաւիթ ասէ՝ ուղիղ եղիցին աղօթք իմ
որպէս խունկ առաջի քո տր։

բն Գ. Եւ երգէին զերգ նոր ասելով։ Ար
ժանի ես առնուլ զգիրն և բանալ զկնիքս
նորա. քանզի մեռար և փրկեցեր զմեզ այ
արեամբ քով յամենից ցեղից և լեզուէ ժո
ղովրդենէ և յազգէ։

մեկ Նոր էր երգն այն, զի նիւթն երգոյն էր
նոր։ զի նոր է քի մարդեղութիւնն, և
փրկութիւնն, նոր էր քի երկնաւոր վար
դապետութիւնն և բարերարութիւնն։

Նոր էր խորհուրդն եկեղեցւոյն զոր հաս
տատեաց. և նոր օրէնն զոր սահմանեաց.
նոր էր և քարոզն նորա և պատուիրանն՝
որպէս ինքն ասաց։ Օ պատուիրան նոր
տամ ձեզ զի սիրիցէք զմիմեանս՝ որպէս

տիրեցի զձեզ։ Արժանի ես տր առնուլ
զգիրն, և բանալ զկնիք նորա։ Այսինքն
իրաւի դու էիր արժանի բանալոյ զգիրդ
զոր բացեր՝։ յետոյ տան սբքն զպատճառն·
թէ էր, արժանի, ասելով· Վան զի զե
նար։ Ահա աստ յայտնէ թէ հայրն երկնա
ւոր վասն որդեանցն չարչարանացն և մա
հուանն քի ետ զկարողութիւն բանալոյ
զգիրն։ Փրկեցեր զմեզ այ։ Այսինքն՝ որ
գնեցէ ոք զիր իմն ոչ միայն վասն իւր
այլ և վասն հօր իւրոյ։ Բայց զորս գնե
ցեր արեամբ քով վասն քո և վասն հօր
քո։ այսորքիկ գնեցեալքս ոչ էին միայն 'ի
միոյ ազգէ· այլ յամ ազգէ· յամ լեզուէ·
և յամ ժողովրդենէ·

10· Եւ արարեր զմեզ այ մերոյ թագա
ւորս և քահանայս՝ և թագաւորեսցուք 'ի
վերայ երկրի· բն

Զայսմանէ խօսեցաք 'ի մէկ գլուխն՝ և 'ի մեկ
վեց թիւն։ Բայց աստ մեկնեսցուք զյե
տին մասն որ ասէ։ Եւ թագաւորեսցուք
'ի վերայ երկրի։ Զի բարիք քրիստոնեայ
քն ոչ միայն թագաւորեն ընդ քի յերկի
նս· այլ թագաւորեն աստ ևս 'ի վերայ
երկրի տիրելով մարմնոյ՝ աշխարհի և սա
տանայի։

11· Եւ տեսի և լուայ զձայնս հրեշտա բն
կաց բազմաց շուրջ զաթոռովն զկենդա
նեօքն և զերիցամբքն, և էր թիւ նոցա հա
զարք հազարաց, և բիւրք բիւրուց։

 Հրեշտակ

մեկ Հրեշտակքս այսոքիկ են պահապանք
հրեշտակքն։

բն 12. Որք ասէին ձայնիւ մեծաւ. Արժա
նի է գառն որ զենաւն առնուլ զզօրու
թիւն՝ և զմեծութիւն՝ և զիմաստութիւն,
և զկարողութիւն. և զպատիւ՝ և զփառս, և
զօրհնութիւն։

13. Եւ ամ արարածք որք են 'իյերկինս
և որք են 'իյերկրի. և որք 'ի ծովու. և
որք 'ի նմին, լուայ որք ասէին ձայնիւ մե
ծաւ, նստողին յաթոռն և գառին՝ օրհ
նութիւն՝ և պատիւ և փառք և կարողու
թիւն 'իյաւիտեանս յաւիտենից։

14. Եւ չորք կենդանիքն ասէին Ամէն,
և քսան և չորս երիցունքն անկան 'ի վերայ
երեսաց իւրեանց և երկիրպագին կենդա
նւոյն յաւիտեանս յաւիտենից.

մեկ Որք 'իյերկինս։ Այսինքն՝ քրիստոնեայքն։
Որք 'իյերկրի՝ Այսինքն՝ դևքն։ Որք 'ի
ծովու։ Այսինքն. հրէայքն։ և հեթանոս
քն յաւուրն դատաստանին երկիրպագա
նելոց են քի, բարեք քրիստոնեայքն սիրով
և կամաւ, իսկ չարք քրիստոնեայքն, դևքն
հրէայքն և հեթանոսքն ակամայ և բռնա
դատեցեալք։

ԳԼՈՒԽ ՎԵՑ ԵՐՈՐԴ.

բն 1. Եւ տեսի յորժամ եբաց գառն ըզ
մինն 'ի յեօթանց կնքոց. և լուայ
զմինն 'ի չորից կենդանեաց որ ա-

 սէր

ռէր որպէս զձայն որոտման։ Ե՛կ և տես
Կենդանիս։

2. Եւ տեսի աՀա ձի սպիտակ՝ և որ նս տէր 'ի վերայ նորա ունէր զաղեղ. և տո ւաւ նմա պսակ. և ել յաղթող զի յաղ թիցէր։

Բ.րդ՝ սպիտակ ձիս, աստ ցուցանէ զառա քեալսն և զայլս այլս պաշտօնեայս աւետա րանին՝ որովք Քս յաղթեաց աշխարհիս, և Հնազանդեցոյց զնա ինքեան։ Նմանին առաքեալքն ձիոյ՝ նախ վասն քարոզութե զի որպէս ձին անաՀ մտանէ 'ի պատե րազմ. այնպէս և առաքեալքն քաջապէս մտին 'ի մարտ՝ ընդ սատանայի՝ և ընդ ան Հաւատից։ Երկրորդ՝ ձին դիւրաւ սան ձաՀարի՝ և Հնազանդի տեառն՝ և ըստ կա մաց տեառն շարժի՝ այնպէս և առաքեալ քն շնորՀօք Քի սանձեցին զինքեանս՝ և միշտ ըստ կամացն Քի շարժեցան։ Երրորդ ձինէ արագընթաց՝ այնպէս և առաքեալ քն շուտով տարածեցին զանունն Քի ընդ ամ երկիր ուր ել բարբառ նոցա։ Զայս մանէ խօսելով զաքարիայ մարգարէն ասէ 'ի տասն գլուխ։ Եդ Տր զտունն յուդայ որպէս զձի փառաց իւրոյ 'ի պատերազմ. Հեծեալն կամ նստեալն 'ի ձիս է Քս՝ նս տումն այս եղանի միջնորդութեամբ կուր տանին, կամ Թամքին՝ զոր տաճիկք էյէր կոչեն՝ որ ցուցանէ զարդարութիւնն վա րուց. զորմէ դաւիթ ասէ։ Յարդարու թիւնս

թիւնս և յիրաւունս հաստատեալէ աթոռ-
քո։ Ըստ նստողս 'ի ձին զերկու մտրակս
ունի՝ որոց մինն է ահն ծայնոյ դատաստա-
նանի՝ որով խոտորէին առաքեալքն 'ի չարէ
իսկ միւս մտրակն է սէրն՝ որով ածէին
զբարին, և սանձն է առաքինութիւնն
խոհեմութեան, և խելամտութեան։ Ըղեղ-
նէ աւետարանն, յորմէ այնքանք ելանեն
ալաքունք որ քանս ունի բանս և զգածմու-
նս։ Ողոքօքս այսորիկ զամենեսեան սպա-
նանէ։ Ըյոլնքն՝ զմեղաւորս՝ յորժամ ա-
սցէ յաւուրն դատաստանին։ Երթայք
յինէն անիծեալք։ Եւ ապրեցուցանէ
զնոսա. առ որս ասացէ. եկայք օրհնեալք
Հօր իմոյ։ Սպիտակէ ձին վասն մաքրու-
թեան վարուցն։ Եւ նստեալն 'ի ձին ու-
նի զպսակ՝ զի է յաղթող յոյժ։

բն 3. Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ՝
լուայ յերկրորդ կենդանւոյն որ ասէր՝ եկ
և տես։

մեկ 4. Եւ ել այլ ձի կարմիր՝ և որ նստէր 'ի վե-
րայ նորա տուաւ նմա զի բարձցէր զխա-
ղաղութիւն 'ի յերկրէ. և զմիմեանս սպանի-
ցեն, և տուաւ նմա սուր մեծ։ Կարմիր
ձին է ժողովուրդն անհաւատից. որ ըզ-
քրիստոնեայս հալածէր 'ի ներոնէ մինչև
ցմեծն կոստանդիանոս։ Կարմիր էր ձիս
այս՝ զի ծարաւէր հեղուլ զարիւնս քրիս-
տոնէից։ Նստողքն 'ի վերայ ձիոյս էին
կայսերք՝ և թագաւորք անհաւատից։ Նո

 ւաւ

ւաւ սոցա թուր մեծ։ Այսինքն՝ թոյլտու
ութեամբն այ՝ սրասպան արարին զմ̃բ մար
տիրոսքն։

5. Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ՝ լո ըն
ւայ յերրորդ հրեշտակէն որ ասէր՝ եկ և
տես։ Եւ ահա ձի սեաւ՝ և որ նստէր 'ի
վերայ նորա ունէր կշիռ 'ի ձեռին իւրում։
6. Եւ լուայ զձայն 'ի մէջ չորից կենդա
նեացն որ ասէր։ Երկու քաշ ցորենոյ դե
նարի միոջ։ Եւ երիցս երկակի քաշ գա
րոյ դենարի միոյ։ Եւ գինւոյն և ձիթոյ
մի՛ վնասիցէք։

Սեաւ ձին է տիտոս կայսրն հռոմայ։ և մեկ
նստեալն 'ի վերայ նորա է՛ բարկութիւնն
այ։ զի որպէս ձիավարն հրամայէ ձիոյն
ոչ ձայնիւ։ այլ դրդելով։ այսպէս և ս ա̃ծ
էարկ խորհուրդ 'ի սիրտն տիտոսի եր
թալ և ասպատակել զերուսաղէմ։ Սա՛ ու
նի զկշիռ դատաստանի՝ և վրիժախնդրու
թեանն այ որով հատուցէ զվրէժ երու
սաղէմացւոցն՝ քրիստոսասպանից։ Արդ՝
ցորեանն ցուցանէ զազնուազարմսն, երու
սաղէմայ։ Իսկ գարին ցուցանէ զռամիկ
և զգռեհիկ ժողովուրդսն։ Իւրաքանչիւր
քափն վերոյ ասացեալ պարունակէ յինք
եան զհինգ այլս ազնուազարմիցն. և եր
կու քաշն զտասն նոցա։ Արդ՝ մինչ ասէ
թէ երկու քաշն ցորենոյն դենարի միոջ
ցուցանէ թէ հռոմայեցւոց կայսրն զկնի
ասպատակելոյն զքն̃ասպան երուսաղէն ըզ



տասն

տասն այրս ազնուատոհմիցն երուսաղեմայ արծաթոյ միոջ վաճառեաց: Իսկ երիցս երկակին առնէ քաշս վեց. և իւրաքանչ իւր քաշն ունելով յինքեան զհինգ այրս գունհկաց. համայնքն առնեն զարս երեսուն՝ որ ցուցանէ թէ զերեսուն այրս գունհկացն արծաթոյ միոյ վաճառեցին: Որպէս կամեցաւ դատաստանն ով զի երուսաղեմացիքն գնեցին զքս երեսուն արծաթոյ: Իսկ երեսունն նոցա վաճառեցան միոյ դենարի: Գինւոյ և ձիթոյ մի՛ մնասեսցես: Որինքն՝ ով տիտոս՝ մի՛ մնասեսցես հաւատացեալոցն 'ի քս: Որք սիրով գինւոյ՝ և ողորմութեամբ ձիթոյ նմանին: Որ և եղև իսկ՝ զի յառաջ քան զերթալն հռովմայեցւոց յերուսաղեմ. առ 'ի կործանել զնա. ած աղդեաց հաւատացելոցն ելանել յերուսաղեմայ. որք ելեալք անտի զերծան 'ի չարեացն: Եւ այս եղև զկնի քառասուն և երկու ամացն յետ համբարձմանն քի: Ծանիր ընթերցող՝ 'ի մեր հայոցս ածաշունչն ուր կապիճէ գրած՝
'ի լատինացւոցն չափէ գրած:

7. Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ՝ լուայ զձայնն չորրորդ կենդանւոյն որ ասէր՝ եկ և տես:

քն 8. Եւ ահա ձի դեղնոտ՝ և որ նստէր 'ի վերայ նորա անուն նորա մահ՝ և դժոխս հետևէր նմա: Եւ տուաւ նմա կարողութիւն 'ի վերայ չորից կողմանց աշխարհիս՝

ապականել որով՝ սովու՝ և մահուամբ՝ և
գազանօք երկրի։

Արդ՝ շլուոս գոյնս է գոյն խոտոյ որ մինչ — մեկ
արևակեզ լինի սկսէ դեղնիլ։ Արդ՝ ձիս
այս ցուցանէ զկեղծաւոր՝ և ամբարիշտ
քրիստոնեայս։ Դեղնագոյն են սոքա․ զի
պահեցողութեամբ ապականեն զերեսս ի-
րեանց զի մարդկան պհք երևեսցին։ Եւ
որ նստէր 'ի վերայ նորա կոչիւր մահ։ Զի
բազում մահացուցանէ չար օրինակօք։
Սրով։ Այսինքն՝ վնասէ սա՛ լեզուաւ եզբա
զումս ածէ 'ի կորուստ Սովու՝։ Այսինքն՝
չքաւորութ բանիցն այ։ Գազանօք երկրի։
Այսինքն՝ անբան և անասնական մոլութբք։

9․ Եւ յորժամ եբաց զկնիքն հինգ երորդ- — բն
տեսի 'ի ներքոյ սեղանոյն զհոգիս սպանե-
ցելոցն վասն բանին այ․ և վասն վկայու-
թեանն զոր ունէին։

Այսոքիկ հոգիքս — մեկ
են հոգիք մարտիրոսացն՝ որք սպանան 'ի
հռոմայեցւոց՝ 'ի գօթացւոց՝ յարիանոսաց՝
'ի թուրքաց՝ և յայլոց հերետիկոսաց։

10․ Եւ աղաղակէին ձայնիւ մեծաւ ա- — բն
սելով։ Մինչև յերբ՝ տր սբ և ճշմարիտ՝
ոչ դատես՝ և խնդրես զվրէժ արեան մե-
րոյ՝ յայնցանէ որք բնակին յերկիրս։

Մեծ — մեկ
աղաղակնէ մեծ բաղձանքն և մեծ ցան-
կութիւնն սրտի։ Զի ցանկութիւնք հո-
գւոցն են բանք նոցա։ Այնքան ոք սակաւ
աղաղակէ որքան սակաւ ունի զբաղձանս
և ցանկութիւն սրտի։ Զի եթէ ցանկու

 թիւն

թիւն ո՛չ իցէր՝ խօսք հոգւոյ՝ մարգարէն ո՛չ ասիցէր: Զցանկութիւն սրտից նոցա լուաւ ականջ քո: Մինչև յերբ ո՛չ դատես և խնդրես զվրէժ արեան մերոյ՝ յայնցանէ որք բնակեն յերկիրս: Աստ ո՛րք հոգիքն մարտիրոսաց՝ ո՛չ խնդրեն զվրէժ վասն նախանձոյ և ատելութեան՝ այլ ցանկալով վրէժխնդրութեան՝ ցանկան աւուրն դատաստանին զի շուտով գայցէ: Եւ քան զի գալուստն աւուրն դատաստանին ո՛չ լինի թարց հատուցանելոյ մեղաւորացն ըստ գործոց իւրեանց: Վասն այսորիկ մինչ ցանկան թէ ած առնուցու զվրէժ 'ի չարացն՝ ցանկան զի շուտով գայցէ օրն դատաստանին:

բն 11. Եւ տուաւ իւրաքանչիւրոց նց պատմուճան սպիտակ՝ և ասացաւ նոցա զի հանգիցեն փոքր մի՛ ժամանակ՝ մինչև լցցին ծառայակիցք նոցա, և եղբարք նոցա,
մեկ որք սպանանելի՛քեն իբրև զնոսա: Տուաւ նոցա պատմուճան սպիտակ: Այսինքն՝ հոգւոցն մարտիրոսացն տուաւ փառք և երանութիւն՝ և լոյս փառաց, տեսութիւն և զմայլումն երեսացն այ, մարդկութեանն քի սրբուհւոյ կուսին մարիամու՝ սրբոց հրեշտակաց՝ և ամենից սրբոց: Փառքս այս ասի պատմուճան. զի հանգոյն պատմուճանի զհոգին մերկացեալ 'ի մարմնոյն զգեստաւոր է և գեղեցկացուցանէ: Ասի պախտակ՝ զի պայծառէ փառքն արքայութեան

Թեան և լուսափայլ։ Եւ ասացաւ նոցա
զի հանգիցեն փոքր մի ժամանակ մինչև
կատարեսցին ծառայակիցքն նոցա։ Այս
ինքն՝ ասաց Քն̃ առ նոսա՝ ով նոքա հոգիք
մարտիրոսաց․ դուք ցանկայք զի շուտով
գայցէ օրն դատաստանին՝ առ 'ի առնուլ
ևս զփառս մարմնոց ձերոց։ Բայց համբե
րեցէք փոքր մի ժամանակ․ և որպէս հան
գչին մարմինք ձեր 'ի գերեզմանս․ նոյն
պէս հանգերուք և դուք աստ 'ի յերկինս
մինչև գայցէ օրն դատաստանին։ յորում
նեռն սպանցէ զմնացեալ եղբայրս ձեր՝
որք իբրև զձեզ հեղլոցք են զարիւնս իւ
րեանց վասն իմ․ ապա Թէ զմարմին ձեր
և զնոցայն փառաւորեցեալ տացեմ։

12․ Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն բն
վեց երորդ՝ և ահա երկրաշարժութիւն
մեծ եղև՝ և արեգակն եղև սեաւ որպէս
զքուրձ խարազանեայ՝ և լուսինն բոլոր
եղև որպէս արիւն։

Այս վեց երորդ կնիքս ցուցանէ զվերջին մեկ
օրն դատաստանին, և զվրէժառութիւնն
յամբարշտաց՝ և զմերձակայ գոլն արդար
դատաստանին Քի̃․ Որդ՝ առ 'ի պատժել
զմեղաւորս Ած̃ խաւարեցուցանէ զարեգակն։
Այսինքն՝ շրջապատեսցէ զնա Թանձր
ամպով, և խաւարային միգաւ․ զի զրկեա
ցին ամբարիշտքն 'ի լուսոյ նորա։ Լուսինն
բոլոր եղև որպէս զարիւն։ Եւ Թէպէտ
ոչ դառնայցէ լուսինն յարիւն ըստ իւրա


ւանց

ւանց՝ սակայն այնպէս երեւեցի հրեիցն
վասն հեղմանն արեանն քո։ Այնպէս
երեւեցի ջուր քրիստոնէիցն՝ վասն քամա
հելոյն զարիւնն քո։ Արդ՝ կարմիր լու
սինն որպէս զարիւն։ զի որպէս մինչ մարդ
ամաչի կարմրի երեսն սապէս եւ որպէս
թէ ամաչի լուսինն տեսանելով զայն քան
ջարութիւնն զոր գործեցին մարդիկք։
Արեգակն խաւարեցի՝ եւ լուսինն ոչ տա
ցէ զլոյս իւր։ Զի որպէս մարդիկք
մինչ վախեն՝ արիւնն ժողովի 'ի սիրտն
առ 'ի զօրացուցանել զնոյն սիրտն, եւ երե
սն մնայ դեղնած։ Նմանապէս եւ յահէն
քո դատաւորին՝ կորուսանեն զլոյս եւ զզ
պայծառութիւն իւրեանց։

բն 13. Եւ աստեղք յերկնից անկան 'ի վե
րայ երկրի։

մեկ Այսինքն՝ զայնպիսիս արհարկուս եւ զսար
սափելիս փայլատակմունքս դէպ 'ի յերկիր
արձակեսցեն՝ մինչ զի թուիցի մարդկան
թէ յերկնից յերկիր անկանիցին։

բն 14. Եւ երկինքն իբրեւ զմագաղաթեայ
գիր գալարեցաւ։

մեկ Այսինքն՝ որպէս մինչ գալարի մագա
ղաթն ոչ եւս երեւի 'ի նմին գրեցեալ։ Սմա
նապէս եւ գալարեսցի երկինքն յաւուրն
դատաստանին, մինչ զի ոչ եւս երեւեսցին
աստեղքն 'ի նմին։ Ամ լերինք եւ կղզիք 'ի
տեղւոջէ իւրեանց շարժեցան։ Այինքն՝
ամ լերինք աւուրն դատաստանի հաւա


սար

ամրեացին։

15․ Եւ թագաւորք երկրի, և իշխանք․ բն
և հազարապետք՝ և մեծատունք՝ և զօրեղք
և ամ ծառայ և ազատ թագուցին զինք
եանս 'ի այրս և 'ի քարինս լերանց։
16․ Եւ ասեն ցլերինս և ցքարինս անկե
րուք 'ի վերայ մեր, և ծածկեցէք զմեզ
յերեսաց նստողին 'ի վերայ աթոռոյն, և
'ի բարկութենէ գառին։
17․ Վասն զի՝ եկն օրն մեծ բարկութեն
նորա, և ո՞ կարասցէ կալ։

Արդ՝ այնքան ահարկու՝ այնքան սարսա մեկ
փելի, և այնքան սաստիկէ լինելոց օրն այն
մինչ զի ո՛չ միայն կամիցին կալ 'ի ներքոյ
լերանց և բլրոց, այլ և կամիցին կալ մանա
ւանդ 'ի դժոխս․ քան թէ տեսանել
զբարկացած երեսն քո։ վասն որոյ ասէր
յոբ՝ Ո՞ տացէ զի 'ի դժոխս թագուցես
զիս՝ մինչև անցցէ բարկութին երեսաց քոց։

## Գլուխ եօթն երորդ․

1․ Յետ այսորիկ տեսի զչորս հրեշտա
կս 'ի վերայ չորս անկեանց երկրի բն
ունելով զչորս հողմս երկրի․ զի
մի՛ շնչեսցեն 'ի վերայ երկրի՝ ո՛չ
ևս 'ի վերայ ծովու՝ ո՛չ ևս 'ի ծառ իմիք։
Այսօրինակ չորս հրեշտակքս՝ ցուցանեն զտէ մեկ
րութիւնն հռոմայեցւոց՝ որք տիրէին չո
րից կողմանց աշխարհիս․ Զորս հողմքն

նշանակեն զխաղաղութիւնն մարդկան. զի
որպէս հողմունքն յարուցանեն զամպն՝ և
յամպոցն ցօղելով յերկիր՝ պտղաբեր առ-
նեն զնա. Նոյնպէս և խաղաղութիւնն
է հոգևոր պտղաբերութիւն. Եւ զայս
խաղաղութիւնս զորս չորք հողմունքն նշա-
նակեն. կայսերքն հռօմայեցւոց աղմկելով
խռովեցուցանէին. Եւ ոչ տային զխաղա-
ղութիւն երկրի. Այսինքն բնակչաց 'ի
կղզիս՝ և ոչ նաւորդաց ծովու. և ոչ ևս
ծառոց. Այսինքն՝ ոչ միայն նեղէին զռա-
միկս, այլ և զմեծատունսն զորս ծառն
նշանակէ.

բն 2. Եւ տեսի զայլ հրեշտակ զի ել յարևե-
լից՝ և ունէր զնշան այ̃ կենդանւոյ, և աղա-
ղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշ-
տակսն՝ որոց տուաւ վնասել երկրի և ծո-
վու՝ ասելով.

3. Մի վնասէք երկրի և ծովու՝ և ոչ
ծառոց՝ մինչև կնքեցից զծառայս այ̃ մերոյ
'ի ճակատս նոցա.

մեկ Հրեշտակն է Քս՝ որ է մեծի խորհրդոյ
հրեշտակ. Եւ յարևելից. Զի ոպ̃ արե-
գակն ծագմամբն իւրով ուրախացուցանէ
զաշխարհս. Նոյնպէս Քս ծննդեամբն իւ-
րով ուրախացոյց զաշխարհս. Ունէր հրեշ-
տակն զնշան այ̃. և Քս գոլով ած̃՝ զնշա-
նս մեծամեծս եցոյց աշխարհիս զորպիսիս
ոչ ոք կարէ ցուցանել. Վասն այսորիկ նի-
կոդիմոս ասաց. Գիտեմք զի յայ̃ եկեալ ես



վար

վարդապետ՝ զի ոչ ոք կարէ առնել զայս
նշանս զոր դու առնես եթէ ոչ իցէ ա̅ծ
ընդ նմա։ Մինչև կնքեցից զծառայս ա̅յ
մերոյ ՚ի ճակատս նոցա։ Նիքս այս է նը
շանն այն, որով կնքէին հեծեծողքն ըզ
ճակատս իւրեանց ՚ի քաղաքն երուսաղէմ։
Եւ աստ պարտէ գիտել. զի յետին գիրն
երբայեցւոց կոչիւր, թաու և էր խաչաձև
ո̅պ է գիրն մեր. ք այսինքն քէ։ Արդ
ետես եզեկիէլ զ̅ արս որք գնային կոտո
րել զերուսաղէմացիսն։ Եւ հրամայեաց
ա̅ծ առն ումեք և ասէ։ Դիր զթաու նը
շան ՚ի ճակատս այնոցիկ որք հեծեծեն և
հոգւոց հանեն ՚ի վերայ անօրէնութեանց
իւրեանց, և որոյ վերայ զայս տեսցէք, առ
նա մի՛ մերձենայք։ Եզեկիել. թ. գլ. և յ̅տ
թիւն։ Եւ այս ցուցանէր զզօրութիւնն
խաչին, որով լինելոց էր փրկութիւն մարդ
կան։ Աստի, մինչ ք̅ն առ հրամայեցին
ասաց, ոչ մարմնաւոր ձայնիւ, այլ կամա
թէ. Մինչև կնքեցից. և այլն. կամէր ա
սել։ Մի հրամայեցիք. մատնեցի ՚ի ձեռս
ձեր, զհամայնս այնոսիկ, որք յամառեալք
են ՚ի խստասրտութեան իւրեանց, և ո̅չ
գ̅ոյ յոյս դառնալոյ նոցա առ իս, բայց այ
նոցիկ որք ունին կամք ընդունիլ զհաւա
տն իմ, մի՛ վնասէք. մինչև մկրտիցին և
խոստովանեսցեն զիս ա̅ծ, և բարձցեն ըզ
խաչ իմ. ապա թէ կարէք և նոցա վնա
սել և մարտիրոսացուցանել, ո̅պ արարիք



ընդ

ընդ այլոց ծառայից իմոց։ Եւ թէպէտ
կարէք վնասել նոցա մարմնաւորապէս,
սակայն ոչ կարէք վնասել հոգւոց նոցա․
զի ունին զնշանն․ Թաւ, այսինքն խոս
տովանին զխաչն իմ։

բն 3․ Եւ լուայ զթիւ կնքեցելոցն․ հարիւր
քառասուն և չորք հազարք կնքեցեալք յա
մենայնէ ցեղէ որդւոցն իսրայելի։

մեկ Որդ այսու համարովս էին նոքա զորոց
քս ասաց ոչ վնասել 'ի հռօմայեցւոց մինչև
կնքեցէին 'ի ճակատս իւրեանց, և կատարե
ցաւ բանն քի, զի ճ̄ խ̄ և դ̄ ռ̄ք դարձան
'ի հաւատն քի 'ի ժամանակն կոստանդիա
նոսի որոց ճակատն կնքեցաւ նշանաւ սր
բոյ խաչին։ Եւ որք 'ի կոստանդիանոսէ
մինչև ցայժմ մարտիրոսացան, և այժմ մար
տիրոսանան 'ի հեթանոսաց, 'ի հերետի
կոսաց և 'ի թուրքաց և որք պարտին մար
տիրոսանալ մինչև 'ի նեռն, բոլոր թիւն
նոցա լինելոց է ճ̄․ խ̄․ դ̄․ ռ․ Որդ, թէ
պէտ սակաւք էին երբայեցւոցն որք դար
ձան 'ի ժամանակի կոստանդիանոսի, և որք
դառնալոցքեն առ քս մինչև ցգալուստն
նեռան, և բազումք են 'ի հեթանոսաց, սա
կայն ևս հեթանոսքն ասին որդիք իսրայէ
լի։ ոչ ըստ մարմնոյն, այլ ըստ հոգւոյն։

բն 5․ Յազգէն յուդայ բ̄ժ̄ան ռ․ կնքեցեալ։
Յազգէն ռուբենի․ բ̄ժ̄ան ռ․ կնքեցեալ։
Յազգէն գաթայ բ̄ժ̄ան ռ․ կնքեցեալ։
6․ Յազգէն ասերայ բ̄ժ̄ան ռ․ կնքեցեալ։

Յազգէն Նեփթաղիմայ բ̅ժան ու կնքեցեալ։
Յազգէն մանասէի բ̅ժան ու կնքեցեալ։
7. Յազգէն շմաւօնի բ̅ժան ու կնքեցեալ։
Յազգէն ղեւիայ բ̅ժան ու կնքեցեալ։
Յազգէն իսաքարայ բ̅ժան ու կնքեցեալ։
8. Յազգէն զաբուղօնի բ̅ժան ու կնքեցեալ։
Յազգէն յօսէփու բ̅ժան ու կնքեցեալ։
Յազգէն բենիամենի բ̅ժան ու կնքեցեալ։
Աստ ոչ յիշէ զդան զի նեռն յազգէն նորա
է ծնանելոց։

9. Եւ յետ այսորիկ տեսի զխումբ մեծ, զոր ոչ ոք թուել կարէր։ յամ̅ հեթանոսաց, եւ յամենից ցեղից, եւ ժողովրդոց, եւ լեզուաց, որք կային առաջի աթոռոյն, եւ յանդիման գառին զգեստաւորեցեալք սպիտակ պատմուճանօք եւ արմաւենի 'ի ձեռս իւրեանց։ բն

Ոմանք զանազանապէս մեկնեն զտեղիս. մեկ
բայց ստոյգն այս է. զի մեծ խումբս այս զժողովս ամենից սրբոց ցուցանէ որք այժմ զմայլին տեսութեամբն այ̅։ Սպիտակ պատմուճանքն նոցա է մաքուր վարքն, եւ արմաւենին յաղթանակն։ Ոչ ոք կարէր թուել այսինքն վասն յոյժ բազմութեանն։ Ասեն պատմաբանքն թէ, միայն 'ի ժամանակի դիոկղետիանոսի կայսերն, յամենայնում ամսոջ ԺԷ հազարք հաւատացեալք մարտիրոսանային։ Արդ, հալածանքն դեոկղետիանոսինն եկաց զամս տասն, զորս եթէ թուեսցես տեսցես որքան է լինելոց թիւն մարտիրոսաց։

10․ Եւ աղաղակէին ձայնիւ մեծաւ ա-
քն սելով․ փրկութիւն այ մերում, որ նստի
՚ի վե՛ր աթոռոյն․ և գառին այ։ Հ․ Ծ․ այսինքն
ա͞ծութեանն․ Եւ գառին, այսինքն մարդ-
կութեանն։

բն 11․ Եւ ա͞մ հրեշտակք կային շուրջ զա-
թոռով․ զերիցամբք, և զչորեւք կենդանեա-
քն, և անկան յանդիման աթոռոյն ՚ի վե՛ր
երեսաց իւրեանց, և երկիր պագին այ։
12․ Ասացին, Ամէն․ Օրհնութիւն և
պայծառութիւն, գոհութիւն, իմաստու-
թիւն, և շնորհակալութիւն, պատիւ և
զօրութիւն, և հզօրեղութիւն այ մերում,
յաւիտեանս յաւիտենից Ամէն։
13․ Եւ պատասխանեաց մինն ՚ի յերիցան-
ցըն և ասաց ցիս․ սոքա որք զգեստաւորե-
ցեալք են պատմուճանօք սպիտակօք, ովք
են, կամ ուստի գան։
14․ Եւ ասացի նմա․ Տէ՛ր իմ, դու գիտես․
Եւ ասաց ինձ․ սոքա են որք եկին ՚ի
վշտէ մեծէ, և լուացին զպատմուճանս
իւրեանց և սպիտակացուցին արեամբ գա-
ռին։

մեկ Հրդ, եթէ մարտիրոսքն հեղին զարիւնս
իւրեանց, զի արդ ասի թէ զպատմուճա-
նս իւրեանց լուացին արեամբ գառինն։
Պատասխանի, իրաւի որ մարտիրոսքն զիւ-
րեանց արիւնն հեղին, բայց սակայն, ե-
թէ այս արիւնս մարտիրոսաց ո՛չ հեղանից
իւր վաան սիրոյն, չարչարանացն և աքեանն


քն

Օլ իշխանլը՛րտա վարտըլար վէր Թանէսի գայսէրիտէ, վէ արխատա գէսի կինէ գայսէրիյէ եագըն պիր անապատտա պուլունուլար: Վէ նամէյի կէօստէրիպ տաՀէթ էտինճէ, արխատադէս անապատտան էնմէք իստէմէտի: Իմա քի՝ ճիւմլէ չէհիրլիսի ճէմ օլուպ տէտիլէր քի՝ սէնին տաղտա աղօթք էթտիկինտէն, օրայա վարտըղըն էֆզալ տըր• զէրէ Հօք քիմ սէնին իսլաՀ օլմասընա սէպէպ օլուրսունուզ: վէ տաՀա պունա քէզալիք սէօզլէրիլէ՝ րիզա էտիպ կէօնտէրտիլէր: Վէ սէլամէթ իլէ կէլիպ Թագաւորուն եանընա տախիլ օլտուքտա, ազիմ մուՀապպէթլէր իլէ տիլշատ օլտուլար: Վէ օնտան սօնրա՝ Թագաւոր օ իքի ազիզլէրի ալըպ, երանելի ս̃ւ գրիգորու արամաղա Չքտը: Թա՛ քի կէլիպ էրզինկեան նյեալէթինտէ պիր անապատտա

պուլտուլար ։ Վէ չօք սէվինճ-
լէր տըլաշըշլար էթտիքտէն սօն-
րա՝ Թադաւորը Նիխաղ էյլէտի քի,
ո՛վ Երանելի Սբ. Հայրապետ՝ չիւնքի
պիզիմ իլէ տուրմաղա րիզա օլմա-
տըն, վէ պու տաղըստանլարտա
սաքին օլմաք մուրատ էյլէտին.
վէ պիզի կիւլ ճէմալընկտէն վէ
ադիզ ճէվապլարընկտան հասրէթ
դօյտուն, իմտի րիճա էտէրիզ քի՝
պա՛րի սէնին պու արիստակէս
էվլատընը սանա պէտէլ՝ պիզէ հո-
գևոր առաջնորդ էյլէյէսին։
Երանելի Սբ. Գրիգոր՝ Թգւորուն
րիճասընը գապուլ էտիպ՝ օլ իզ-
զէթլի արիստակէս էվլատընը՝
հայոց իւզէրինէ քէնտիսինէ պէ-
տէլ եպիսկոպոսապետ ճէռնա-
դրիլ էյլէտի ։ Վէ օլ արիստա-
կէս սուրբ հայրապետ՝ իզէթլի
փէտէրինէ ույկուն օլուպ՝ պաշ-
լատը ալլահըն քէլամընը ճիւմ-
լէսինէ վաղ էթմէկէ։

ՂԷ Ջ

'քի, եւ ոչ ինչ արժէր արեանն նոցա։
15. Վ̃նկ կան առաջի աթոռոյն այ̃, և ըն
ծառայեն նմա տիւ և գիշեր 'ի տաճարի
նորա։ և որ նստի յաթոռ, բնակեսցէ 'ի
վերայ նոցա։
Բնակեսցէ 'ի վերայ նոցա, այսինքն յա մեկ
տուկ կերպիւ իւիք որպէս յաշտարակէ
հայեցի 'ի նոսա առ 'ի նախախնամել։
16. Ո՛չ քաղցիցեն և ո՛չ ծարաւիցեն և ևս. ըն
ո՛չ ևս անկցի 'ի վերայ նոցա արև, և ո՛չ
տօթ ինչ.
17. Քանզի, գառն որ 'ի մէջ աթոռոյնէ
հովուեսցէ զնոսա, և առաջնորդեսցէ զնո̃
առ աղբիւրն ջուրցն կենաց. և ջնջեսցէ
ա̃ծ զա̃մ արտասուր յաչաց նոցա։

## Գլուխ Ը. ԻԸԴ.

Եւ մինչ եբաց զկնիքն է̃ երորդ, եղև ըն
լռութիւն յերկինս որպէս կէս ժա
մու։
Է.րդ, է̃ երորդ կնիքն ցուցանէ զժամա մեկ
նակն որ զկնի մահուանն նեռանն մինչև
ցգալուստն Ք̃ի 'ի դատաստան. Զի զկնի
սատակմանն նեռանն մեծ խաղաղութի̃
է լինելոց եկեղեցւոյն Ք̃ի։ Բայց լռու
թիւնս այս ծանուցէ կէս ժամ այսինքն
փոքր ժամանակ։ քանզի յետ մահուանն
նեռին իսկոյն գալոցէ Ք̃ս 'ի դատաստան։
2. Եւ տեսի հրեշտակս է̃. որք կային ըն

առաջի

առաջի ա՟յ. և տուան նոցա է փողք.

մեկ Եյոթնեկք է հրեշտակքս ցուցանեն հա
սարակաւար զա՟մ քարոզատուս վարդա
պետս, է շնորհօք հոգւոյն սրբոյ զար
դարեցեալս. Սոքա կան յանդիման ա՟յ.
(Զի պատրաստք են առնելոյ զկամս ա՟յ.
Տուան սոցա է փողք) այսինքն ա՟մ կարո
ղութիւն քարոզելոյ 'ի է շնորհացն հոգւ
ոյն սրբոյ.

բն 3. Եւ այլ հրեշտակ եկն և եկաց առա
ջի սեղանոյն, և ունէր զխնկանոց ոսկեայ.
և տուաւ նմա խունկ բազում, զի մատուս
ցէ զաղօթս ամենից սրբոց 'ի վերայ ոսկէ
ղէն սեղանոյն առաջի աթոռոյն ա՟յ.

մեկ Երդ, հրեշտակս այսէ ք՟ս. և սեղաննէ
խաչն. յորում զինքն ա՟յ հօր մատոյց պա
տարագ առ ի քաւել զմեղս մեր. Ոսկէղէն
բուրվառնէ մարմին նորա. որ ա՟ծ այնով
ձառագայթիւ որպէս զոսկի փայլեաց.
բարւոք ասի բուրվառ, զի լի է անուշա
հոտութեամբ, զոր հոտոտաց հայրն ա՟ծ 'ի
նմին. Եկաց հրեշտակս այս առաջի սեղա
նոյն յայնժամ, յորժամ առ 'ի կատարել
զկամս ա՟յ հօր. յօժարաբար ել ի խաչ.
Ունէր 'ի ձեռի իւրում զբուրվառ ոս
կեայ. զի ունէր զկարողութիւն դնելոյ
զանձն իւր, և դարձեալ առնլոյ զնա.
Եւ տուան նմա խունկք բազումք. և թէ
զինչ ցուցանեն խունկքս այսոքիք, յետոյ
ասասցուք. Զի մատուսցէր զաղօթս ամե


նից

նից սրբոց 'ի վերայ ոսկեայ սեղանոյն, որ կայ առաջի աթոռոյն ա՟յ․ իբրեւ աղօթք սրբոցն զորս վասն մեր մատուցանեն, եթէ ոչ գնիցեն 'ի բուրվառն այն, այսինքն եթէ ոչ գնիցեն 'ի ք՟ս․ և 'ի վերայ ոսկեղէն սեղանոյն, այսինքն 'ի խորհուրդ պատուական խաչին, իբրեւ ոչ լցեն հաճոյք հօրն երկնաւորին․ վ՟նկ ս՟բ եկեղեցին ա՟յ, զա՟մ վերջն աղօթից իւրոց առ հայրն ա՟ծ եզրափակէ այսու բանիւ․ Տէրամբ մերով յ՟սիւ ք՟սիւ ։

4․ Եւ ել ծուխ խնկոցն յաղօթից սրբոց բն
'ի ձեռանէ հրեշտակին առաջի ա՟յ ։

Այսինքն համեղագոյն իղձն սրբոցն և մեկ
աղօթք նոցա 'ի ձեռն հրեշտակին, այսինքն ք՟ի հօր ա՟յ մատուցեալ․ և ել առաջի ա՟յ այսինքն հաճոյ եղև ա՟յ․ Եթէ կամիս իմանալ թէ որպէս խունկն զաղօթքն նշանակէ․ հարց ցդաւիթ․ որ ասէ․ Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տ՟ր ։

5․ Եւ էառ հրեշտակն զոսկեայ բուր բն
վառն, և ելից զնա 'ի հրոյ սեղանոյն, և եարկ յերկիր․ և եղև որոտումն, ձայնք․ և փայլատակումն և շարժումն մեծ ։

Այսինքն, յորժամ ք՟ս տ՟րն մեր զմարմինն մեկ
իւր կամաւոր պատարագ մատոյց հօր ա՟յ վասն մեր 'ի խաչին, և 'ի հրոյ սեղանոյն այսինք այրեցմամբ և վշտօք խաչին և չարչարանացն ելից զբուրվառն, այսինքն զմար



մինն

մինն իւր, յետոյ եարկ զնա յերկիր, այս
ինքն կամեցաւ թաղել յերկիր. յայնժամ
եղև որոտումն, ձայնք. և փայլատակումն,
և շարժումն մեծ: Համայնքս այսոքիք ե-
ղեն յաւուր չարչարանացն տն:

բն 6. Եւ է հրեշտակքն ունէին զէ փողսն
պատրաստեցին զինքեանս առ 'ի հարկա-
նել:

մեկ Այսինքն համայնք քարոզատուք նր աւե-
տարանին պատրաստեցան առ 'ի քարոզել:

բն 7. Եւ առաջին հրեշտակն եհար զփողն,
և եղև կարկուտ, և հուր, և արիւն խառ-
նեալ և անկաւ յերկիր. և երրորդ մասն եր-
կրի այրեցաւ, և երրորդ մասն ծառոց այ-
րեցաւ, և ամենայն դալարի խոտ այրեցաւ:

մեկ (Առաջին հրեշտակն յայնժամ եհար զփողն
այսինքն յորժամ առաքեալքն և առաջինք
աշակերտքն քի քարոզեցին 'ի հրէաստան
Կարկուտն նշանակէ զարտաքին հարուա-
ծս որովք հրէայքն հարուածէին զքրիս-
տոնեայս. և հուրն նշանակէ զներսի նա-
խանձն փարիսեցւոցն, որով այրեալք տոչո-
րէին զինքեանս: Արիւնն ցուցանէ զխա
տաբարոյութիւնն, որով հեղին զարիւնս
սրբոց: Եւ համայնք այսոքիւք պատահե-
ցան հաւատացելոցն, յորժամ առաջին
հրեշտակն փողեաց, այսինքն յորժամ առա-
ջինք աշակերտքն սկսան քարոզել. Երկիրն
և ծառն ցուցանեն զմարդս: երկիր պաս
մարդս վասն հող գոլոյն, և ծառ կոչի վս
անկայուն

անկայուն գոլոյն։ Իսկ խոտն որ է կանաչ և կենդանի, ցուցանէ զնոսա, որք ունին զկենդանի հաւատն։ Արդ, բոլոր ժողովք մարդկան յերից կայանայ, այսինքն յան հաւատից, 'ի հրէից, և 'ի քրիստոնէից. ուրեմն ազգն քրիստոնէից է երրորդ մասն մարդկան. Արդ, երրորդ մասն երկրի և ծառոց այրեցան. աստ երկիրն և ծառն ցուցանէ զքրիստոնեայս ըստ որում են մարդ հասարակ ընդ այլադաւան մարդկանց, զի և ս անհաւատքն են մարդիկք, բայց մինչ ասէ. Երրորդ մասն. ևս մինչ ասէ դալարի խոտ, զյատուկ քրիստոնեայս ցուցանէ, որք են կանաչ վասն ուղ հաւատոյն. Սոքա կիզեցան հրոյն հալածանաց և նեղութեանց։ Եւ թէպէտ այրեցան, սակայն ո՛չ սպառեցան, այլ որպէս ոսկի և արծաթ փորձեալք մաքրեցան։ Զայսմանէ յառաջագոյն գուշակեաց ած 'ի ձեռն զաքարիայ մարգարէին և ասաց. ժգ գլ. Ասէ տր զօրութեանց, հա՛ր ըզ հովիւն, և ցրուեսցեն ոչխարքն, և դարձուցից զձեռն իմ առ մանկտիս։ Եւ եղիցին յամ երկիր ասէ տր։ մասունք երկուք 'ի նմին ցրուեսցին և պակասեսցին. և ածից զերրորդ մասն 'ի հուր. և այրեցից զնոսա որպէս այրի արծաթն։ Ահա տես, զի առաջին և երկրորդ մասն, այսինքն անհաւատքն հրեայքն կործանին և պակասին բայց երրորդ մասն այսինքն քրիստոնեայքն

այրին, բայց ոչ այրին որպէս շիւղ որ սպառեալ ոչնչանայ, այլ որպէս արծաթ փորձեցեալք մաքրին:

բն 8. Եւ երկրորդ հրեշտակն փողեաց. եւ որպէս զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ ՚ի ծով, եւ եղեւ երրորդ մասն ծովու արիւն:

մեկ (Երկրորդ հրեշտակն ցուցանէ զերկրորդ կարգն քարոզողաց. զի զկնի սպանմանն նախկնոց քարոզողացն մարտիրոսեցելոցն, եկին այլք աշակերտք Ք͞ի եւ սկսան քարոզել որպէս զառաջինսն: Սոքա մինչ փողեցին, լեառն մի մեծ հրակէզ անկաւ ՚ի ծով) լեառն է սատանայն, մեծ ասէ վ͞ն հպարտութեան եւ մեծաարութեան: Հրակէզ ասէ նախ ոչ միայն ՚ի դժոխս, այլ եւ յոր եւ երթայ զհուր դժոխոցն ընդ ինքեան տանի: Երկրորդ հրակէզ ասէ զի այրեցար նախանձու: Անկաւ ՚ի ծով (ծովն է աշխարհս այս որ է լի հողմով փորձութե͞ն, եւ ալէկոծութեան մեղաց: Եւ երրորդ մասն ծովու եղեւ արիւն) այսինքն երրորդ մասն որք են քրիստոնեայքն, մարտիրոսացան. զի որպէս նախկինքն քրիստոնեայք վասն առաջնոյ քարոզութեանն. սոյնպէս եւ յետինք քրիստոնեայքն վասն երկրորդ քարոզութեան երկրորդ քարոզատուացն մարտիրոսացան: Եւ այս արար լեառն այն որ անկաւ ՚ի ծով, այսինքն սատանայն:

բն 9. Եւ սատակեցաւ երրորդ մասն լողակաց որոցն էր շունչ կենդանի, եւ երրորդ



մասն

մասն նաւուց կորեաւ։ (Նողակն ցուցանէ Մեկ
ըկրօնաւորս, եւ նաւն զեկեղեցականս առաջ
նորդս․ զի եւ բազումք 'ի սոցանէ յաւէտ
հալածանաց ուրացան զՔ̄ի հաւատն։ Ապ̄
նղիսէ կառ եւ կառավար կոչէր զեղիա ա-
սելով․ Հայր իմ, կառք իսրայէլի եւ կա-
ռավար նորա։ Ապ̄ եւ աստ առաջնորդք
եկեղեցւոյն նաւ կոչին, զի որք հանգոյն
նաւի պարտէին զայլս 'ի ծով աշխարհէս
հանելով հասուցանել 'ինաւահանգիստն
երկնից, ինքեանք նաւաբեկեալք կորեան։
10։ Եւ երրորդ հրեշտակն փողեաց, եւ Բն
անկաւ աստղ մի մեծ յերկնից բորբոքեց
եալ իբրեւ զղամբար։ եւ անկաւ յերրորդ
մասն գետոց եւ աղբերց (Երրորդ հրեշ Մեկ
տակն է երրորդ կարգն քարոզողաց, որ
քարոզեցին ընդդէմ հերետիկոսաց։ Եւ ան
կաւ աստղ մեծ յերկնից բորբոքեցեալ որ̄պ
զղամբար) Անկաւ յերկնից (այսինքն 'ի միու-
թենէ եկեղեցւոյ վորաւետարան երկինք
կոչէ․ նմանէ արքայութիւնն Այ̄ ուսուցա
նի արկեցելոյ 'ի ծով․ եւ այլն։ Անկաւ աստղ
մի մեծ) այսինքն արիոս, որ յոյժ մեծ էր
յաչս իւր եւ յաչս իւրայնոց․ Հրաբորբոք
(այսինքն հրով նախանձու։ Որ̄պ զղամբար)
այսինքն որքան զայլս չար աղանդոյն իւ-
րով բորբոքեաց, այնքան զինքն հրոյ̄
դժոխոց սպառեաց։ Անկաւ յերրորդ մասն
'ի գետս եւ 'ի յաղբիւրս ջուրց (Աղբիւրն
ցուցանէ զԱյ̄ծայինն գրեանսն, որք զընթեր


ցողսն

ցօղն զովացուցանեն։ Եւ գետքն որք յաղբերէն բղխին, ցուցանեն զվարդապետութիւնն վարդապետաց, զոր յա̃ծ աշնչէն առնուն։ Արդ, յերրորդ մասն աղբեր և գետոց անկաւ աստղն այն, այսինքն արիոս) Զի առ ՚ի հաստատել զմոլորութիւնն իւր, թէպէտ ո՛չ զբոլորն, սակայն բազում տեղիս ա̃ծ աշունչ գրոց չարաչար մեկնեաց, և զվարդապետաց խրատն արհամարհեաց։

բն 11. Եւ էր անուն աստեղն դառնութի̃ն, և բազումք մեռան ի դառնութէ̃ ջուրցն։

մեկ (Այսինքն արիոս և արիոսականքն զմեծ մասն ջրոյն, այսինքն ա̃ծ աշունչ գրոցն չարաչար մեկնելով դառնացուցին։ և որք ըմպեցին ՚ի ջրոյն, այսինքն որք հետևեցան չար մեկնութեանն, մեռան հոգւով։ Զի ոչ ինչ այնքան սպանանէ զհոգին մանաւանդ պարզամտաց, որքան չարաչար զա̃ծ աշունչ գրոց մեկնութիւնն։

բն 12. Եւ չորրորդ հրեշտակն եհար զփողն և հարաւ երրորդ մասն արեգական։ և երրորդ մասն լուսնին, և երրորդ մասն աստեղաց։ և խաւարիւր երրորդ մասն նոցա։ և ոչ տայր զլոյս մասն երրորդ աւուրն։ և

մեկ ո՛չ գիշերոյն նմանապէս։ Չորրորդ հրեշտակն է չորրորդ կարգ քարոզողացն որք զկնի երրորդ քարոզողացն սկսան քարոզել զկնի արիոսին։ Արեգակն ցուցանէ զկաթուղիկոսս, և եպիսկոպոսս։ Լուսինն որ

զլոյս իւր յարեգականէ առնու, ցուցանէ
զատորնագոյնս եկեղեցականսն, որք զկարգ
և զաստիճանս 'ի վերոյ աստեղացն առնուն
որպիսիք են կրօնաւորք, քահանայք և սար
կաւագք։ իսկ աստեղքն են աշխարհականք
ժողովուրդքն։ Արդ, բազումք 'ի կաթու
ղիկոսաց 'ի քահանայից, և 'ի յաշխարհակա
նաց գոլով չարք և կեղծաւորք զինքեանս
'ի հրեշտակ լուսոյ, գոլով հպարտք ։ և ա-
գահք. 'ի խոնարհ և յազատ այլս կերպա
ւորէին. և գոլով չարաճճիկք, զինքեանս
զարս պարկեշտս, և առաքինիս։ Ձևացու
ցանէին։ ուստի առնուին 'ի մարդկանէ
զփառս և զպատիւ։ Իսկ յորժամ չորրորդ
հրեշտակն փողեաց։ այսինքն յորժամ չոր
րորդ քարոզատուքն քարոզեցին ընդդէմ
կեղծաւորացն, բացեալք յայտնեցան կեղ
ծաւորութիւնք նոցա, և կորեաւ փառք
և պատիւ նոցա, և անունք նոցա որք նախ
որպէս զարեգակն. զլուսին, և զաստեղս
փայլէին, խաւարեցան։ Ո՛չ տային լոյս տուըն
ջեան, այսինքն ոչ ևս հաւատացին նոցա
մեծամեծք և իշխանք. և ոչ ևս գիշերոյ,
այսինքն ոչ ևս փոքունք և ռամիկք։
13. Եւ տեսի, և լուայ զձայն արծուոյ բն
միոյ թռուցելոյ 'ի մէջ երկնից որ ասէր
'ի ձայն մեծ. վա՜յ, վա՜յ, վա՜յ, որք բնա
կեալքեն յերկրի վասն այլոց ձայնից երից
հրեշտակացն, որք զփողսն հարկանելոց
են։ Արծուիս այս ցուցանէ զոմն 'ի մեկ

հրեշտակաց, որ մինչ ետես զի յօհաննէս
կայր զարմացեալ եւ սոսկացեալ վասն չորից
վերոյ ասացելոց իրացն, եկն հրեշտակն եւ
ցյօհաննէս ասէ· դու ո՛վ յօհաննէ, սոս
կացար զի տեսեր զայսոսիկ, բայց քան
զայսոսիկ սոսկալիս ես տեսանելոց, յոր
ժամ գ̃ մնացեալք հրեշտակքն փողեսցեն

## Գլուխ իններորդ·

բն Եւ հինգերորդ հրեշտակն փողեաց,
եւ տեսի զի աստղ մի անկաւ յերկնից
յերկիր, եւ տուաւ նմա բանալի գբոյն
մեկ անդնդոց։ (Աստղս այսէ Մարտինոս լո
թերն, որոյ հետեւողքն լօթերան կոչին։
Ա անկաւ յերկնից) այսինքն յեկեղեցւոյն
Քրիստոսի, յորում առաջմէ որպէս աստղ վառ
դապետութեամբ եւ ուղղադաւան հաւա
տով փայլիւր։ (Անկաւ յերկնից ՚ի յերկիր)
Օ ի անկեալ յերկնից այսինքն յեկեղեցւոյն
եւ ՚ի մէջ կարգէն յորում եկաց կրօնաւոր
զամս բազում, առաւել սիրեաց զերկրա
ւորս, քանթէ զերկնայինսն։

բն 2· Եւ եբաց զգուբն անդնդոց· եւ ելա
նէր ծուխ որպէս զծուխ հնոցի մեծի, եւ
մեկ խաւարեցաւ, արեգակն եւ օդն։ (Եբաց
զգուբն անդնդոց) այսինքն զպիղծ բերանն
իւր։ Եւ ելանէր ծուխ, որպէս զծուխ
հնոցի մեծի) այսինքն հայհոյութիւն առ
աստուած եւ առ սուրբ եկեղեցին։ Եւ խաւարեցաւ


արեգակն

արեգակն և յօդն 'ի ծխոյ գբոյն) Արեգա
կն ցուցանէ զիշխանսն, և յօդն նշանակէ
զստորնագոյնսն ժողովրդոց· զի բազումս
'ի մեծամեծ իշխանաց և զստորնագունից
խաւարեցոյց զհոգիս·

3· Եւ 'ի ծխոյ գբոյն ելանէր մարախ յեր կիր, և տուաւ նոցա իշխանութիւն, որպ ունին զկարողութիւն կարիճք երկրի·) — բն

'Ի ծխոյ գբոյն) այսինքն 'ի հերետիկոսութէ լօթէրին բազումք յառաջ եկին հերետիկոսք, որք որպէս զմարախ հպարտութեամբ վերանան, և ցանկութեամբ երկրաւորացս յերկիր իջանին և թաւալին 'ի փափկութե երկրի: Տուաւ նոցա կարողութիւն) այսինքն 'ի թոյլ տուութէն այ· Որպէս ունին զկարողութի կարիճք երկրի) Զի որպէս կարիճն յառաջ կոյս կակուղէ և ագովն խայթէ, սոյնպ ևս հերետիկոսքն բերանով շողոքորթեն, բայց նենգութեամբ սպանանեն զհոգին: — մեկ

4· Եւ հրամայեցաւ ոչ վնասել խոտոյ երկրի, և ոչ ևս ամ կանաչոյ, ոչ ևս ամ ծառոյ, բայց միայն մարդկան երկրայնոց, որք ոչ ունին զկնիքն 'ի վերայ ճակատուց իւրեանց:) — բն

Խոտն և կանաչն նշանակէ զհամանայս այնոսիկ, որք ունին զկանաչ և զկենդանի հաւատն, այլ ոչ զմեռեալ հաւատն որպիսի է հաւատն մեղաւոր քրիստոնէից· Իսկ ծառն ցուցանէ զայնոսիկ, որք յուսովն երկնից, հանգոյն ծառոց առ — մեկ


նեն

նեն զպտուղ բարի։ Նոցա ոչ կարեն վնա-
սել հերետիկոսքն։ զի սիրականքեն ա̃յ։
Եւ նոքա ունեն զկնիքն, որք ունին զհա-
ւատամն։

բն 5· Եւ տուաւ նոցա զի մի՛ սպանցեն զն̃ս,
այլ զի տանջեսցեն ամիսս հինգ։ և չար-
մեկ չարանք նոցա իբրև զխայթ կարճի։ (Մի՛
սպանցեն զնոսա այլ տանջեսցեն) այսինքն
փորձեսցեն, բայց հաւատոյն և հոգւոյն
վնասել մի՛ կարասցեն։ Ա՛միսս հինգ) այս
ինքն ՚ի մատղաշութեան, ՚ի տղայութեան,
՚ի պատանեկութեան, ՚ի յերիտասարդութե̃,
և՚ի ծերութեան։ Նաստի է ամիսն ցուցա
նէ բոլոր կեանքն մարդոյ, որ այսոքիւք
հնգիւք տիօք կայանայ։

բն 6· Եւ յաւուրսն այնոսիկ խնդրեսցեն մար
դիկ զմահ և ոչ գտցեն։ և ցանկասցին մե-
ռանիլ, բայց փախիցէ ՚ի նոցանէ մահն։)
Բազումք քրիստոնեայք մինչ տեսին զմե
մեկ ծամեծ անձկութիւնս զորս եկեղեցին
կրէր ՚ի հերետիկոսաց, տենչային մեռա
նիլ և մարտիրոսանալ. որպէս պօղոս ասէր
Տենչամ անջատիլ ՚ի մարմնոյս և լինիլ ընդ
Ք̃ի, բայց ոչ կարէին մեռանիլ, զի ա̃ծ
պահէր զնոսա առ ի ջատագովել զհաւատն
ուղղափառ։

բն 7· Եւ նմանութիւն մարախոցն նմանու
թիւն ձիանց պատրաստեցելոց ՚ի պատե
րազմ. և ՚ի վերայ գլխոց նոցա իբրև ըզ
պսակ նմանեալ ոսկւոյ. և երեսք նոցա

 իբրև

իբրեւ զերեսս մարդոյ) Նախ զհերետիկոսս [Մեկ]
նմանեցոյց մարախոյ, յետոյ զնոյն մարախն
նմանեցուցանէ ձիոյ։ զի լիրբքեն հերե-
տիկոսքն հանգոյն ձիոյ, եւ պատրաստք առ
՚ի ընդդիմանալ ճշմարտութեան, բայց միշտ
յաղթահարին։ Ունին ՚ի վերայ գլխոց
իւրեանց իբրեւ զպսակ նմանեալ ոսկւոյ)
Ոչ ունին զճշմարիտ պսակոսկւոյ, վնկ ա-
նէ իբրեւ, եւ նմանեալ։ զի որքան հակա
ճառեն եւ յաղթահարին, ոչ ունին զինքեա
նս յաղթահարեցեալս, այլ որպէս յաղ
թողք պարծին։ Երեսք նորա նմանին ե-
րեսաց մարդոյ) զի արտաքուստ են որպէս
ոչխարք, բայց ՚ի ներքուստ գայլքեն յա
փշտակողք։

8. Եւ հերք նորա իբրեւ զհերս կնոջ. եւ [Բն]
ատամունք նորա իբրեւ զառիւծուց) Հերք [Մեկ]
նորա հերք կանացին) զի կանացի փափկու
թեամբ պաճուճին) Ատամունք նորա իբրեւ
զառիւծուց) Ատամունք առիւծուցն հո
տին, եւ հերետիկոսութիւնն հերետիկոսա
ցն, ոչ միայն ապականեն զհոգին, այլ եւ նե
խեցուցանեն առաջի այ։

9. Եւ ունէին զզրահս իբրեւ զզրահս
երկաթիս. եւ ձայն թեւոց նորա իբրեւ ըզ [Բն]
ձայն կառուց ձիոց բազմաց, որք արշա
ւեն ՚ի պատերազմ) Զրահն երկաթի ցու
ցանէ զխստասրտեալ յամառութիւն ՚ի մոլո [Մեկ]
րութիւնս։ Ձայնք թեւոց նորա իբրեւ ըզ
ձայն կառուց) բազում եւ զանազանք կառք

զզանազան ձայնս և զզանազանս ձմռունս
արձակեն, սակայն մի է դիտաւորութիւն
նոցա, այսինքն պատերազմել ընդդէմ ընդ-
դիմակայից ։ Այլ ևս բազումք հերետիկոսք
տարաձայնին խմբմբանց վասն զանազան ա-
ղանդոց նոցին, բայց յընդդիմանալն եկե-
ղեցւոյն միաձայնին ։

բն 10. Եւ ունէին զագիս ըստ նմանութեան
կարճաց, և խայթոց յագիս նոցա, և ունէ-
ին զիշխանութիւն չարչարել զմարդիկ ա-
միսս հինգ ։

11. Եւ ունէին զթագաւոր 'ի վերայ իւ-
րեանց զհրեշտակն անդնդոց որոյ անունն
եբրայեցերէն աղբադոն, որ կոչի 'ի հայ
մեկ բարբառ կործանիչ ։) Հերետիկոսաց թա-
գաւորն է սատանայն դժոխոց, որոյ ջանք
նէ զամենեսեան կորուսանել ընդ ինքեան.

բն 12. Ահաւասիկ վայ միեանց, և վայք եր-
մեկ կուք գալոցք են) Վայ միեանց) այսինքն Ե
երորդ հարուածն. Ե երորդ հրեշտակին ։
Եւ վայք երկուք գալոցք են) այսինքն Բ
հարուածքն Զ երորդ և Է երորդ հրեշտա-
կին ։

բն 13. Եւ Զ երորդ հրեշտակն փողեաց. և
լուայ զձայն մի 'ի չորից կենդանեացն սե-
ղանոյն ոսկեայ, որ է առաջի աչացն Այ.)
մեկ Ձայն մի է ձայնն քրիստոնէական վար-
դապետութեանն) Ձայնս այս ելանէ 'ի չո-
րից կենդանեացն ոսկեայ սեղանոյն) այս-
ինքն 'ի չորից աւետարանացն Քի, որք ոս-

կեայ սեղան։ Սեղանս այս ոսկի ասի, վասն աստուածութեան պայծառութեան։ Այս առաջի աչացն աստուծոյ. զի միշտ միջնորդէ և բարեխօսէ առ հայր վասն մեր։

14. Զի ասէր ցհրեշտակն զ՟ երորդ որ ունէր զփողն. Արձակեա՛ զչորս հրեշտակսն, որք կապեցեալք կան ՚ի մեծ գետն եփրատայ) Չորք հրեշտակքնեն համայնք դևք և սատանայք, որք ՚ի չորս կողմն աշխարհիս գտանին։ Որքս կապեցան ՚ի գետն եփրատայ. զի յորմէ հետէ ք՟ս հաստատեաց զմ՟ր ջուրն մկրտութեան, կապեցաւ կարողութիւնն սատանայի, զի ոչ կարէ այնքան վնասել, որքան կարէր նախ քան զգալուստն ք՟ի և նախ քան զմ՟ր մկրտու՟ն։ Եւ յաւուրսն նեռին արձակեսցին, այս ինքն ունիցին զկարողութիւն վնասելոյ, որպէս ունէին յառաջն. Եւ, բանն որ ասաց Արձակեա՛. կամի ասել թէ. Ազդեա՛ աշխարհի զապագայ արձակումն նոցա։ բն

մեկ

15. Եւ լուծան չորք հրեշտակքն, որք պատրաստք էին ՚ի ժամ և յօր, և յամիս, և ՚ի տարի, զի սպանցեն զերրորդ մասն մարդկան։ բն

Եւ լուծան) այսինքն լուծցին յաւուրսն նեռան. Պատրաստք ՚ի ժամ, յօր, յամիս, և ՚ի տարի) այսինքն պատրաստք եղիցին վնասել միշտ և յամ՟ն ժամ հոգւոյ և մարմնոյ մեկ

Երրորդ մասն մարդկան) այսինքն հաւա
տարմաց և ճշմարիտ քրիստոնէից, որք
յայնմիկ ժամանակի հազիւ երրորդ մասն
մարդկան ճշմարիտ քրիստոնէից գտցի ըստ
բանին տ̃ն որ ասէ. Բազումք են կոչեց
եալք, և սակաւքեն ընտրեցեալք.

բն 16. Եւ համարք հեծելոց զօրաց նոցա
բիւրք բիւրուց և հազարք հազարաց լո
ւայ զթիւ նոցա.

մեկ Հեծեալքնեն սատանայք և ձիանքն նե
ռայինքն և հերետիկոսքն.

բն 17. Եւ տեսի ձիս 'ի տեսլեան և հեծեա
լս 'ի նոսա որք ունէին զրահս հրեղէնս և
յակնթեղէնս հրդեհեալս ծծմբով. և գլ
լուխք ձիոց իբրև զգլուխս առիւծուց.
և 'ի բերանոյ նոցա հուր ելանէր, և ծուխ
և ծծումբ.

մեկ Ձիանքնեն նեռայինքն, հեծեալքն 'ի վ̃ր
նոցա են սատանայքն. Հրեղէն զրահն է
հուր նախանձուն. Յակինթն որ գոյն
կապուտ ունի զգոյն երկնից բայց ոչ է եր
կինք, ցուցանէ զկեղծաւորութիւնս նոցա.
զի թէպէտ չարագոյնք քան զսատա
նայեն լինելոց, սակայն կերպաւորեն
զինքեանս 'ի հրեշտակս լուսոյ. Առնիցեն
զգլուխս առիւծուց. զի գազանաբարոյք
եղիցին յոյժ. ի բերանոյ նոցա ելցէ հուր
նախանձու. ծուխ մոլորութեան. և
ծծումբ զազրալից փառաշոտութեան

բն 18. Եւ 'ի հարուածոցս յայսցանէ մեռա



երրորդ

երրորդ մասն մարդկան, 'ի հրոյ, և'ի ծծմբոյ, և'ի ծխոյ։

Ըստ երկակի իմանի մասն, այսինքն հոգևոր և մարմնաւոր։ մեկ Զի ամբարիշտքն որք հետևեին նեռան, որքա մեռանին հոգւով 'ի հրոյ նախանձուն։ 'ի ծխոյն մոլորութեան. և 'ի ծծմբոյն զազրահոտ ցանկութեանն։ Իսկ մարմնաւորապէս մեռանին և մարտիրոսանան ընտրեալքն այ վասն հաւատոյն քի։ (Երրորդ մասն մարդկան) այսինքն բազումք իմարդկանէ։

19. Զի կարողութիւն 'ի բերանս նոցա է և յագիս նոցա։ և ագիք նոցա 'ի նմանութիւն օձի, որք ունին զգլուխս, և այնու քիւք վնասեն։ բն

Զկարողութիւնս 'ի բերանս նոցանէ։) մեկ զի նեռայինքն ճարտարախօսութեամբ ջանասցեն մոլորեցուցանել, և ստախօսութ(եամբ) խաբել։ Եւ 'ի յագիս նոցա, զի յագիք նոցա 'ի նմանութիւն օձի) Զի նեռայինքն ոչ միայն հակառակեսցին բանիւք և կալով դէմ յանդիման հաւատացելոցն, այլ որպէս զօձ դարանակալք եղիցին։ գլուխ ձիոցն յագիս նոցա) այսինքն, բոլոր դիտաւորութիւնն, և վերջին վախճանն նեռայնոցն, է վնասել հաւատացելոց։ և այս դիտաւորութիւննս և վերջին վախճանն նոց է որպէս ագի նոցա։ Կամ, գլուխ նոցա է յագիս նոցա։ զի հրամանն և կամքն սատանային, որէ գլուխ նոցա, գտցի 'ի դի



տաւորութիւ

տաւորութիւնս եւ 'ի վերջին վախճանն
նոցա որէ յագի նոցա։

բն 20. Եւ այլք 'ի մարդկանէ, որք ոչ մե-
ռան 'ի հարուածոցս յայսցանէ, ոչ ապաշ
խարեցին, եւ ոչ դարձան 'ի գործոց ձեռաց
իւրեանց. յերկրպագութենէ դիւաց եւ
կռոց ոսկեղինաց եւ յարծաթեղինաց. եւ 'ի
պղնձեղենաց, եւ 'ի քարեղինաց, եւ 'ի փայտե
ղինաց, որք ոչ տեսանել կարեն, եւ ոչ լսել
եւ ոչ գնալ։ Եւ ոչ ապաշխարեցին 'ի մար
դասպանութենէ եւ 'ի դեղատուութենէ, եւ
'ի պոռնկութենէ, եւ 'ի գողութենէ իւ-
րեանց։

մեկ Տեսթէ որքան մեծ է լինելոց յաւուրսն
նեռան խստասրտութիւնն մարդկան։ Զի
զայսքան պատիժ եւ զպատուհաս տեսցեն։
զայսքան աւերումն եւ զկործանումն, սակայն
ոչ դարձցին 'ի մեղաց, եւ 'ի չարութենէ, եւ
որպէս զփարաւոն առաւել եւս խստանայ
ցեն յանօրէնութիւնս իւրեանց։

## Գլուխ Ժ.

բն 1. Եւ տեսի զայլ հրեշտակ հզօր,
իջեալ յերկնից զգեցեալ զամպ.
եւ ծիածան 'ի գլուխ նորա. եւ
երեսք նորա որպէս զարեգակն.
եւ ոտք նորա որպէս սիւնք հրեղէնք։

մեկ Հրեշտակս այս ցուցանէ զՔս. որ 'ի յեր
կնից էջ մարդեղութեամբ. Ունի 'ի գլուխ



իւր

իւր ծիածան․ այսինքն զաղեղն․ զի արար
զհաշտութիւն ա՟յ ընդ մարդկան։ Զգե
ցեալ է զամպ․ զի ՚ի ձեռն պաշտօնէից իւ
րոց զաւետարանական ցօղն սփռեաց ընդ
ա՟մ երկիր։ Երեսք նորա իբրեւ զարեգակն
զի լուսո՟վ աւետարանին, լուսաւորեաց
զաշխարհս։ Ոտք նորա որպէս սիւնք հրոյ
Զի եկն արկանել երկիր զհուր սիրոյ։

2․ Եւ ունէր ՚ի ձեռին իւրում զգրքոյկ բն
բացեալ․

Գ․ իրքս այս է գիրքն եօթն կնքով կնքե մեկ
ցեալ․ զոր եբաց գառն․ իսկ յայժմ բա
ցեալ տայ յոհաննու, զի դիւրաւ կարէցէ
ընթեռնուլ։

3․ Եւ եդ զաջ ոտն իւր, ՚իվերայ ծովու բն
և զահեակն, ՚ի վերայ երկրի․ զի տէրէ
ծովու և ցամաքի։ Եւ աղաղակեաց ՚ի ձայն
մեծ, որպէս գոչէ առիւծ։

Այսինքն որպէս զառիւծ գոչէ․ մեղաւո մեկ
րաց զտանջանս սպառնալով․ և արդարոց
զփառս խոստանալով․

Եւ մինչ աղաղակէր, խօսեցան եօթն բն
որոտմունքն։

Այսինքն համաձայնեցան ընդ նմայ եօթն մեկ
դասք սրբոց․ այսինքն հրեշտակաց․ նահա
պետաց․ մարգարէից․ առաքելոց․ մարտի
րոսաց․ վարդապետաց․ և կուսանաց․

4․ Եւ յորժամ խօսեցան եօթն որոտմունք բն
և ես գրելոց էի․ լուայ զձայն յերկնից որ
ասէր․ ցիս․ կնքեա զոր խօսեցան եօթն

որոտմունքն և մի գրեր զնոսա։

մեկ Այսինքն պահեա զոր ասացին եօթն ո֊
րոտմունքն. զի մի լսելով մարդիք զզար
հուրելիսն զոր լուարդ յուսահատիցեն.
Այստէ ուրեմն զի զայլ բազում սարսա
փելիս և զահարկուս ետես և լուաւ Յո
հաննէս, զորս ոչ գրեաց 'ի գիրս այս։

բն 5. Եւ հրեշտակն զոր տեսի որ կայր 'ի
վերայ ծովու. և 'ի վերայ երկրի. համ
բարձ զձեռս իւր յերկինս։

6. Եւ երդուաւ 'ի կենդանին յաւիտենա
նս յաւիտենից. զոր եստեղծ զերկինս և
զորս 'ի նոսին են. և զերկիր զոր 'ի նմա են
զծովս զորս 'ի նմին են. զի այլ ոչ ևս եղի
ցի ժամանակ։

մեկ Յորժամ ոք կամի հաստատել բանիւ զեր
իմն. և կամի թէ հաւատայցեն ամենեքեան
բանիցն նորա. յայնժամ որքան իրն այն
զոր կամի հաստատել մեծ է, այնքան եր
դումն մեծ լինի. Արդ աստ կամի ցու
ցանել մեզ. զի հաւատայցեմք թէ զկնի
ներկայ կենացս այլ ոչ եղիցի ժամանակ
գործելոյ զբարիս. վասն այսորիկ առ 'ի
ազդելոյ մեզ զի մի զժամանակս այս ընդունայն
ծախիցեմք, մեծաւ երդմամբ հաստատէ,
թէ ոչ ևս եղիցի ժամանակ գործելոյ
զբարիս. զկնի ներկայ ժամանակիս. որպէս
նոյն ինքն 'ի տր աւետարանին ասէ. եկես
ցէ գիշեր յորում ոչ ոք գործել կարէ։

բն 7. Այլ յաւուրսն էն երորդ հրեշտակին



մինչ

մինչ սկսեսցէ զփողն հարկանել. կատա
րեսցի խորհուրդն ա՟յ. որպէս աւետարա
նեաց ծառայից իւրոց մարգարէից:

Այսինքն յորժամ գայցէ օրն կատարածի. Մեկ
և գաբրիէլ հարկանիցէ զփողն. յայնժամ
կատարին ա՟մ իրք, զոր խոստացան ա՟մ մար
գարէք կանխաւաց մարգարէութեամբ:

8. Եւ դարձեալ լուայ զձայն յերկնից որ Բն
ասէր ցիս. երթ և առ զգիրն բացեալ 'ի
ձեռաց հրեշտակին որ կա'ի վերայ ծովու
և երկրի:

9. Եւ գնացի առ հրեշտակն. և ասացի
զի տացէ զգիրն ինձ. և ասէ ցիս առ
զգիրս և կեր զդա, և դառնացուսցէ զո
րովայն քո. բայց 'ի բերանս քում եղիցի
քաղցր իբրև զմեղր:

10. Եւ առի զգիրն 'ի ձեռանէ հրեշտա
կին և կերի զնա. և էր 'ի բերանս իմում
որպէս զմեղր քաղցր. և մինչ կերի զնա
դառնացաւ որովայն իմ:

Առ զգիրդ. այսինքն զյայտնութ՟ն գիրս Մեկ
և կեր զդա. այսինքն յոյժ մտադրութ՟բ
ընթերցիր և մտօք որոճեա. Եւ կերի
զնա. այսինքն բարւոք մտադրութեամբ
խուզեալ քննեցի զնա. և 'ի բերանի իմում,
էր որպէս զմեղր քաղցր. Այսինքն յոր
ժամ մարգարէական հոգւով իմացայ զզար
մանալիսն ա՟յ. և զփառս երկնից արքայու
թեան. և զհատուցում՟ն արդարոց միտք
իմ որպէս քաղցերբ մեղերբ. զմայլեցաւ:



Եւ

Եւ որովայն իմ դառնացաւ։ Այսինքն
մինչ 'ի միոյս կողմանէ մտադրութեամբ
քննեցի զժամանակն կատարածի աւուր,
զտառապանս զոր հաւատացեալք կրելո-
ցեն 'ի Նեռանէ, և զանկումն սրբոց 'ի մե-
հաւատոյն. սկսաւ հոգի և սիրտ իմ դառ-
նանալ. զոր օրինակ յորժամ մարդ զհեպ
կամի կլանել. քան զի դառնէ, շաքարով
զերես հեպեն ծածկեն. արդ որ քան 'ի
բերանն է, քաղցր թուի վասն շաքարին
իսկ մինչ կլանէ և երթեալ 'ի յորովայնն հա-
լի. ցուցանէ զդառնութիւն։ Նմին նման
զոր ինչ ետես Յոհաննէս 'ի գիրս յայտնու-
թեան իւրոյ քաղցր էր բանականութեան
իւրում զի կամաւն Այ էին տրամադրեց-
եալք. բայց ահարկուք 'ի նմին գրեցեալք
որ պատահելոցքեն 'ի ժամանակի Նեռուին,
յոյժ դառնագոյնս. այսինքն զարհուրեցու-
ցանելին զգայութիւն մարդկային։

քն II. Եւ ասէ ցիս պատեհէ քեզ. դար-
ձեալ մարգարէանալ. ազգաց հեթանոսաց
և ժողովրդոց. լեզուաց. և թագաւորաց։
ժեկ Այսինքն մինչև ցայժմ մարգարէացար ըզ-
բազում իրս, որք դառնագոյն քեզ թուե-
ցան. բայց այսուհետև ծանուցից քեզ.
զայլ իրս առաւել դառնագունեղս. որք
պատահելոցքեն յաւուրսն Նեռանն. զայս
ցանէ ես պարտիս մարգարէանալ։


Գլուխ

Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. և ասացաւ ինձ արի բն
ա. և չափեա զտաճարն ա̃յ. և զսեղանն. և զերկրպագուսն որք
՚ի նմին։

Եղէգս այս ոչ է գրիչ. այլ գործիք չափոյ, որդ եղէգս այս ըստ որում նմանէր գաւազանի, որ է գործի հարկանելոյ. ցուցանէ զնեղութիւնս. զի այսու գաւազանաւս, չափեցաւ հինն ադամ, մինչ արտաքսեցաւ ՚ի դրախտէն. և այսու գաւազանաւ չափեցաւ նորն ադամ, այսինքն Ք̃ս յորժամ խաչեցաւ։ Սեղանն։ է ջերմեռանդութիւնն քրիստոնէից որ չափի գաւազանակերպ եղեգամբ, այսինքն չարչարանօք և նեղութեամբ։ Ուստի ասէ չափեա ով ոհաննէս զսեղանն. այսինքն զջերմեռանդութիւնն քրիստոնէից. և տես թէ որքան մեծ է. զի ՚ի ձեռն ջերմեռանդութեան, մարտիրոսացան և մարտիրոսանան։ մեկ

բ. Եւ զգաւիթն որ կայ արտաքոյ տաճարին արտաքս ընկեա զնա. զի հեթանոսաց տուաւ։ զքաղաքն սուրբ կոխեսցեն զամիսս խ և բ։ բն

Այսինքն զբախտն. զհարստութիւնն. զգեղեցկութիւն զառողջութիւն. և զայլ ինչ մարմնաւոր բարիս որք են իբր արտաքինք. մի խնդրեր այլ արտաքս ընկեա ՚ի քէն մեկ

զի սոքա արգելեն զջերմեռանդութիւն ,
և ոչ օգտեն հոգւոյ . վասն որոյ գրիգոր
փակին ասէ . ոչ են . արժանիք չափելոյ
գաւիթքն . այսինքն արտաքինք իրքն . չա
փով սրբոց . զի նեղէ դուռն որ տանի 'ի
կեանս . և լայնութիւն ամբարշտաց անպա
տեհ է չափիլ չափովն սրբոց . Զի հեթա
նոսաց տուաւ . այսինքն արտաքին բարու
թիւնք հեթանոսաց վայելէ : զքաղաքն սր
կոխեսցեն . այսինքն զնս եկեղեցին ոտնա
կոխ արասցէ նեռն և նեռասյինքն : զամիսս
քառասուն և երկու : այսինքն . երեք ամի
և կէս .

բն 3. Եւ տացից երկուց վկայից իմոց և մար
գարէասցին . աւուրս հազար երկերիւր
և վաթսուն . զգեցեալք զքուրձ :

մեկ Տացից այսինքն զպաշտօն մարգարէութեա
նս, և ընդ նմին զհոգի ջերմեռանդութե
զբերան և զիմաստութիւն . երկուց վկայ
ից իմոց . այսինքն ենովքայ և եղիայի . և
մարգարէասցին աւուրս հազար . երկու
հարիւր և վաթսուն : Այսինք երեք ամ
և կէս Զգեցեալք զքուրձ : Այսինքն քր
ձազգեացք դան ենովք և եղիա : Սակս որ
զի խստակրօն վարուքն իւրեանց զբար
կութիւնն որ շիջուսցեն : Երկրորդ զի
օրինակօք իւրեանց , զմարդիկ յապաշխա
րութիւն շարժեսցեն :

բն 4. Սոքա են երկու ձիթենիքն . և երկու
ջահագարան . որք կան առաջի որ . յերկրի

 Տնով .

Ենովք և Եղիա. Ձիթենոյ նմանին. նախ մեկ
ոմն Ձիթենին միշտ կանանչ մնայ, սոյնպէս
և նոքա միշտ կենդանիք մնացին. երկրորդ Ձի
թենին, է նշան ողորմութեան. սոյնպէս
և սա. Ենովք և Եղիա, ողորմելով տակաւին
աշխարհիս, աղաչեսցեն զԱծ վասն մեր,
յաւուրսն նեռունն. Եւ երկու Ճրագարանք.

Զի որպէս Ճրագարանքն ցուցանեն մարդ
կան զլոյս մոմին. սոյնպէս և Ենովք և Ե
ղիա ցուցեն զլոյսն աշխարհի. այսինքն
զՔս բոլոր աշխարհիս, քարոզութեամբ իւ
րեանց յաւուրն դատաստանին.

5. Եւ եթէ ոք կամիցի մնասել նոցա. բն
հուր ելցէ 'ի բերանոյ նոցա. և կլանիցէ
զԹշնամիս նոցա. և որք կամիցին մեղանչել
նոցա. այսպէս սատակեսցին.

Հուր ելցէ 'ի բերանոյ նոցա, այսինքն բա մեկ
նիւք իւրեանց. զհուր իջուցանիցեն յերկ
նից. որպէս արար ընդ առն այնմիկ, զոր
աքայաբ առաքեաց առ 'ի ունել զԵղիա.
և ասաց Եղիա ցնա եթէ այր Այ եմ ես
իջցէ հուր երկնից, և կլցէ զքեզ. և եղև
իսկոյն.

6. Սոքա ունին զիշխանութիւն փակելոյ բն
զերկինս. զի մի անձրևեսցէ, աւուր մարգա
րէութեան նոցա: Եւ ունին կարողու
թիւն 'ի վերայ ջուրց. դարձուցանել զնո
յարիւն. և հարկանել զերկիր ամ հարուա
ծովք, որ քանիցս կամիցին.

Յաւուրսն նեռանն. զառաջին հրաշն զոր մեկ

առնելոցեն ենովք և եղիա, է այս։ Ո՛ի
կապեն զերկինս և ոչ տեղասցեն զանձրևս
ուստի ծնցի սով. չքաւորութիւն. և մահ
տարաժամ նեռայնոցն. որպէս այլ անգամ
արար եղիա. գ̃. թ̃գ. ժէ̃ գ̃լխ. Երկրորդ
նշանն եղիցի. զի զջուրն դարձուսցեն յա
րիւն. որպէս արար մովսէս յեգիպտոս։

բն 7. Եւ յորժամ կատարեսցեն զվկայու
թիւնն իւրեանց. գազանն որ ելանէ յան
դնդոց. պատերազմեսցի ընդ նոսա. և
յաղթեսցէ նոցա. և սպանցէ զնոսա։

մեկ Գ. ազանս այս. ցուցանէ զնեռն. յանդն
դոց ելանէ, զի ազգամամբ դիւաց առնէ
զա̃մ. որք են բնակիչք յանդնդոցն դժո
խոց. և խրատովն նոցա սպանցէ զենովք
և զեղիա, և զայլս բազումս։

բն 8. Եւ մարմինք նոցա անկեալ կայցեն 'ի
հրապարակս քաղաքին մեծի, որ հոգևորա
պէս կոչի սոդոմ. և եգիպտոս. ուր և տ̃ր
նոցա, խաչեցաւ։

մեկ Մեծ քաղաքնէ երուսաղէմ քաղաքն. և
սոդոմ կոչէ վասն սոդոմական մեղացն.
որք անդ գործէին. և առաւել գործես
ցեն յաւուրսն նեռին։ դարձեալ յեգիպ
տոս կոչի, վասն կռապաշտութեան, և առ
աւելապաշտութեան որք յաւուրսն նե
ռին. անդ թագաւորեսցեն։ (Ուր տ̃ր ն̃ց
խաչեցաւ) Ա. յսինքն յերուսաղէմ, անդ կս
սպանցէ նեռն. զմարգարէսն և զս̃րբսն ք̃ի։

բն 9. Եւ տեսցեն զնոսա ա̃մ ցեղք. ա̃մ ժո

ղովուրդք • և լեզուք • և ա՟մ հեթանոսք •
զդիս նոցա զերիս աւուրս և կէս • և ոչ
թողցեն, զմարմինս նոցա թաղել 'ի գե
րեզմանի ։

Ենովքայ և Եղիայի մարմինքն անկեալք մեկ
կայցեն • առանց թաղման 'ի հրապարակի •
և համդոյն ք՟ի յարիցեն զկնի երից աւուրց

10 • Բնակիչք երկրի խնդան 'ի վերայ ն՟ց բն
և ուրախասցին • և զընծայս մատուցանեն
միմեանց • զի սոքա բ՟ մարգարէքս տանջե
ցին զնոսա, որք բնակէին 'ի վերայ երկրի

Բնակիչք երկրի են ամբարիշտք հետև մեկ
ողքն նեռին • սոքա ուրախանան վասն մա
հուան • բ՟ մարգարէիցն ։( Որք տանջեցին
զնոսա ։) Այսինքն բանիւք սպառնման • զի
սպառնային զհուր և զայլ պատուհաս ։
զորոց խօսեցաք 'ի թիւն ։ 5

11 • Եւ զկնի երից աւուրց և կիսոյ • հոգի բն
կենաց յա՟յ եմուտ 'ի նոսա • և յոտն կացին
և ահ մեծ անկաւ 'ի վերայ նոցա, որք տե
սին զնոսա ։

12 • Եւ լուան զձայն մեծ 'ի յերկնից որ
ասէր • ելէք այսր • և ելին յերկինս ամպովք •
և տեսին զնոսա թշնամիք նոցա ։

13 • Եւ յայնմիկ ժամու, եղև երկրա
շարժութիւն մեծ • և անկաւ տասն երորդ
մասն քաղաքին, և սպանան յերկրաշար
ժութենէ անուանք մարդկան էն ռ՟ • և
մնացեալքն երկեան յոյժ, և փառս տային
ա՟յ երկնաւորին ։

Մեկ Փառս ետուն այ երկնաւորին։ այսինքն
դարձան 'ի նեռանէ առ քս ։

14. Բն Վայ երկրորդ գնաց. ահա երրորդ
վայն եկեսցէ շուտով։

Մեկ Վայ երկրորդ գնաց. այսինքն յայտնեցանէ
վայեցն զորոց ը գլխ և 5 թիւն խօսեցաք։
Զի այսորինկ երեք վայ. երեք հարուածքն
են. երից վերջնոց հրեշտակացն փողահա
րաց Այսինքն չորրորդ հինգ երորդ և վեց
երորդ հրեշտակին. զորոյ խօսեցաք, և
այժմ սկսէ խօսիլ, երեք այլոց վայից այս
ինքն զհարուածոց։

15. Բն Եւ է երորդ հրեշտակն եհար զփողն
և եղեն ձայնք մեծ 'ի յերկինս. որ ասէր.
եղև թագաւորութիւն այսորիկ աշխար
հիս, տն մերոյ և օծելոյ նորա. և թագա
ւորեսցէ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Մեկ Այս է՛ն երորդ հրեշտակս, ցուցանէ զի
րանեցեալ, և զփառաւորեցեալ, թագաւո
րութիւնն քի. ընդ որում թագաւորեսցե
ցեն ենովք և եղիա. և զկնի սակաւուց ևս
թագաւորելոցքեն, համայնք մեք յաւուրն
յարութեան, և դատաստանին։

16. Բն Եւ ի և դ 'ի րիցունքն. որք առաջի
այ նստին յաթոռս իւրեանց, անկան 'ի վե
րայ երեսաց իւրեանց. և երկրպագանէ
ին ածն այ իւրեանց. և ասէին։

17. Գոհանամք զքէն տր ած ամենակալ.
որէիր. որ եսդ. և որ գալոցդ ես. և առեր
զզօրութիւն քո և թագաւորեցեր։

 Առեր

Առեր զզօրութիւն քո։) Այսինքն ընկա մեկ
լար զզօրութիւն քո. և զկարողութիւն.
զգեցար զզէն քո հզօրագոյն որով քակտե
ցեր զթշնամիս քո։

18. Եւ բարկացան հեթանոսք. և եկն բն
բարկութիւն քո, և ժամանակ մեռելոց
զի դատիցին. և զվարձս հատուցանել ծա
ռայից քոց մարգարէից. և սրբոց. և որք
երկնչին յանուանէ քումէ. փոքունց, և մե
ծամեծաց, և ապականեսցես զապականիչս
երկրի։

Եւ բարկացան հեթանոսք։ Այսինքն մեկ
նեռն և հետևողքն նորին, հեթանոսք բար
կացին և կրճտեցին զատամունս, մինչ
տեսանեն զայնքան հարուածս յա͞յ հասեալ
'ի վերայ ինքեանց։ (Եւ եկն բարկութ͞ի
քո։) Այսինքն յաւուրն դատաստանին կոր
ծանեսցես զամբարիշտս։

19. Եւ բացաւ տաճարն ա͞յ յերկինս. և բն
երևեցաւ տապանակ կտակարանին 'ի տա
ճարի իւրում և եղեն փայլատակմունք. և
ձայնք. երկրաշարժութիւն, և կարկուտ
մեծ։

Բացաւ տաճարն ա͞յ յերկինս. այսինքն մեկ
ա͞ծութիւնն. և երևեցաւ տապանակն այս
ինքն երևեցաւ մարմինն և մարդեղութ͞ինն
ք͞ի։ Եւ վասն բազմաց պատճառաց. տա
պանս այս նշանակէր զմարմինն ք͞ի։ Նախ
զի որպէս տապանն շինեցաւ անփուտ փայ
տից։ Սոյնպէս և մարմինն ք͞ի, անփուտ և

անթառամ. քանզի ոչ մեղաց բծօք. և ոչ մահուան ապականութեամբ վախճանեցաւ. երկրորդ որպէս տապանակն ունէր, զոսկեայ օղս. սոյնպէս քո մարդկութիւնն լինէր և կատարեալ. և բոցակէզ սիրով. երրորդ ապ տապանակն ունէր 'ի վերայ ինքեան զքաւչարան. Սոյնպէս և քո ունեաց միշտ ընդ ինքեան զքաւութիւն. և զփրկութիւն աշխարհի. չորրորդ որպէս տապանակն ունէր զբս քրովբէս 'ի վերայ ինքեան, որք դէմ յանդիման հայէին 'ի քաւչարանն. Սոյնպէս և բ կտակարանքն այսինքն հին և նոր, սոքա երկոքեանս հային 'ի քո միայն. Հինգերորդ. տապանակն ունէր յինքեան զտախտակսն օրինին այ սոյնպէս և ս քո միշտ ունեաց 'ի սրտի զօրէնս հօր այ. վեցերորդ 'ի տապանակն կայր սափորն մանանայի. Սոյնպէս և ս 'ի քո գտանի ամ քաղցրութիւն. (Եւ եղեն փայլատակմունք. և ձայնք. և երկրաշարժութիւն և կարկուտ մեծ.) համայնքս այսոքիկ. ցուցանեն զբարկութիւնն այ,
որ տեղալոցէ 'ի վերայ մեղաւորացն.
յաւուրն դատաստանին. որպէս
և դաւիթ ասէ հուր և կար
կուտ. ձիւն. և սառն հողմ
և մրրիկ բաժին բաժա
կի նոցա.

## Գլուխ երկոտասաներորդ.

Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին ըն
մի արկեալ զիւրեաւ զարեգակն. եւ
լուսինն 'ի ներքոյ ոտից նորա: եւ 'ի
վերայ գլխոյ նորա պսակ աստեղաց երկո
տասանից:

Նշան: այսինքն հրաշք եւ զարմանք: կին մեկ
մի: Այսինքն եկեղեցին Քի: Արկեալ զիւ
րեաւ զարեգակն: Այսինքն եկեղեցին շր
ջապատեցեալ է Քս իւ, որ է արեգակն ար
դարութեան: դարձեալ Քս որպէս զհան
դերձ գեղեցկացուցանէ զեկեղեցի իւր,
որ զգեցեալ է զնա. որպէս ասէ առա
քեալն զգեցարուք զՅս Քս: Լուսինն 'ի ներ
քոյ ոտից նորա: Այսինքն ամ փոփոխու
թիւն 'ի ներքոյ ոտից եկեղեցւոյ. քանզի
ոչ երբէք փոփոխի հաւատն կաթուղիկէ
եկեղեցւոյ. որպէս փոփոխեցան. եւ փոփո
խին այլք աղանդք. ըստ բանի տն որ ա
սաց առ գլխաւոր առաքեալն պետրոս.
ես աղաչեցի զհայր վասն քո, զի մի պա
կասեսցին հաւատք քո: (Եւ 'ի վերայ գլ
խոյ նորա պսակ աստեղաց ԲԺանից:) եր
կոտասան աստեղքն, ցուցանեն զԲԺ ան
առաքեալսն. որոց արեամբ եւ վարդապե
տութեամբ, պսակեցաւ. եւ առատացեալ
Ճոխացաւ, եկեղեցին Քի:

2. Եւ էր յղի, եւ ձնչէր յերկնելն. եւ բա ըն
զում վշտօք, մրձէր 'ի ծննանիլն:

մեկ Եկեղեցին ք՛րի բազում ցաւօք և հալածա
նօք անհաւատից. ծնաւ զորդիս ք՛րի. որ և
'ի վաղճանի աշխարհի. և 'ի կատարածի
աշխարհիս. ծննանելոց է բազում ցաւօք և
նեղութեամբ. որք գալոցքեն 'ի նեռա
նէ.

բն 3. Եւ երևեցաւ այլ նշան յերկինս. և ահա
վիշապ մի մեծ հրեղէն. որոյ էին գլուխք
էն. և եղջիւրք ժն. և 'ի վերայ գլխոյ
նորա էն խոյր.

մեկ Վիշապնէ սատանայն. էն գլուխքն են
էն մահացու մեղքն. Տասն եղջիւրքն. են
տասն մեղքն ընդդէմ ժն պատուիրանացն
այ. Եւ էն խոյրքն էն մեղքն ընդդէմ
էն գլխաւոր առաքինութեանց. Այսինքն
հաւատոյ. յուսոյ. սիրոյ. խոհեմութեան.
արիութեան ողջախոհութեան. և արդա
րութեան. Եւ վիշապն էր հրեղէն քան
զի միշտ այրի հրով նախանձու.

բն 4. Եւ ագի նորա քարշէր, զերրորդ մասն
աստեղաց յերկնից և էարկ զնոսա յերկիր,
և վիշապն եկաց առաջի կնոջն որ ծնա
նելոցն էր, որպէս զի յորժամ ծնցի զոր
դին կլցէ զնա վիշապն.

մեկ Վիշապն է սատանայէլ, որպէս 'ի վերոյ աս
ացի. և ագին նորա է նեռն. զի որպէս
ագին է վերջին մասն մարմնոյ. Այնպէս
սատանայէլ, 'ի վերջնում ժամանակին աշ
խարհիս. միջնորդութեամբ ագոյն իւրոյ
որ է նեռն. կործանանէ ոչ սակաւս. (զեր



րորդ

րորդ մասն աստեղաց քարշեսցէ) Այսինքն
բազում եպս և իմաստունս․ որք որպէս
աստեղք․ սրբութեամբ և գիտութեամբ
փայլէին, մոլորեցուսցէ։ Եւ արկցէ յեր
կիր։ Այսինքն տարցէ 'ի դժոխս։ (Եւ վի
շապն եկաց առաջի կնոջն։) Այսինքն սա
տանայն, կացցէ ընդդէմ եկեղեցւոյ, յա
ւուրն կատարածի աշխարհիս․ զի կորու
սանիցէ զամ̃ որդիս եկեղեցւոյ․ զորս յայն
ժամ ծնանելոցէ։ զի 'ի կատարածի աշ
խարհիս, մինչ ամենեքեան եղիցին մի հօտ
և մի հովիւ գրեթէ յեկեղեցւոյն․ ծնան
իցեն։ և ջանասցէ զորդիս նորա կորուսա
նել․ վասն այսորիկ ասէ զի կլանիցէ զզա
ւակն ծնիցեալ։

Ե․ Եւ ծնաւ կինն զորդի արու, որ հան բն
դերձեալ էր հովել զամ̃ հեթանոսս․ գա
ւազանաւ երկաթեաւ․ և յափշտակեցաւ
որդի նորա առ ա̃ծ․ և առ աթոռ նորա։
Որդին արու զոր եկեղեցին քի̃ ծնաւ, է մեկ
ժողովուրդն քրիստոնեայ և հաւատարիմ,
որպէս յառաջ ազգն հրէից կոչիւր որդի
սինագոգային․ այսինքն որդի եկեղեցւոյն
հրէից։ (Որ հանդերձեալ էր հովել զամ̃
հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ բան
քս այսորիկ․ ոչ միայն վերաբերի առ քի̃ս
կարէ։ Այլ և առ հաւատարիմս, և առ
արդար որդիս եկեղեցւոյ․ Զի թէպէտ
քս է յատուկ դատաւորն յաւուրն դատա
տանին․ սակայն և առաքեալքն նստելոց

ծն երկոտասան աթոռս առ 'ի դատել
Սոյնպէս եւ թէպէտ միայն քի պատկանի, հովել զա՜մ հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ. սակայն այս կարէ եւ, վերաբերիլ առ ա՜մ քաջս որդիս եկեղեցւոյ. որք մի անդամք են ընդ քի։ (Նա եւ յափշտակեցաւ որդի նորա առ ա՜ծ եւ առ աթոռ նո՜ր։) Այսինքն որդիքն եկեղեցւոյ որք վասն արիութեանն, արու ասին. սոքա մարտիրոսանալով վերացեալք յափշտակին յերկինս. առ 'ի զմայլիլ տեսութեամբն ա՜յ.

քն 6. Նա եւ կինն փախեաւ յանապատ ուրէր տեղի նմա, պատրաստեցեալ յա՜յ. զի կերակրեսցի անդ. աւուրս հազար երկերիւր եւ վաթսուն.

ծէկ Զի մինչ մանուկն արու, այսինքն արի, եւ մեծասիրտք եւ համբերողք որդիք եկեղեցւոյ, մարտիրոսութեամբ յափշտակեսցին յերկինս. յայնժամ տկար քրիստոնեայք եւ ժողովք տկարաց որ զեկեղեցին ցուցանէ. փախիցեն յահէ նեռին յանապատ. եւ դադարեսցեն զինքեանս. 'ի ծերպս վիմաց. եւ 'ի յայրս (Զի կերակրեսցի անդ) Այսինքն. յայնժամ ենովք եւ եղիա երբեմն ինքեանք երթան եւ քարոզեն զբանս ա՜ծայինս նոցա. եւ երբեմն առաքեսցեն զայլս հաւատարիմ ծառայս ա՜յ, առ փախուցեալ քրիստոնեայս. որք բանիւք իւրեանց մխիթարելով, կերակրեսցեն զհոգիս նոցա.

քն 7. Նա եւ եղեւ պատերազմ մեծ 'ի յերկինս.


միքայէլ

միքայէլ և հրեշտակք իւրք, կռուէին
ընդ վիշապին. և վիշապն կռուէր, և հրեշ
տակք իւրք։

Աստ միքայէլն ցուցանէ զքս. և հրեշ մեկ
տակք նորա զառաքեալսն. և երկինն ցու
ցանէ զեկեղեցին քի. զի քս 'ի ձեռն ա
ռաքելոց, և քարոզատու վարդապետաց.
զսատանայն, արտաքսեաց 'ի յաշխարհէս.
Արդ միքայէլ. թարգմանի ով է որպէս
ած. և ես քս գոլով խոնարհագունեղ. միշտ
զփառս հօր այ խնդրէր. ուստի ասաց.
ես ոչ խնդրեմ զփառս իմ. և դարձեալ
ասէ այժմ իշխան այս աշխարհիս արտաքսեսցի։

8. Եւ ոչ կարացին կալ ընդ դէմ. և տե բնն
ղի ոչ գտաւ նոցա յերկինս։

Այսինքն սատանայն ոչ ունի տեղի, 'ի
մբս և յերկիւղածս այ զոր երկին նշանակէ։ մեկ

9. Եւ անկաւ վիշապն այն մեծ. օձն բնն
հին որ կոչի սատանայ. և բանսարկու որ
պատրէ զամ տիեզերս. և անկաւ յերկիր.
և հրեշտակք նորա ընդ նմա անկան։

10. Եւ լուաւ զձայն մեծ 'ի յերկինս որ բնն
ասէր։ այժմ եղև փրկութիւն և զօրութի
և արքայութիւն այ մերոյ. և կարողութի
քն նորա. զի անկաւ չարախօսն։

Տեսեալ մեքն զզօրութիւն և զկարողու
թիւնս տուեցեալ նոցա 'ի քնէ. որով յաղ մեկ
թեցին սատանայի և նեռին. ուրախութբ
մեծաւ. փառս և գոհութիւնս մատու
ցանեն այ.

բն 11. Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ
գառինն եւ բանիւն վկայութեան նոցա. եւ ոչ
սիրեցին զանձինս իւրեանց մինչեւ 'ի մահ։)
Իրաւի զօրութեամբ արեանն եւ մահուանն
քն յաղթեն մ̃քն սատանայի եւ ամ̃ փոր
ձանաց նորա։

մեկ Բանիւն վկայութեանն նորա) այսինքն պատե
րազմեցան ըստ բանին քն որ ասէ. Երանի
որք հալածանս կրեն վասն արդարութե̃
(Եւ ոչ սիրեցին զանձինս իւրեանց. այս
ինքն զկեանս իւրեանց մինչեւ 'ի մահ) այս
ինքն ոչ ինչ համարեցին զկեանս մարմնա
ւոր, վս̃յ եւ մատնեցին զնա ի մահ առ 'ի ու
նել զկեանս յաւիտենականն. Որպէս կա
տարեցին զբանն քն որ ասէ. Որ սիրէ
զանձն իւր կորուսցէ զնա. եւ որ կորուս
ցէ զանձն իւր վասն իմ, գտցէ զնա։

բն 12. Վն̃կ ուրախ լերուք երկինք եւ որք
բնակէք 'ի նոսա. վա̃յ երկրի եւ ծովու զի
էջ սատանայն առ ձեզ ունելով զբարկու
թիւն մեծ, գիտէ զի զսակաւ ժամանակ
ունի.

մեկ (Զի էջ սատանայն առ ձեզ) այսինքն յոր
ժամ տեսցէ սատանայն յաղթահարեցեալ
'ի յենովքայ եւ 'ի յեղիայէ եւ յայլոց սրբոց աւ
ուրն դատաստանի, յայնժամ դիմեսցէ
առ ձեզ որք 'ի յերկրի, կամ 'ի կղզիս ծո
վու բնակէք, եւ ընդդէմ ձեզ սկսեսցէ
պատերազմել եւ 'ի վերայ ձեր թափել զբ
բարկութիւնն իւր. (գիտէ զի սակաւ ունի

 զժամանակ

զժամանակ.) այսինքն զամս գ̃ և կէս ։
13. Եւ մինչ ետես վիշապն թէ անկաւ | բն
յերկիր հալածեաց զկինն որ զարուն ծնաւ
14. Եւ տուան կնոջն բ̃ թեւք արծուոյ
մեծի զի թռուցէր յանապատ ։

Արդ, կինն որ է եկեղեցին, տուան սմա | մեկ
'ի յայս բ̃ թեւք, այսինքն հին և նոր կտակա
րանն որոյ իմաստութեամբ և գիտութ̃ն
վերանայ եկեղեցին մտօք ։ Պարձեալ 'ի
հին և 'ի նոր կտակարանէ զերկուս գիտու
թիւնս ուսանիմք, այսինքն զերկիւղ մե
ղաց և դատապարտութեան ։ Նա և զսէր
այ̃ և փրկութ̃ե ։ Արդ այսոքիկ երկուքս
այսինքն երկիւղն և սէրն ստիպեն թռուցա
նել զմիտս հաւատացելոց յանապատ այս
ինքն յերկինս ուր տեսանելով մտօք զան
ճառ բարիս պատրաստեցեալ յայ̃ իւրեան
ցն, քանզի պատերազմեսցին ընդ նեռին

15. Եւ եհեղ օձն 'ի բերանոյ իւրմէ ըզ | բն
կնի կնոջն զջուր որպէս զգետ, զի զնա գե
տովն առինքն քարշիցէր ։

Օձս այս ցուցանէ զնեռն, և ջուր գետոյ | մեկ
զհալածանս և զվիշտս որով տանջելոցէ
զկինն, այսինքն զեկեղեցին ։ Զի առաքէ
զհամախոհս իւրս, և հանցէ զնոսա որք
փախեալքէին յանապատ, և թաքեալք
յայրս և 'ի ծերպս վիմաց, և սաստկաբար
տանջեսցէ զնոսա ։

16. Եւ եբաց երկիր զբերան իւր և ե- | բն
կուլ զգետն ։

 Այսինքն

մեկ Այսինքն ա̃ծ և Հրեշտակք որք խնայեն
եկեղեցւոյն, Հրամայեն երկրի զի բացեալ
զբերանն իւր կլցէ զպաշտօնեայս նեռւան
որ̃ք երբեմն արտաք դաւթանայ և տաբերոնին.
բն 17. Եւ բարկացաւ վիշապն կնոջն, և գն
նաց 'ի պատերազմել ընդ այլ զաւակս նր̃
որք պահեն զպատուիրանս ա̃յ, և ունին
զվկայութիւնն նորա) Պատերազմի նեռն
ընդ մնացեալ Հաւատացելոց որդւոցն եկե
ղեցւոյն. այսինքն ընդ այնոցիկ որք փա
խեալք էին յերեսաց նորա. Կամ ընդ այ
նոցիկ զորս յառաջմէ ոչ կարաց յաղթա
Հարել. (Եւ ունին զվկայութիւնս յի̃քի)
այսինքն ընդ այնոցիկ որք սրտիւ Հաւա
տան 'ի ք̃ս, և բերանով խոստովանին զնա.
(Գնաց և եկաց 'ի վերայ աւազի ծովուն)
այսինքն 'ի յեզերք ծովուն, զի կարիցէ պա
տերազմել 'ի ծովու և 'ի վերայ երկրի.

Գլուխ երեք տասան երորդ.

բն Եւ տեսի աՀա՛ գազան ելանէր 'ի
1. ծովէ և ունէր զգլուխս է. և զեղ
ջիւրս տասն. և 'ի վերայ եղջերաց
նր̃ տասն խոյրս. և 'ի վերայ գլխոյ նր̃ զա
նուանս Հայհոյութեան.

մեկ Գազանս այս ցուցանէ զնեռն վասն գա
զանաբարոյութեան նորա որով տանջէ
զՀաւատացեալսն (Ելանէ 'ի ծովէ) այսին
քն յերկրի ծնանի. Որդ այլ զինչ է աշ



խարհս

խարհս եթէ ոչ ծով յորում ոչ երբեք
պակասի հողմն փորձութեան, և այլք նե
ղութեան. և այլ կծուութիւն պէսպէս տան
ջանաց։ յորում ևս մեծամեծք ձկունք կլա
նեն զփոքունս։ այսինքն բռնաւորք կողոպ
տեն զտկարս։ (Ունելոցէ նոցա չէ գլուխ)
այսինքն զէ թագաւորս որք նախնթաց
եղեցին նորա զորոց խօսելոցեմք 'ի գլուխն։
ժէ. Տասն եղջիւրքն են տասն թագաւորք
որոց զժ սպանցէ նորա, և Է մնացեալքն
ահաբեկեալք հնազանդեսցին կամաւ նմա.
զորոց խօսի դանիէլ. 7. գլուխն. և 'ի 6.
թիւն։ (Եւ 'ի վերայ գլխոյ նորա անուանք
հայհոյութե) Եօթն գլուխքն են Է թա
գաւորքն կարապետք նորա, որք հալա
ծեն զեկեղեցին, և հայհոյեն զանունն ՔԻ.
Գ. Եւ գազանն զոր տեսի նման ընձու. բն
և ոտք նորա իբրև զարջու. և բերան նր
իբրև զառիւծու, և ետ նմա վիշապն զզօ
րութիւն իւր և զկարողութիւն մեծ։
Արդ, ինձն է բծաւորեցեալ։ երկրորդ մ-կ
է արիւնարբու։ երրորդ է սրնթաց. Այս
պիսի եղիցի ևս նեռն։ Զի ունիցի զբիծս
ամենից ամբարշտութեանց։ Երկրորդ ե
ղիցի արիւնարբու և բազմասպան. Երրորդ
եղիցին արագք ոտք նորա 'ի հեղուլ զա
րիւն։ (Ոտք նորա որպէս զարջու) այս
ինքն ամուրք և զօրեղք առի կռուել զհա
ւատացեալս և զՔրեան։ (Բերան նորա որպ
զառիւծու) այսինքն որպէս զառիւծ գոչէ
և

և ահաբեկեցուցէ զհաւատացեալս (Եւ ետ
նմա վիճակս զշնորհութիւն մեծ) այսինքն
սադայէլ ետ նեռանն ուսուցանելով նմա
զա̃մ չարութիւնս իւր հպարտութեան .
հալածանաց և խաբէութեան .

Բն 3. Տեսի զմինն 'ի գլխոց նորա որպէս վի
րաւորեցեալ 'ի մահ, և վէր մահու նորա
ողջացաւ և զարմացաւ ա̃մ երկիր զկնի գա
զանին .

Մկ Գլուխս այս է նոյն ինքն նեռն որ է գա
զանն է ապատիկ. Արդ, նեռս այս կեղծա
ւորէ զինքն որպէս մեծագոյն հիւանդ, և
որպէս կիսամահ, և մանաւանդ որպէս ար
դէն մերձ 'ի մեռանիլ և հոգևար, և մանա
ւանդ երեւի թէ մեռեալիցէ. Եւ յան
կարծ սկսէ առողջանալ, և հաւատան մար
դիկ թէ 'ի մեռելոց յարեաւ. և այս սուտ
յարութիւնս եղիցի զկնի յերից աւուրց
որպէս զի այսու հետևիցի Քի. Ո որ տե
սալ ամենեքեան զարմացեալք երկիրպագ
ցեն նմա .

Բն 4. Եւ երկիրպագին վիշապին որ ետ զկա
րողութիւն գազանին, և ասեն . ո՞ նմանի
գազանին .

Մկ Երկրպագեն սադայէլի, որ յարոյց զգա
զանն, այսինքն 'ի սուտ մեռելութենէ .
(Եւ ասեն ո՞ նմանին գազանին) Արդ
յօհաննէս գազան կոչէ զնեռն, բայց յայն
մեկ ժամանակի կնա Քս կոչեն նեռայինքն
և ասասցեն ո՞ նմանի Քին մերոյ .



Եւ

5. Եւ տուաւ նմա բերան խօսելոյ զմե ծամեծս և զհայհոյութիւնս ։ և տուաւ նմա կարողութիւն առնել զամիս խբ ։ բն

Նեռն խօսեսցի մեծամեծս · այսինքն ըղ հպարտութիւնս և զգոռոզաբանութիւնս ։ քան զի պարծի ասելով թէ ինքնիցէ քս և ած · որ է մեծ հայհոյութիւն ։ (Եւ տու աւ նմա կարողութիւն առնել այսինքն զոր ինչ և կամեցի առնել) Զամիս խբ ) այսինք զամս գ և կէս ։ մեկ

6. Եւ բացաւ զբերան իւր 'ի հայհոյու թիւն այ · հայհոյել զանունն այ · զխորանն նորա, և զնոսա որք բնակեն 'ի յերկինս ։ բն

Նեռն բացցէ զբերանն իւր և հայհոյես ցէ զած, զի ասասցէ ոչ գոյ ած բաց յին քենէ ։ Հայհոյեսցէ զխորանն այ, այսին քն զեկեղեցին քի, և զամ սբսն ։ մեկ

7. Եւ տուաւ նմա առնել զպատերազմ ընդ սրբոց և յաղթել զնոսա ։ և տուաւ նմա կարողութիւն 'ի վերայ ամենից ցեղից · կարողութեան · լեզուաց · և 'ի վերայ ամ ազգաց ։ բն

Այսու յայտէ զի սակաւ առ սակաւ լոյ նացի ինքնակալ թագաւորութին նեռանն ։ մեկ

8. Եւ երկիր պագին նմա ամ բնակիչք աշխարհի, որոց անուանքն ոչ են գրե ցեալք 'ի գիրն կենաց գառինն զենեցելոյ ի սկզբանէ աշխարհի ։ բն

Զի նոքա պաշտեն զնեռն որք ոչ են ըն տրեցեալք, այլ դատապարտեցեալք 'ի դժոխս ։ մեկ

9. Որ ունի զականջս լուիցէ։

բն 10. Որ 'ի գերութիւն վարեսցէ, 'ի գե
րութիւն վարեսցի. որ սրով սպանցէ սրով
մեռցի։ աստ է համբերութիւն և հաւատ
սրբոց։

մեկ Որ 'ի գերութիւն վարէ 'ի գերութիւն
վարի) այսինքն մի' հոգայք ով քրիստոնեայք
և մի' զարմանայք վասն զի նեռն այսքան գա
զանացեալ է և ըստ իր յաջողի նմա. քանզի
թէպէտ սակաւ ժամանակ նա զձեզ 'ի գե
րութիւն վարէ, սակայն զկնի սակաւուց
ինքն գերեսցի յանազատելի բանտն դժո
խոց. ուստի նա ասէ Տր̃ որ ունի զհաւատ
'ի ք̃ս, և վս̃ սիրոյ նորա համբերէ։

բն 11. Եւ տեսի զայլ գազան որ ելանէր յեր
կրէ, և ունէր զեղջիւրս երկուս, նմա
նիս գառան և խօսէր որպէս զվիշապ։

մեկ Գազանս այս ցուցանէ զոմն 'ի չարաց, որ
որպէս կարապետ և նախնթաց եկեսցէ
նախ քան զնեռն, և քարոզեսցէ զգալուստ
նեռան, որպէս Տր̃ յովհաննէսն զգալուստն
ք̃ի. Երկու եղջիւրն ցուցանեն զե̃ուս
չարութիւնս, այսինքն զխաբէութիւնն
և զկարողութիւնն, որովք աւերեն զաշ
խարհս. նման գառան) զի չարաճճիկն այն
կեղծաւորէ զինքն հեզ. և քաղցրաբարոյ
զի առաւել կարիցէ խաբել, իսկ մինչ տե
սանէ թէ հեզութիւնն ոչ օգտէ, յայն
ժամ թողեալ զկեղծաւորեալ հեզութի՛ն
գործածէ զգազանաբարոյ կարողութի՛ն



իւր

իւր. վնկ աւէ. Եւ խօսէր ոպ̃ զվիշապ.
12. Եւ զկարողութիւնն առաջնոյ գա բն
զանին զա̃մ առնէր առաջի նորա. և առ
նէր զի զերկիր և զա̃մ բնակիչս նորա զի
երկիր պագանիցեն առաջնոյ գազանին,
որոյ առողջացան վէրք մահու.

Այսինքն անիծեցեալ նախնթացն և կա մեկ
րապետն առաջնոյ գազանին այսինքն նե
ռանն ունիցի զայն կարողութիւնն զոր ու
նելոցէ նեռն. և արասցէ առաջօք զա̃մ
հրաշս զորս առնելոցէ նեռն. վա̃յ մինչ
տեսանեն զհրաշս զայս զորս նեռան կա
րապետն արասցէ առաջի նեռանն, ամե
նեքեան հաւատան 'ի նեռն, և երկիր պագ
ցեն նմա. որոյ առողջացան վէրք մահու)
զայսմանէ ասացաք 'ի վերոյ.

13. Եւ արար նշանս մեծամեծս, մինչ բն
զի և զհուր տայր 'ի ջուցանել յերկից
յերկիր առաջի մարդկան.

14. Եւ մոլորեցոյց զբնակիչս երկրի վա̃
նշանացն զոր տուաւ նմա առնել առաջի
գազանին, և ասէր ցբնակիչս երկրի զի
արասցեն զպատկերն գազանին, որ ունի
զվէրս սրոյ և կեցաւ.

Այն նախնթաց կարապետն նեռան խրա մեկ
տէր զմարդիկ զի արասցեն զպատկերն
նեռան և երկիր պագցեն նմա.

15. Եւ տուաւ նմա զի տացէ զոգի պատ բն
կերին գազանոյն որպէս զի խօսիցի.

Այսինքն այս կարապետս նեռան զոգի մեկ



դիւական

դիւական 'ի պատկերն Նեռուան դիցէ և նա
խօսիցի մարդկայնով բարբառով.

բն 16. Եւ արասցէ զա̃մ փոքունս. և մեծա
մեծս. և զհարուստս. և զաղքատս և զծառայս
և զազատս ունել զկնիք յաջ ձեռին կամ
'ի ճակատս իւրեանց.

մեկ Զի որպէս մեք քրիստոնեայքս ունիմք
զնշան սբ̃ խաչին, սոյնպէս և Նեռուն արա
ցէ զի ամենեքեան տարցեն զնշան նորա.

բն 17. Եւ ոչ ոք կարասցէ գնել կամ վաճառ
ել եթէ ոչ ունիցի զկնիք կամ զանուն
գազանին, կամ զթիւս անուան նորա.

մեկ Կամ զթիւս անուան նորա) այսինքն զնշան
անուան նորա.

բն 18. Աստ է իմաստութիւն, որ ունի իմա
ցականութիւն համարեսցէ զթիւ գազա
նին, զի թիւ մարդոյ է, և թիւ նորա է
ո̃. կ̃. և զ̃.

մեկ Այսինքն, աստ խորհուրդ գոյ, զի այս
ո̃. կ̃. զ̃ թիւս, որ է անուն գազանին, որ
ոք իմանալ կարաց, իմաստուն համարիցի
նա. Զի թիւ մարդոյ է) այսինքն այս ո̃.
կ̃. զ թիւս թէպէտ ասի թիւ գազանի,
սակայն թիւ մարդոյ է, այսինքն Նեռուան,
այլ ոչ անբան անասնոյ. Եւ թիւ նորա,
այսինքն անուանն Նեռուան. եղիցի ո̃. կ̃. զ
այսինքն յորժամ ծնցի Նեռուն, և կոչեսցի
անուամբ յատկաւ, եղիցի անուն նորա
այն, զոր ո̃. կ. զ թիւն ցուցանենն. որպէս
թիւս այս է ռ. Հ̃. Դ̃. զդաւիթ անուանն ցու

ցանէ։ Օի. ւ. գիրս ցուցանէ Է Ռ. Ի.
Թ. և Ճ. առնեն Ը. և դա գիրն առնէ
չորս, որք համայնքն առնեն Է ռ. Ը. Դ.
Սպ և ս յօհաննէս աւետարանիչն խրատու
և ազդմամբ հոգւոյն սրբոյ ոչ կամեցաւ
յայտնել զանունն նեռանն. սակայն յոր
ժամ ծնցի 'ի մօրէ, ունիցի զանուն, որ
Ռ. Կ. վերոյ թիւն ցուցցէ։

## Գլուխ չորեքտասաներորդ.

Եւ տեսի ահա գառն կայր 'ի վերայ ըն
1. լերինն սիոնի, և ընդ նմա
ՃԽԴ հազ. որք ունէին զա
նուն նորա և զանուն հօր նորա
գրեցեալք 'ի ճակատս իւր
եանց։

Գ. առւս այս ցուցանէ զանա
րատ գառն քս, զորմէ եսայի. մեկ
16. գլուխն ասէ։ Առաքես զգառն, տր
զտիրօղն երկրի 'ի վիմէ անապատի 'ի լե
րինն դստեր սիոնի. Կայր 'ի վերայ լերինն
սիոնի) այսինքն յեկեղեցւոջն քի։ Եւ ընդ
նմա ՃԽԴ հազ.) Սոքա են կուսանքն զորս
նեռն կամեսցի ապականել, բայց նոքա
մարտիրոսանասցեն վասն պահելոյ զկուսու
թիւնս իւրեանց։ որք ունէին զանունն
նորա) այսինքն գառինն քի( Եւ զանուն
հօր նորա) զի յայնմիկ ժամանակի ոմք կու
սանքն խոստովանեսցին զանունն քի և զզ


հօրն

հօրն նորա երկնաւորի։ (Պ. Ճակատս իւր եանց) Ճակատնէ տեղի ամօթոյ, և կամի ցուցանել թէ անամօթ խոստովանեսցեն
զանունն քո, և զհօրն նորա երկնաւորի։

բն 2. Եւ լուայ զձայն յերկնից որպէս զձայն ջուրց բազմաց և որպ զձայն որոտման մեծի, և ձայնն զոր լուայ որպ զքնարաց և քնարահարաց 'ի քնարս իւրեանց։

մեկ Մարդ. խնդալի ձայնս այս է ձայն վերոյ ասացելոց ՃԽԴ հազար կուսանացն, որ զզանազան ձայն հանեն։ Նախ նմանէ ձայնս այս ձայնի ջուրց բազմաց, և այս վասն ձայնեղութեանց նոցին։ Զի որպէս ջուրք բազումք մինչ անկանին 'ի վերայ վիմի մեծ և զանազան ձայնս հանեն, որպ և ս ձայնք այսոցիկ սրբոց կուսանացս։ Երկրորդ նմանէն որոտման։ Զի որոտման ձայնն ոչ միայն ձայնեղէ, այլ և ահարկու և զարհուրելի։ դարձեալ ոչ միայն ձայնեղ և ահարկուէ ձայնն որոտման, այլ և է յերկնից և երկնային։ Որպ և ս, ձայնք ՃԽԴ կուսանացն են երկնայինք, բայց յաւուրն դատաստանին եղեցին վասն ամբարշտացն ահարկու և զարհուրելի։ Աստի առաքեալն պօղոս մինչ խօսէր զդատաստանէ և զկուսութենէ ընդ փիլիքս բդեաւորին, սարսափեցաւ փիլիքս։ որպէս գրած կայ 'ի 24. գլուխն և 'ի 25. թիւն գործոցն առաքելոց։ Երկրորդ այս ձայնս կուսանաց նմանէ ձայնի քնարաց, զի զմտյեկեցուցանէ զմիտ, զհրեշտակս և զմ̃րդ։

3. Եւ երգէին որպէս զերգ նոր առաջի բն
աթոռոյն և առաջի չորից կենդանեաց և
երիցանց, և ոչ ոք կարէր ասել զերգն ե-
թէ ոչ այնք ճ̃խ̃դ հազարք որք գնե-
ցան յերկրէ:
Երգս այս է նոր, զի է կուսութիւնն վ̃յ մեկ
խնդան և երգեն որք կուսանքն: է նոր ա-
ռաքինութիւն, զի զայս կուսական առա-
քինութիւնս միայն ք̃ս 'ի նոր կտակարա-
նի քարոզեաց (Եւ ոչ ոք կարէր ասել
զերգն) այսինքն սակաւք կարեն պահել
զկուսութիւնս իւրեանց ամբողջ: (Որք
գնեցան յերկրէ) այսինքն արեամբն ք̃ի ըն-
կալան զշնորհս, որով ոչ ցանկացան եր-
կրաւորաց, և պահեցին զմաքրութիւն հո-
գւոյ և մարմնոյ:
4. Սոքա են որք ընդ կանանց ոչ աղտո- բն
տեցան, զի կուսանքեն: սոքա հետևին գա-
ռին յո̃ և երթայ: սոքա գնեցան 'ի մարդ-
կանէ առաջի ա̃յ և գառինն:
5. 'Ի բերան նոցա ոչ գտաւ սուտ, զի ան-
բիծք են առաջի աթոռոյն ա̃յ:
6. Եւ տեսի զայլ հրեշտակ որ թռչէր բն
'ի մէջ երկնից և ունէր զաւետարանն յա-
ւիտենական զի աւետարանիցէ նստողաց
'ի վերայ երկրի. և 'ի վերայ ա̃մ ազգաց.
ցեղից, լեզուաց, և ժողովրդեան:
Հրեշտակս այս, ևս երկու հրեշտակս որք մեկ
յետոյ ասացին նշանակեն զերիս անուա-
նիս քարոզատուս, որոց մինն եղելոցէ ե-

նովք․ միւսն եղիա, և երրորդն այլ ոմն
նման սոցին․ իսկ երկեանքն աստ նշանակէ
զեկեղեցին քի (Որքա ունէին զաւետարանն
յաւիտենական․ Արդ յաւիտենականէ աւ-
ւետարանն զի Քս ած որ է յաւիտենական
զնմանէ խօսի սբ աւետարանն ։

բն 7․ Եւ ասէր ձայնիւ մեծաւ երկերուք
յայ, և տուք նմա զպատիւ, զի եկն ժամ
դատաստանի նորա, և երկիր պագէք նմա
որ արար զերկինս և զերկիր զծով և զաղ
բիւրս ջուրց․

8․ Եւ այլ հրեշտակ հետևեցաւ նմա ա-
սելով․ Անկաւ․ անկաւ բաբելոնն այն մեծ
որ ի գինւոյն բարկութեանն պոռնկութե
իւրոյ արբոյց ամ հեթանոսաց․) Զայսմա
նէ խօսեսցուք 'ի․ 17 գլուխն և 'ի 5․ թիւն․

9․ Եւ երրորդ հրեշտակն հետևեցաւ նցա
և ասէ 'ի ձայն մեծ, եթէ ոք երկիր պագ-
ցէ գազանին և պատկերի նորա․ և առնու-
ցու զկնիքն 'ի ճակատն իւր կամ 'ի ձեռն
իւր ։

10․ Եւ սա արբցէ 'ի գինւոյն բարկու-
թեանն այ որ խառնեցեալ է անապակա-
նաւ 'ի բաժակի բարկութեան նորա, և
տանջեսցի հրով և ծծմբաւ առաջի հրեշ-
տակաց սրբոց և առաջի դիմացն գառին ։

մեկ Որ խառնեցեալ է անապականաւ) այսինքն
գինին ջրախառն արբեալ ոչ վնասէ մար-
դոյ, այլ մանաւանդ բազում օգուտս ա-
նէ, իսկ գինի մի խառնեցեալ այլ զուտ և

անապականաւ գինեաւ, վասն անապական
գոլոյն, և վասն զանազան զօրութեանն
առաւել արբեցուցանեն զմարդն, և սաստ
կապէս խառնակէն զստամոքսն: Ուստի
կամի ասել յօհաննէս թէ, ա՟ծ պատուհա
սեսցէ զերկրպագուսն նեռանն գինովն
բարկութեան յորում ոչ իցէ խառնեցեալ
ջուրն ողորմութեան նորա: այսինքն անո
ղորմաբար պատժեսցէ:
11. Եւ ծուխն տանջանաց նոցա վերասցի բն
յաւիտեանս յաւիտենից, ոչ ևս ունին
զհանգիստ տիւ և գիշեր որք երկիր պա
գին գազանին և պատկերի նորա, և եթէ
ոք առնուցու զկնիք անուան նորա:
Ծուխն նշանակէ զտանջանս հրոյ, զի աստ մէկ
պատճառեցեալն փոխանակ պատճառին
իմանի: Եւ ոչ ունին զհանգիստ տիւ և
գիշեր) այսինքն ոչ երբէք ունիցին զհան
գիստ: Զի ՚ի դժոխս ոչ գոյ տիւ, ո՟չ
և յերկինս ոչ գոյ գիշեր:
Արդ, տես ով մեղաւոր որ մեղօք հեռա
նաս յա՟յ, և երկրպագանես նեռանն, այս
ինքն մեղաց և սատանայի: Ահա այսոքի
կեն պտուղքն մեղաց: Վախ խմելոցես
զգինին բարկութեանն ա՟յ անապական և
զուտ, այսինքն թարց խառնման ուրուք
ողորմութեան նորա: Երրորդ պարտիս
տանջիլ հրով ծծմբախառնով: Երրորդ,
ծուխն տանջանացդ վերասցի յաւիտեանս
յաւիտենից: Դարձեալ, զի ոչ երբէք

 ունիցիս

ունիցիս զհանգիստ։ Երրորդ մնալոցես․
'ի դժոխս յաւիտեանս յաւիտենից։ Այս
ցանէ մբ գրիգոր փափն ասէ։ վայրկենա
կանէ որ հեշտացնէ․ իսկ յաւիտենականէ
որ տանջէ։

բն 12։ Ըստ համբերութիւն սրբոց է, որք
պահենն զպատուիրանն այ, և զհաւատն
յի։

մեկ Այսինքն յորժամ անկցի բաբիլոն, և մե
ղաւորքն արբցեն զբարկութիւնն այ, յայն
ժամ արդարքն զգասցեն զպտուղն համբ
րութեան և հաւատոյն իւրեանց։

բն 13․ Եւ լուայ զձայն յերկնից որ ասէր․
գրեա։ Երանի մեռելոց որք 'ի տր մեռա
նին․

մեկ Որդ այժմ ասէ ոգին զի հանգիցեն յաշ
խատանաց իւրեանց, զի գործք իւրեանց
հետևին նոցա։) Որդ, եթէ մեռեալք
են զի արդ կարեն 'ի տր մեռանիլ։ Պատաս
խանի Երանի մեռելոց։ այսինքն երանի նց
որք մեռան աշխարհիս։ երանի նոցա որք
մահացուցին զմարմինս զգայարանն ոչ առ
նելով զկամս նոցա։ Երանի նոցա որք
սպանին զկամս իւրեանց հնազանդելով
այլոց։('Ի տր մեռանին) այսինքն հաւատով
սիրով և յուսով տն մեռանին։ Որպէս
մբ օգոստինոս մեռաւ արտասուաթոր ա_
չօք ասելով զէ ապաշխարութեան սաղ
մոս։ Սբն հերոնիմոս մեռաւ քարոզելով
և յորդորելով զիւրայինսն առ սէր այ և
մարդկան։

մարդկան: Այսպէս նբն ամբրոսիոս խօսակ
ցելով ընդ ք͞ի աւանդեաց զհոգին: Այս
պէս նբն Թովմաս աքուինացին համբար
ձեալ զաչս եւ զձեռս յերկինս մեծաձայն
աղաղակեաց 'ի ժամ հոգեվարին ասելով
զայն բանն երգերգոցին: Արի սիրական
իմ եւ ել յագարակն: եւ թռեաւ յերկինս:
Այսպէս մարիամ մագդաղինացին չոքեալ·
զձեռսն տարածեալ եւ զարտասուաթոր
աչսն յերկինս համբարձեալ փչեաց զհոգին:
Զի հանգիցեն յաշխատանաց իւրեանց)
այսինքն որով հետեւ մինչեւ 'ի մահ աշխա
տեցան պահելով եւ համբերութեամբ· լա
ցով եւ ողբալով, դատաստանն ոչ կամի զի
զկնի մահուանն հանգիցեն: Զի գործք
իւրեանց հետեւին նոքեանց) Զի յաւուրն
մահուան կամա յակամա թողցեմք զա͞մ
ազգականս· զա͞մ բարեկամս: եւ զա͞մ ինչս,
այլ միայն գործք չարք կամ բարիք հե
տեւեսցին մեզ: Զի որպէս յո͡ եւ երթամք
տանեմք ընդ մեզ զշուքն մեր· սոյնպէս եւ
'ի հարկէ հետեւելոցեն հոգւոց մերոց հա
մայնք գործք մերք չարք կամ բարիք:
Զայս մեկնելով նբն բեւնարդոս ասէ·
երջքեն որք զբարի մարդն 'ի ժամ հոգեվա
րին բերկրեցուցանեն· այսինքն անցեալք
առաքինութիւնքն: գործեցեալք ներկայ
հանգստութիւնն 'ի հոգւոյն սրբոյ խոս
տացեալ, եւ զապագայ փառք 'ի քե պա
տրաստեցեալ: Ա՛հ թէ որպիսի խնդութ͞ե
ասասցեն·

տատասցեն: Աղաղաղութեամբ յայս և 'ի սոյն
ննջեցից և հանգեայց, զի դու Տր օգնեցեր
ինձ, և մխիթարեցեր զիս: Պ`արձ անձ-
նեմ 'ի հանգիստ քո, զի Տր կոչէ զքեզ:
փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ. զաչս իմ
յարտասուաց, և զոտս իմ 'ի գայթակղութենէ:
Ա. յորքինեն ծաղկաւէտ անկողինն յորս
հանգստանան բարիքն 'ի ժամ հոգևարին:
բն 14. Եւ տեսի և ահա զամպ սպիտակ, և
'ի վերայ ամպոյն նստեալ նման որդւոյ մար-
դոյ, և ունէր 'ի գլուխ իւր զպսակ ոսկե-
ղէն, և 'ի ձեռին իւրում զգերանդի սրեցեալ:
մեկ Ա. մպս այս է Քս Տրն մեր որ եկեսցէ
յամպս յաւուրն դատաստանին: Սպիտա-
կէ վասն անմեղութեան. Եւ ունի զգե-
րանդիս սրեցեալ իձեռին իւրում,) զի
կտրեսցէ զփառս արքայութեան 'ի մեղա-
ւորաց, և զմահն յաւիտենական 'ի յարդարոց
բն 15. Եւ այլ հրեշտակ ել 'ի տաճարէն որ
աղաղակէր 'ի ձայն մեծ առ նստեալն 'ի
վերայ ամպոյն և ասէր: Ա. ռաքեա զգե-
րանդիդ և հնձեա, զի եկն ժամանակ հըն-
ձոց, զի չորացաւ հունձն երկրի.
մեկ Ա. յս հրեշտակս բաղձանքն և աղաղակն
հասարակ սրբոց. Ել 'ի տաճարէն) այսինքն
յերկնից 'ի բնակութենէ սրբոց: սորա ա-
ղաղակեն ասելով. Մինչև երբ Տր ոչ խն-
դրես զվրէժ արեան մերոյ: Ա. ռաքեա
զգերանդիդ և հնձեա) այսինքն բաժանեա
զարդարս 'ի մեղաւորաց: կտրեա զփառս

՚ի մեղաւորաց, եւ զտանջանս յարդարոց.
Զի եկն ժամանակ հնձոյ) այսինքն լցաւ
թիւն արդարոց. Չորացաւ հունձն երկրի)
առէ երկրի եւ ոչ երկնից. եւ ցուցանէ զմե
ղաւորսն. զի որպէս հունձքն երկնից այս
ինքն արդարքն պարարտք են վասն ջրոյն
շնորհացն Քի, որովք ոռոգեցան միշտ.
սոյնպէս եւ մեղաւորքն ասին չորք եւ ցա
մաք վասն զրկեցեալ գոլոյն ՚ի նոյն շնոր
հացն ջրոյ.

16. Եւ առաքեաց որ նստէր ՚ի վերայ ըն
ամպոյն զգերանդին իւր յերկիր եւ հնձե
ցաւ երկիր.

17. Եւ այլ հրեշտակ ել ՚ի տաճարէն
որէ յերկինս, ունէր եւ նա զգերանդի
սրեցեալ.

Բայց գերանդիս այս ոչ է նման նախ մեկ
կնոյ գերանդոյն, զի նախկին գերանդին էր
ցորենոյ կորացեալ. իսկ երկրորդս է դա
նակ որով այգեքաղքն զողկոյզս ՚ի յորթոյն
կտրեն. Հրեշտակնէ հրեշտակ մի ՚ի յերկնից
զօրացն, որ եկեալ յաւուրն դատաստանին
գործակից լիցի Քի. Զի Թագաւորքն
աշխարհիս մինչ զոք փառաւորեն ինքնին
առնեն, եւ մինչ պատժեն զոք. ոչ ինքեանք
այլ ՚ի ձեռն պաշտօնէից առնեն. Սոյնպէս
Քս Թագաւորն յաւուրն վերջին զարդարս
ինքնին պսակեսցէ, եւ զչարս ի ձեռն հրեշ
տակի պատժեսցէ.

18. Եւ այլ հրեշտակ ել խորանոյն որ ըն


ունէր

ունէր զկարգութիւն 'ի վերայ հրոյ և պ
ղաղակեալ 'ի ձայն մեծ առ այն, որ ու
նէր զգերանդին սրեցեալ և ասէ ։ Առա
քեա՛ զգերանդիդ և կթեա՛ զողկոյզս այ
գւոյն երկրի ։ Արդ զչորս հրեշտակս անո
ւանեաց յոհաննէս ․ Առաջին 'ի ․ 14 թիւն
Երկրորդն 'ի ․ 15 ․ թիւն Երրորդն
'ի ․ 17 ․ թիւն ․ իսկ չորրորդն ասա ․ 'ի 18 ․
թիւն ։ Նախկին ․ 14 ․ թւոյն հրեշտակներ
քս ․ Իւ 15 ․ թւի հրեշտակնէ, հրեշտակն
մարտիրոսաց, որոց որպէս դեսպան առա
քեցաւ առ Քս և աղաչէ 'ի կողմանէ
սրբոց մարտիրոսաց զքն որպէս զի գերան
դոյն իւրոյ դատաստանի հնձեսցէ ըզ
մեղս և զընտրեցեալսն ․ և բաժանեալ զնա
ժողովեսցէ առ ինքն ․ 'ի ձեռս հրեշտա
կաց որք կան 'ի դ կողմն աշխարհի ․ զի
յարիցեն 'ի փառս ․ և ընդ նմին վերա
ցեն ․ 'ի երկինս ․ Հրեշտակն ․ 17 ․ թւոյնէ
հրեշտակն որ յաւուրն կատարածին հըն
ձեսցէ զամբարիշտս վասն որոյ ունի զգե
րանդին սրեցեալ ․ Իսկ հրեշտակն ․ 18 ․
թւոյնէ այլ հրեշտակ ․ որ հրամայ է երկ
րորդ հրեշտակին զի գերանդուովն իւրով հըն
ձեսցէ զամբարիշտս վս որոյ ասէ ․ Առա
քեա՛ զգերանդիդ ․ և կթեա՛ զողկոյզսն երկ
րի ․ Արդ 'ի սեղանոյն եւ զի 'ի վերայ եր
րորդ գլուխն ասացաւ թէ հոգիք մար
տիրոսաց իներքոյ սեղանոյ կային և խնդ
րէին զվրէժ արեանն իւրեանց ։

19. Եւ առաքեաց հրեշտակն զգերան բն
դին իւր սրեցեալ յերկնից. և կթեաց զայ
գին երկրի և առաքեաց ՚ի հնձան մեծ բար
կութեանն այ։

Այսինքն հնձան դժոխն է զի որքան բա մեկ
զում արիւնս հեղցեն նեռայինքն յաւու
րըն դատաստանին, այնքան բազմանայ.
բարկութիւննն այ ՚ի վերայ նոցա վնյ և ա
ռաքին ՚ի հնձան դժոխոց.

20. Եւ ել արիւնն ՚ի հնձէն մինչև ՚ի բն
սանձս ձիանց յասպարէզս ռ ո.

Արդ ձիանք են այնոքիկ դ ձիանք զորոց մեկ
՚ի. 6. գլուխ և ՚ի. 2. թիւն խօսեցաք զի
զդ. ձիս յիշեաց աւետարանիչն յովհաննէս
որքեն ձիանք կառքին քի, այսինքն նախ
կին ձինէր սպիտակ որ զհեզութիւնն քի
և մարտիրոսացն ցուցանէ։ երկրորդն էր
կարմիր, որ զնախանձայոյզ գոյն նոցա
ցուցանէ. երրորդնէր սեաւ որ զնոցին ար
տասուսն և զողբն նշանակէր. իսկ չորրորդն
էր դեղնագոյն և ցուցանէր զմահացուցումն
մարմնական զգայարանացն վերոյ ասա
ցեալ սրբոցն. Արդ հազար ռ ասպարէզն
ցուցանէ զեկեղեցին քի. վասն զի երկիրն
աւետեաց ունէր զերկայնութիւն իւր Ձ.
և Կ. մղոնաւ և Ձ. և Կ. մղոնս առնեն ռ.
և վեց Ձ. ասպարէզս. ուստի վասն համ
գիտութեան չափուցն զոր հազար ռ. աս
պարէզն ընդ երկրին աւետեաց ունի.
այլաբանիկ ասպարէզքս զքն ցուցանեն աւե


տեաց

անաց երկրին. իսկ երկիրն աւետեաց
ցուցանէ զեկեղեցին. Ուստի կամի ասել
թէ բոլոր եկեղեցին բոլորովիմբ ուղղե
ցեալ եղև. արեամբն մարտիրոսաց: իրա
ւիւք այս Օ ի քայլնէ. Ե ոտն չափ. և աս
պարեզնէ Ձ ի Ե քայլ. և մղոննէ Է. ասպա
րէզ լուր զայն ով մեղաւոր զոր գրիգոր
վիփն զդժոխոց լճ էն ասէ: Հոգին'ի լճումն
դժոխոց թէպէտ ոչ կորուսանէ զգոյն
իւր. սակայն կորուսանէ զբարուք գոյն
կրէ զմահ թարց մահու. զպակասութին
թարց պակասութեան. և վաղճանն թարց
վաղճանի: Օ ի եղեցի անդ մահն թարց
մեռանելոյ պակասութիւնն առանց պա
կասութեան. և վաղճանն թարց վաղճա
նելոյ: Անդ եղեցի ցաւն սարսափելի. քան
հանդերձ խաւարի մահն անդ միշտ ապրի
վաղճանն միշտ սկսի. և պակասութիւնն
պակասիլ ոչ գիտէ. Անդ մահն ստանա
նէ. բայց ոչ երբէք չիջուցանէ ցաւն
տանջէ: բայց ըզ սարսափումն ոչ կորու
սանէ: բոցն կիզէ բայց ոչ երբէք զխա
ւարն յինքենէ արտաքսէ: Անդ կլանող
բոցն տոչորէ. զորս աստ այժմ մարմնաւոր
հեշտութիւնն բերկրեցուցանէ: Անդ
հուրն գեհենոյն կլանէ զորս աստ յունայն
հպարտութին բարձրացուցանէ. Անկցին
'ի խաւարն արտաքին. ուր եղեցի սառն ան
տանելի բոցն անշէջ որդն անմահ: հուրն ան
լոյս հոտն ան ըմբերելի: խաւարն շօշափե



լի

լի հարուածք ձաղողաց. անհարկու տեսու
թեն դիւաց։ Նախատինք մեղաց եւ յուսած
հատուցութեան ամենից բարեաց.

Գլուխ հնգետասան երորդ.

Եւ տեսի զայլ նշան յերկինս
1. մեծ եւ զարմանալի, զհրեշտա — բն
կս եօթն, որք ունէին հարուա
ծս է վերջինս. քանզի ՚ի նոսին
կատարեցաւ բարկութիւնն այ։

Այսինքն զհարուածս յետինս, զորս ած — մեկ
տայ յայսմիկ կենումս մեղաւորաց. վսկ
ասէ ՚ի նոսին կատարեցաւ բարկութիւնն
այ։

2. Եւ տեսի որպէս զծով ապակեայ — բն
խառնեցեալ հրով, եւ նոքա որք յաղթեցին
զգազանն եւ զպատկերն նորա, եւ զթիւն ա
նուան նորա կային ՚ի վերայ ապակեայ
ծովուն, եւ ունէին զքնարս այ։

Ծովն ապակեայ որ է որպէս զպաղ կարծ — մեկ
րացեալ, ցուցանէ զհեթանոսութիւնս,
ընդ որ անցին սբք առաքեալքն թարց
գոլոյ ընկղմեցեալք ՚ի նմին, որպէս որդի
քն ՚իսրայէլի անցին ընդ ծովն
կարմիր։ Խառնեցեալ հրով,) զի զհուրն
աւետարանական սիրոյն հեթանոսացն հրա
պարակեցին։ ունէին զքնարն այ) այսինքն
զուարճալի օրհնութիւնս այ։

3. Եւ երգէին զերգս մովսէսի, եւ զերգս — բն



գառին

ասելով. Մեծ և զարմանալիքեն գործք քո
Տր ած ամենակալ. արդարք և ճշմարիտք
են ճանապարհք քո թագաւոր կենցա
ղոց:

Մեկ Երգէին զերգս ոչ զայն որ ասէ. Լուր
երկինք. այլ երգէին զայն որ ասէ. Օրհ
նեսցուք զՏր զի փառօքն փառաւորեցաւ
որով Մովսէս և որդիքն ’ի սրայէլի օրհնէին
զած, փասն այնքան հրաշից զոր արար ’ի
ծովն կարմիր. Որպէս և երկրորդ Մո
սէսն այսինքն Քս ընդ հաւատացելոց ճշ
մարիտ Իսրայէլացոց, զկնի որոյ խաղաղու
թեամբ անցցեն զծովն աշխարհիս այսո
րիկ տեսանելով ընկղմեալ փարաւոն, այս
ինքն սատանայն և նեռն. յայնժամ որպէս
յաղթօղք ’ի վերայ ծովու, այսինքն յեր
կինս երգեսցեն Այ հօր զերգս գոհու
թեան և ասասցեն. Օրհնեսցուք զՏր զի
փառաւորեալ է, զձիավարս և զհեծեալս
ընկէց ’ի ծով:

Բն 4. Ո՛ ոչ երկնչի ’ի քէն Տր. և մեծացուս
ցէ զանուն քո. զի դու միայն ես գթած
զի ամ հեթանոսք եկեսցեն և երկիր պագ
ցեն առաջի քո զի դատաստանք քո յայտ
նիք են.

5. Եւ յետ այսորիկ տեսի, և ահա բա
ցաւ տաճարն խորանին վկայութեանն ’ի
յերկինս:

Մեկ Տաճարն խորանին էր, ուր պահէին տախ
տակն որոյ վրա գրածք կային վկայութիւնքն

 երկնից

երկնից, այսինքն տասնաբանեայ օրէնքն։
Եւ ցուցանէ զբնակութիւնն սրբոց, զի
սրբութիւնն սրբոց ՚ի պահպանութիւն պա
տուիրանացն այ կայեանայ։
6. Եւ ելին է հրեշտակք ունելով զէ բն
հարուածս ՚ի տաճարէն զգեցեալք զկտաւս
մաքուրս և սպիտակս. և գօտեւորեցեալք
առ ստեամբ զգօտիս ոսկեղէն։
Հրեշտակս այսոքիկ են է հրեշտակք որք մեկ
զդատաստանն այ և զհարուածս սփռես
ցեն առ ամբարիշտս ՚ի վախճանի աշխար
հիս։ Մաքուր և սպիտակ կտաւն ցուցա
նեն զսրբութիւնս նոցա։ Երկրորդ ցու
ցանեն զուրախութիւնս նոցա. զի ցնծա
ցեալք խնդայցեն մինչ տեսցեն զհատու
ցումն մեղաւորաց։
7. Եւ մինն ՚ի չորից կենդանեացն ետ է բն
հրեշտակացն զէ սկաւառակս լի ցասմամբն
այ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից։
Իմա՛ զի մինն ՚ի չորից կենդանեացն ՚ի տա մեկ
ճարին արդէն տուեալ էր է հրեշտակացն
զէ հարուածս նախքան զելանելն նոցա ՚ի
տաճարէն. վյ յառաջնում թուումն ա-
սաց։ Եւ ելան է հրեշտակք որք ունէին
զէ հարուածս ՚ի տաճարէն։ վյ աստ
բառս այս. Ետ իմանի թէ արդէն տո
ւեալ էր. Մինն ՚ի կենդանեացն. այսինքն
առիւծն. զի առիւծն հզօրեղ ցուցանէ
զբարկութիւն և զվրէժ խնդրութիւն։
Եւ ցուցանէ զած և զհրեշտակս, որք ոչ
 զառիւծ

զաւիւծ մռնչելով հեղուն զայսոսիկ հար
ուածս և զսկաւառակս 'ի վերայ ամբա
րշտաց յաւուրն դատաստանին ։

բն 8. Եւ լցաւ տաճարն ծխով մեծութեն
ա՟յ և զօրութեան նորա, և ոչ ոք կարէր
մտանել 'ի տաճարն մինչև կատարեցեին է
հարուածքն է հրեշտակացն ։

մեկ Ըստ տաճարն ցուցանէ զեկեղեցին ա՟յ, և
ծուխն զտգիտութիւնն հաւատացելոց ։
Զի տեսանելով զայնքան և զայնպիսի զօ
րութիւն և զկարողութիւն ա՟յ. լնանի ե-
կեղեցին ծխով, այսինքն տգիտութեամբ
զի ոչ կարեն իսկոյն իմանալ զպատճառն
այնքանից զարմանալեացն, որք եղիցին յա
ւուրն վերջնում։ Եւ ոչ ոք կարէր մտա
նել 'ի տաճարն) այսինքն ոչ ոք կարէր գի
տել զպատճառն, զխորագոյն դատաստա
նին ա՟յ զոր նոյնն ա՟ծ առնէր շուրջ տա
ճարաւն, այսինքն զեկեղեցեաւն իւրով ։
Մինչև կատարեսցեին է հարուածքն եօ
թանց հրեշտակաց.) այսինքն զայն զոր ոչ
իմանայր եկեղեցին. զկնի որոյ կատարեց
իւր ա՟մ. այսինքն յորժամ մեղաւորքն եր
թիցեն 'ի դժոխս. և արդարքն 'ի փառս ։
յայնժամ ամենեքեան ծանիցեն զպատճա
ռն այնքան զարմանալեացն որք եղանէին
յաւուրն դատաստանին .

Եւ լուայ զձայն մեծ 'ի տաճարէն որ — Բն
1. ասէր Է հրեշտակաց. գնա
ցէք և հեղէք զԷ սկաւառա
կսդ ցասմանն Այ յերկիր։
(Ձայն մեծ) այսինքն է, ձայն Այ. Մեկ
որ հրամայէ 'ի տաճարէն երկ
նից Է հրեշտակաց, զի ածցեն
զԷ հարուածս 'ի վերայ նեռայնոցն. Արդ
իմա Այսոքիկ.ք հարուածքս նմանին Ժ
հարուածոցն եգիպտոսի որովք Ած եհար
զեգիպտոս որպէս ասի 'ի Է գլուխ. ելից։
Այլ ևս իմա, զի աստ հարուածք Է հրեշ
տակացս զանազանին 'ի հարուածոցն նախ
կնոց փողահար Է հրեշտակացն, զորոց խօ
սեցաք 'ի գլուխն. 8. և 'ի գլուխն. 9. քան
զի հարուածքն նախկնոց Է փողահար
հրեշտակացն կատարեալ էին 'ի յԷ երրորդում
կնքոյն, իսկ հարուածքն այսոցիկ ներկայ
ից եօթանց հրեշտակաց. կայեանան յինոյն
գիրգն եօթամբք կնքով կնքեցեալ՛ն. Նախ
կինք հարուածքն Է փողահարաց հրեշտա
կացն էին որպէս նախնթացք. իսկ հարու
ածքն այսոքիկ եօթանցս հրեշտակաց են
հետևող նոցա։ Այնոքիկ եղեն նախքան
զգալուստն նեռանն. իսկ սոքա եղանելոցք
են 'ի ժամանակի նեռանն։ Նախկնոց Է հա
րուածոցն խօսեցաք 'ի. 8. և 'ի. 9. գլուխ
իսկ զայսցանէ խօսելոցեմք աստ. 16. գլ։

Նւ

բն 2. Եւ գնաց առաջինն և եհեղ զսկաւ-
ռակ իւր և եղեն հարուածք չարաչարք 'ի
մարդիկս որք ունէին զկնիքն գազանին,
և առ նոսա, որք երկիրպագին պատկերի
նորա.

բն 3. Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկա-
ւառակն 'ի ծով և եղև արիւն որպէս մե-
ռելոյ և ամ շունչ կենդանի որէր 'ի ծով
սատակեցաւ.

մեկ Եւ եղև ջուր ծովուն որպէս արիւն մե-
ռելոյ) այսինքն բազում արիւնհեղութի
է լինելոց յաւուրն նեռան յաշխարհիս զոր
ծովն նշանակէ. Եւ այլն.

բն 4. Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկա-
ւառակն իւր 'ի վերայ գետոց և աղբերց
ջուրց և եղև արիւն.

մեկ Որպէս երկրորդ հրեշտակն դարձոյց ըզ
ջուրն ծովուն յարիւն, սոյնպէս և երրորդն
դարձոյց զջուրն գետոց և աղբերց 'ի յա-
րիւն. Եւ այսպէս, որպէս 'ի ժամանակի
փարաւոնի և մովսէսի ամ ջուր դարձաւ յա
րիւն, և համայնք կենդանիք 'ի ջուրս սատա
կեցան, այսպէս եղիցի ևս յաւուրսն նեռանն.
Եւ քանզի որ ինչ յեգիպտոս եղև նշանա
կէր զամ որ լինելոցէ յաւուրն նեռան.
վզի որպէս յարիւն դարձուցմն ջուրցն ե-
գիպտոսի ոչ մնաց միշտ, այլ աւուրս ութ.
սոյնպէս ևս յաւուրսն նեռան զկնի ժամա
նակի ուրուք դարձցի ջուրն 'ի բնական
գոյն իւր. Այս պատահի չարացն, որք

հեղցեն զարիւնս մարտիրոսացն։

5. Եւ լուայ զի հրեշտակն ջուրց ասէր. արդարեւ տէր որ ես և որ էիր որ զայս դա տեցեր։ բն

Կուրանան հերետիկոսքն որք ասեն թէ ոչ գոյ պահպանութիւն հրեշտակաց. զի ե-թէ գոյ հրեշտակ պահապան ջրոյ, և այլոց տարերց, ընդ էր ոչ եղեցի ևս մարդկան։ մեկ

6. Զի զարիւն սրբոց և մարգարէիցն հե ղին, և զարիւն ետուր նոցա ըմպել, զի ար ժանիք են։ բն

7. Եւ լուայ զի այլ հրեշտակ ասէր ՚ի սեղանոյն. Այո տէր, ճշմարիտ և արդարէ դատաստան քո։

Այս հրեշտակս է ձայնն մարտիրոսաց որ ելանէր ՚ի սեղանոյն. այսինքն ՚ի յերկնից բնակութենէն։ մեկ

8. Եւ չորրորդ հրեշտակն էհեղ զսկա ւառակն ՚ի յարեգակն, և տուաւ նմա խոր շակահարել զմարդիկ հրով։ բն

Այսինքն այնքան տագնապել զմարդիկս տապով խուրով, մինչ զի թուեսցի թէ հրով այրին։ մեկ

9. Եւ խարշահարեցան մարդիկք տա պով մեծաւ, և հայհոյեցին զանուն այ որ ունէր զկարողութիւն ՚ի վերայ սկաւառա կին այնորիկ, ոչ ևս ապաշխարեցին զի փառս տացեն նմա։ բն

10. Եւ ե երորդ հրեշտակն է հեղ զսկա ւառակն ՚ի վերայ աթոռոյն գազանին, և

եղև խաւար աթոռ նորա, և կերին զլե
զուս իւրեանց վասն ցաւոցն :

Մ-կ Աթոռն գազանին ցուցանէ զկամարար
ծառայս նեռանն. որք մինչ տեսանեն զան
կումն նեռան և զտանջանսն իւրեանց, վա
սաստիկ ցաւոյն խածանիցեն և ծամեսցեն
զլեզուս իւրեանց:

Բն 11. Եւ հայհոյեցին զԱծ երկնից վասն
ցաւոց և վէրացն իւրեանց, և ոչ ապաշ
խարեցին 'ի գործոց իւրեանց.

12. Եւ զ̃ երորդ հրեշտակն էհեղ զսկա
ւառակն իւր 'ի գետն այն մեծ յեփրատ,
և ցամաքեցոյց զջուր նորա, զի պատրաս
տեսցի ճանապարհ թագաւորաց 'ի ծա
գաց արևու :

Մ-կ Արդ, որպէս 'ի վերոյ ասացի. տասանց
թագաւորաց զերիսն սպանցէ նեռն, և
է թագաւորքն տեսեալք զմահն երից սպա
նեցելոցն ահաբեկեալք հնազանդեսցին
նեռանն, Եւ քանզի ոմանք 'ի սոցանէ
գտցին յարևելս, հրեշտակս այս զ̃ երորդ
ցամաքեցուցանէ զեփրատ գետն, զի շու
տով հասեալք գայցեն առ նեռն. Բայց
գալուստն նոցա ոչ իցէ օգուտ նեռին և
նեռայնոցն, այլ իցէ օգուտ հաւատացելոց.

Բն 13. Եւ տեսի զի ելանէին 'ի բերանոյ
վիշապին, գազանին և սուտ մարգարէին
ոգիք գ̃ք անմաքուրք 'ի կերպ գորտանց.

Մ-կ Երեք ոգիքն անմաքուրք են դևք. Որք
ելանեն 'ի բերանոյ վիշապին, այսինքն սա

գալէլն 'ի բերանոյ գազանին, այսինքն նե
ռին, և 'ի բերանոյ սուտ մարգարէին այս
ինքն կարապետին նեռին։ Արդ, գ̄ դևքն
'ի բերանէն ելին, զի հրամանաւ բերանոյն
նոցա առաքեցան կոչել զթագաւորս յար
ևելից, զի շուտով եկեալք պատերազմիցին
ընդ քրիստոնէից և արասցեն զայլ չարիս.
զնկ ո̄րն յօհաննէս 'ի մերձակայ թիւն
ասէ։ զի են ոգիք դիւաց որք առնեն
զնշանս։

14. Որ են ոգիք դիւաց որք առնեն բն
զնշանս և ելթանէ առ թագաւորս բոլոր
երկրի առ 'ի ժողովել զնոսա 'ի պատե
րազմ 'ի մեծի աւուրն ամենակալողին այ։
15. Ահա գամ որպէս զգող, երանի որ
հսկէ, և պահէ զհանդերձս իւր զի մի
մերկ շրջեսցի, և երևեսցին ամօթոյք իւ
րեանց։

Ահա գամ այսինքն 'ի դատաստան առ 'ի մեկ
պատերազմել ընդ նեռին։ Որպէս զգող
այսինքն յանկարծ։ Երանի որ հսկէ և
պահէ զհանդերձս իւր այսինքն զշնորհս
իմ։

16. Եւ ժողովեսցէ զնոսա 'ի տեղի անդ, բն
որ եբրայեցերէն կոչի Արմագեդոն։

Արմագեդոն թարգմանի տեղի կործան մեկ
ման, և է վայրն գեթսեմանի ուր լինե
լոցէ դատաստան որպէս յովէլ մարգարէն
'ի գ̄ գլուխն ասէ։

17. Եւ է̄ երորդ հրեշտակն եհեղ զսկա բն

 ւառակն

ւառակն իւր ՚ի յօդն, և ել ձայն մեծ յերկ
նից և յաթոռոյն ասելով. Եղև
մեկ Եհեղ զսկաւառակն ՚ի յօդն զի ՚ի յօդս է
առնելոց ած և ցուցանելոց ահարկուս յօրն
դատաստանին այսինքն փայլատակմունս ·
որոտմունս · զխաւարումն արեգական, լուսնի
և աստեղաց ։

բն 18 · Եւ եղեն փայլատակմունք · և ձայնք ·
և որոտմունք · և երկրաշարժութիւն մեծ,
որպիսի ոչ երբէք եղեն յորմէ հետէ
մարդիկ եղեն ՚ի վերայ երկրի այսպիսի
երկրաշարժութիւն ։

մեկ Այսէ երկրաշարժութիւնն այն զորմէ
դաւիթ խօսի ասելով. Խռովեցաւ և դո
ղաց երկիր, հիմունք լերանց սասանեցան,
և խռովեցան. զի բարկացաւ ած ՚ի վերայ
նոցա ։

բն 19 · Եւ եղև քաղաքն մեծ յերիս մասու
նս, և քաղաքք հեթանոսաց անկան, և բա
բիլոնն մեծ յիշեցաւ առաջի այ, տալ նմա
զբաժակն գինւոյ ցասմանն բարկութեան
նորա ։

մեկ Քաղաքն մեծ է երուսաղէմ քաղաքն. քա
ղաքն երուսաղէմ թէպէտ միշտ մեծ կո
չեցաւ, սակայն առաւել մեծագոյն է լինե
լոց յաւուրսն նեռան. զի եղիցի նեռն թա
գաւոր մեծ, և երուսաղէմ աթոռ և թա
գաւորանիստ քաղաք. Այս քաղաքս վասն
սաստիկ երկրաշարժութեանն յերիս մա
սունս բաժանեսցի. Եւ թէ զինչ ցուցա

նէ բաբիլօն քաղաքն, զայսմանէ խօսեա
ցուք 'ի հետևեցելում գլխոյս։

20. Եւ ամ կղզի փախեաւ, և լերինք ոչ գտան։ ըն

Վասն զի որպէս տարերքն երկրի փոփո խեսցին նոյնպէս կղզի և լերինք հաւասա րեսցին։ մեկ

21. Եւ կարկուտ մեծ որպէս զտաղանդ էջ 'ի յերկնից 'ի մարդիկս, և հայհոյեցին զած մարդիկք վասն հարուածոյն կարկ տոյ. զի մեծ եղև յոյժ։ ըն

Տաղանդս այս քաշէ ճ. ու. դ. Ճ և դ. դրամ. և այսպիսի մեծամեծ կարկուտէ անկանելոց յերկնից յաւուրն դատաստանին, որ ոչ յումեքէ երբէք տեսաւ, կամ լսեցաւ։ վսյ մարդիկ հայհոյիցեն զած։ զի մեծ եղև յոյժ։ մեկ

## Գ. լուխ Է և Ժ երորդ.

1. Եւ եկն միոմն 'ի Է հրեշտակաց որք ունէին զԷ սկաւառակսն և ասէ ցիս։ Եկ ցուցից քեզ զդա տապարտութիւնն պոռնկին մեծի։ ըն

Մ. յս հրեշտակսէ յայնցանէ եօթանց հրեշ տակաց զորոց մինչև ցաստ խօսեցաք։ Պոռ նիկ կինն որ բաբիլոն կոչի 'ի. 5. ապա գայ թիւն, նշանակէ զհռօմ քաղաք ոչ զքրիստոնեայ որպիսի է այժմ, այլ անհա ւատ և կռապաշտ քաղաքն հռօմ, որպիսի էր 'ի ժամանակի սրբոյն յօհաննու, որպիսի մեկ



և

և եղանելոցէ յաւուրսն նեռանն.

Երդ, վասն բազմաց պատճառաց պոռ-
նիկ կինն զոր յօհաննէս բաբելոն կոչէ
զհռոմ նշանակէ որ առաջէր անհաւատ,
և յաւուրս նեռանն ևս եղելոց է չարագոյն
որ այժմ ոյս է մե և ուղղափառ գլուխ ա-
մենից հաւատացելոց, և սրբահաւատ.
Սաև, յօհաննէս կոչէ զբաբելոն քաղաք
մեծ որ ունի զթագաւորութիւնս 'ի վե-
րայ թագաւորաց երկրի. և ունի զէ լերի-
նս. և այս ոչ այլ ումեք քաղաքի պատկա-
նիլ կարէ, եթէ ոչ միայն հռոմայ. երկրորդ
յօհաննէս ոչ անուանէ զբաբելոն անու-
ամբն յատկաւ, այլ խորհրդաբար. զի
'ի հ. թիւն այսորիկ գլխոյս ասէ. Խոր
հուրդ, բաբելոն մեծ. ապա ուրեմն նշա-
նակէ զքաղաք մի, որ հալածեալ լիցէ եր-
բեմն զքրիստոնեայս, որպէս երբեմն հա-
լածէր բաբելոն զհրէայս. և այսէ հռոմ.
Երրորդ պետրոս առաքեալն զսա բաբե-
լոն կոչէ ասելով յառաջին թուղթն իւր
ե գլուխ. և ժգ թիւն. Ողջունէ զձեզ
եկեղեցին որ 'ի բաբելոն կայ.

ըն 2. Ընդ որում պոռնկեցան թագաւորք
երկրի, և արբեցան բնակիչք երկրի 'ի գինւ-
ոյ պոռնկութեան նորա.

ըէ Պոռնկեցան այսինքն ոչ միայն մարմնաւո-
րապէս ընդ կանանց հռոմայեցւոց, այլ և
հոգևորապէս, այսինքն զկուռս պաշտելով
թագաւորք երկրի այսինքն ոչ միայն ծերա

 կոյսքն

կոյտքն հռոմայ, այլ և այլք թագաւորք
և իշխանք, որք ընդ իշխանութեամբ էին
հռոմայեցւոց։ Եւ արբեցան որք բնա
կէին յերկիր 'ի գինւոյն պոռնկութեան նր։
գինին հռոմայեր հարստութիւնք և ինչքն
հռոմայեցւոց, զորս պարգևէին նր որք,
նման նոցա պոռնկիցէին հոգևորապէս,
այսինքն որք պաշտիցէին զկուռս իւրեանց։ բն
3. Եւ վերացոյց զիս ոգւով յանապատ։
Եւ տեսի զկին մի նստեալ 'ի վերայ գա
զանոյ կարմրոյ լի' անուամբք հայհոյութե.
և ունէր զգլուխս տասն, և զեղջիւրս. է։
Որդ՝ սակս բ̃ ուց պատճառաց հրեշտակն մեկ
վերացոյց ոգւով զյոհաննէս յանապատ։
Նախ առ 'ի ծանուցանել զկործանումն
և զքակտումն բաբիլոնի. որ զկնի սակա
ւուց յանապատէր դառնալոց։ Երկրորդ
առ 'ի ծանուցանել թէ ամ̃ աշխարհիս
մեծութիւնն է՛ որպէս անապատ. ուստի
համայնք կառավարութիւնք՝ քաղաքավա
րութիւնք՝ գանձք՝ ինչք ստացուածք և մե
ծութիւնք որք յայնմիկ ժամանակի 'ի
հռոմ առ կռապաշտսն գտանէին. զայս
ամ̃ համեմատելով երկնայնոցն փառաց այլ
ո՛չ ինչ էին եթէ ո՛չ անապատ, որ ո՛չ մարդ
կան, այլ գազանացն բնակարան։ ուր ո՛չ
ինչ առաքինութիւն, այլ մեղք՝ փառք և
անօրէնութիւնք գտանէին։ Մարդակե
րպք էին՝ բայց անօրէն կենցաղավարէին.
Վասն որոյ դեօգինէս փիլիսոփայն յա

 ւուր

բուռն մեծամ առեալ զղամբար վառեցեալ
'ի ձեռին իւր․ կէս օրէի ժամուն գնացեալ
'ի հրապարակն հռոմայ որպէս թէ փնդռե
լով որոնէր զէր իմն։ Հարցանէին զնա և
ասէին թէ զինչ որոնես՝ նա պատասխա
նեալ ասէ զմարդ փնդռեմ։ Ասեն ցնա
հրապարակս լի՛ է մարդովք՝ իսկ դու ասես
զմարդ փնդռեմ։ Ասէ փիլիսոփայն՝ սոքա
ոչ են մարդիկք այլ մարդակերպ անա
սունք։ Գազանս այս է խումբ ամբարշ
տաց և ժողով անօրինաց՝ որոյ վերայ նս
տաւ հռոմ քաղաքն յաւուրս կուապաշտու
թեանն իւրոյ՝ և ևս նստելոցէ յաւուրս նե
ռան․ Գազանս այս ինքն էր կարմիր․
Արդ՝ կարմիր և ծիրանի գոյնն թագաւո
րաց և իշխանաց է զգեստ՝ և ցուցանէ ըզ
հպարտութիւնս և զամբարտաւանութիւնս
աշխարհիս, և աշխարհասիրաց։ Դար
ձեալ ցուցանէ զգազանաբարոյութիւնս
աշխարհիս որ որպէս արեան արբոյ գազան
եհեղ զայնքան արիւնս գառանցն քի՛ այս
ինքն արբոյ մարտիրոսաց․ Օ․ է․ գլխոյն
և զժ̃ եղջերացն խօսելոցեմք յետոյ։

բն Դ․ Եւ կինն զգեցեալ էր զծիրանի և զկար
միր զոսկի՝ գ․քարինս պատուականս և զմար
գարիտս։ Եւ ունէր զբաժակ ոսկեա
'ի ձեռին իւրում լի՛ պղծութեամբ և ան
մաքրութեամբ պոռնկութեան իւրոյ։

ծէկ Ոսկեա բաժակն է աշխարհական երջան
կութիւնն․ հրամանատարութեան մեծու

թիւնն. ընչից բազմութիւն, և ա͞մի առա
տութիւն. Արդ՝ հռոմ պոռնիկ կինն յայս
ցանէ բաժակացս ամենեցուն ետ ըմպել
և զամենեսեան հակեաց առ ինքն. և զա͞մն
ետ պոռնկել ընդ ինքեան. այսինքն քար
շեաց. առ կռապաշտութիւնս իւր։
Ե. Եւ 'ի ճակատն նորա գրեցեալ անուն. բն
խորհուրդ բաբելոն մեծ. մայր պոռնկու
թեանց և պղծութեանց երկրի։
Կինս այս զանուն իւր խորհրդաւոր տա մեկ
նէր 'ի ճակատս իւրս, զի ոչ ամաչէր այլ
պարծէր զի պաշտէր զկուռս և առնէր
զայլ չարութիւնս։ Եւ որպէս ահարօն
կրէր զանունն ա͞յ 'ի ճակատն իւր. սոյնպէս
և ս հռոմ պոռնիկն պարծիւր զի պաշտէր
զա͞ծս բազումս։ բաբիլօն մեծ։ Այս է
անունն պոռնկին. այսինքն հռոմայ կռա
պաշտին։ Զի որպէս բաբիլօն պաշտէր
զբէլ և զբաաղ՝ և զպաշտօնն այն տարա
ծեաց և ս առ այլ ազգս և 'ի հրէայս։ Այս
պէս արար և ս կռապաշտն հռո͞մ. և արաս
ցէ յաւուրս նեռան. երկրորդ. Զի ո͞պ բա
բիլօն էր բնակարան և խառնակումն ա͞մից
ազգաց. հետևապէս ա͞մից կռոց. և ա͞մից
մոլութեանց. այսպէս և ս կռապաշտն հռ
ռոմ. ուստի մ͞ը լէոն փափն ասէ. քան
զի տիրէր հռոմ, ա͞մից ազգաց. պահէր
և ս զմոլորութիւնս ա͞մից ազգաց. և որքան
զզանազանս կռապաշտութիւնս պաշտէր
այնքան ինքեան փառս համարէր։ Յետոյ
ասէ. ով հռոմ հռոմ. որ նախ վարդա

պետ էիր մոլորութեան. այժմ եղեր աշա
կերտ ճշմարտութեան. Մայր պոռնկու
թեանց: Այսինքն մայր կռապաշտութե.
աւելորդապաշտութեան. չարութեան.
և մոլութեան. Սա նմանէր կռապաշտ
հռօմն կուսանացն բաբելոնի. որք նախ
քան զպսակիլն իւրեանց պոռնկէին ընդ
այլոց. և զգինն և զվարձս զոր 'ի պոռնկու
թէ առնուին մատուցանէին չաստուածո
ցըն իւրեանց. և աղաչէին զնա զի բախ
տաւոր առն դիպիցէին:

բն 6. Եւ տեսի զկին արբեցեալ արեամբ
սրբոց և արեամբ մարտիրոսացն յի:

մկ Որպէս արար յառաջ մինչ էր կռապաշտ.
արբացէ ևս 'ի վախճանի աշխարհիս: Յոր
ժամ հռօմ դարձցի յառաջին մոլորութին
կռապաշտութեան. Զի հալածեսցէ ըզ
քրիստոնեայսն. և զհայրապետն իւր կամ
սպանցէ, և կամ աքսորեսցէ: Բայց մնաս
ցեն բազումք հաւատարիմք 'ի հռօմ: Եւ
թէպէտ հայրապետն հռօմայ աքսորեցեալ
և հալածեցեալ շրջեսցի, սակայն եղիցի
հայրապետ հաւատացելոց. և փոխանորդ
քի որպէս է այժմոյս. զի ո՛չ ո՛ք կարէ
զնա 'ի գլխաւորութենէ եկեղեցւոյն զըր
կել՝ ըստ խոստմանցն քի: Եւ ես զարմա
ցայ մինչ տեսի զայն:

բն 7. Եւ ասաց ցիս հրեշտակն՝ ընդէ՛ր զար
մանաս. ես ասացից քեզ զխորհուրդն
կնոջն՝ և գազանին որ տանի զնա. որ ու

նի զգլուխս է. և զեղջիւրս տասն.
8: Գազան զոր տեսեր եղև և ոչ է. և ելանե-
լոց է յանդնդոց և'ի սատակումն գնասցէ.
և զարմասցին բնակիչք երկրի. որոց ոչ
են գրեցեալք անուանքն 'ի գիրն կենաց. 'ի
սկզբանէ աշխարհիս մինչ տեսցեն զգա-
զանն որ եղև և ոչ գոյ.

Արդ՝ որպէս 'ի վերոյ ասացի՝ թէ գազանս այս է թագաւորութիւնն աշխարհի. և սատանայի. կամ սատանայ յաշխարհի. ոչ 'ի թագաւորութեան որ տիրէ ամբարշտութեան իւրում. Արդ յառաջ քան զՔս գազանս այս կայր. զի յաշխարհիս թագաւորէին սատանայն. և ամբարշտութիւնն. Բայց Քս զայս թագաւորութիւնս էառ՝ և կապեաց զսատանայն. որպէս լսելոցեմք 'ի 20 գլուխն. և'ի 3. թիւն. Օ այսմանէ Քս յաւետարանն ասաց. Այժմ իշխան աշխարհիս ընկեսցի արտաքս. Իսկ 'ի վախճանի աշխարհիս ելանելոցէ յանդնդոց. Եւ նմանէ գազանս այս սատանայ՝ այն մինչ կէտ ձկանն՝ որ 'ի ծովու մերթ ըզգլուխն և զթիկունքն հանէ 'ի ջրէն. Մերթ զինքն բոլորովիմբ ընկղմէ 'ի ջուրն դարձեալ հանէ զինքն և դարձեալ ընկղմի 'ի ջուրն. Այսպէս և մեծ մասն թագաւորութենն և կարողութե̃ սատանայի 'ի Քս է բարձաւ. Եւ թէպէտ այժմ ևս տիրէ սատանայն՝ սակայն այս թագաւորութիւնս և կարողութիւնս զորս այժմ ունի՝ եթէ համե- մեկ


մատեսցես

մատուցես կարողութեանն և տէրութեն
զոր սատանայն նախ քան զգալուստն Քի
ունէր՝ որպէս ոչ ինչ համարեցի։ Բայց 'ի
վախճանի աշխարհիս դարձեալ եկեսցէ՝ յոր
ժամ սադայէլ 'ի դժոխոց արձակեսցի ըզ
թագաւորութիւնս աշխարհիս առցէ և
զնմ ցասումս իւր 'ի ձեռն նեռան 'ի հա
ւատացեալս փոխէ։ Բայց սակայն ունիցի
զսակաւ ժամանակ։ քան զի զկնի սակա
ւուց ընդ նեռանն 'ի սատակումն 'իջցէ 'ի
յանդունդսն դժոխոց։ Աւստի գազանս
այս էր։ այսինքն նախ քան զգալուստն Քի.
Ո՛չ գոյ՝ այսինքն. ոչ երևի. է՛. այսինքն 'ի
դժոխս կապեցեալ։ Եկեսցէ այսինքն յաւ
ուրսն նեռան։ Եւ զարմանայցին բնակիչք
երկրի։ Զի որպէս արիստոտէլ ասէ.
զարմացումն ծնանի յայնժամ. յորժամ
տեսանեմք զիր իմն նոր. իսկ պատճառն
ոչ իմանամք։ Նոյնպէս յորժամ տեսցեն
մարդիկք յանկարծ ելումն սադայէլի. որ
ոչ կայր և տեսանեն ելեալ 'ի յանդնդոց՝
սկսին զարմանալ։

բն 9. Եւ աստ գոյ իմաստութիւն որ ունի
միտս՝ եօթանք գլուխքն՝ Է լերինքն են, 'ի
վերայ որոյ նստի կինն. և Է թագաւորքն
են։

մէկ Աստ գոյ իմաստութիւն որ ունի զմիտս։
այսինքն մի կարծէք թէ ընդ վայր իցէ
գրեցեալ այս տեղիս. այլ մեծ խորհուրդ
կայ աստ։ և հասկացող մարդիկքն որք ոչ


են

էին խնլադարք. այլ ունէին զմիտս և զհան
ճար նոքա իմանան։ Եօթն գլուխքն է
լերինքն են յորոյ վերայ նստի կինն. և թա
գաւորք է են։ Եօթն. են լերինք 'ի քաղաքն
Հռոմ. որոց նախ կին կոչի քափիթօլէնոս։
Երկրորդն՝ պալլաթինոս։ Երրորդն՝ ջէլիոս
Չորրորդն՝ էք քուիլինոս. Ե. երորդն՝
վիմինոլիս։ Զ երորդն՝ քուիրինալիս։ Է ե-
րորդն՝ աւէնթինոս։

10. Հինգն անկան. և մինն կայ՝ և այլն
տակաւին ոչ է եկեալ և յորժամ եկեսցէ բն
սակաւ մնասցէ։ Եօթն թագաւորքն են
է ամբարիշտք թագաւորքն. որք. է կեն մեկ
ցաղոյ թագաւորեցին. 'ի թագաւորութեն
մեղաց և անօրէնութեանց։ Որոց նախ կին
թագաւորն էր կայէն և այլ հսկայք որք
հալածեցին զարդարսն և հեղին զարիւնս
անմեղս՝ որ եղև յադամայ մինչև ցնոյ։ Եր
կրորդ՝ թագաւորն էր նէմրոդ՝ ընդ չինո
ղացն զաշտարակն բաբիլոյ. և այս էր եր
կրորդ ժամանակն և մնաց 'ի նոյեա մինչև
ցաբրահամ։ Երրորդ՝ ժամանակում եղեն
թագաւորքն սոդոմայ՝ և այս մնաց յաբրա
համէ մինչև ցմօսէս։ 'ի չորրորդում կենդա
ղումն թգւորեցին թգւորքն խէլացւոց որք
անիրաւք էին և ամբարիշտք. և այս մնաց
'ի մօսիսէ մինչև ցգերութիւնն բաբիլօնի
'ի Ե երորդում կենդաղում էին թագա
ւորքն քաղդէացւոց։ Րայինքն նաբուգո
դոնոս որ՝ և այլք՝ որ մնաց մինչև 'ի քս։


սոքա

տղքա հնգեքեան անկան։ Ի վերջ երրորդ կեն
ցաղում որ էր ժամանակն քի թագաւո
րեցին թագաւորք կուապաշտք. հեթան
ոսք. 'ի հռոմ և 'ի հրէաստան իսկ յետոյ
երբ եկին, քրիստոնեայ թագաւորք
և սոքա թագաւորեցին. և թագաւորեն
ևս այժմ. և թագաւորեսցեն մինչև 'ի նե
ռն և այս է մինն որ մնաց։ Իսկ է երրորդ
թագաւորն եղիցի նեռն զոր դեռևս ոչ
է եկեալ որոյ թագաւորութիւնն սակաւ
մնասցէ Ա․ յոլինքն զամս Գ և կէս։ Իսկ է
գլուխքն կնոջն պոռնկի, զորս ընդ լե
րանցն յիշէ են. է չորք թագաւորքն
պոռնիկ կնոջն Ա․ յոլինքն հռոմայ. և են
սոքա։ Ռոմուլոս՝ Փոմփիլիոս․ Տուլոս․
Անկոս՝ Տարքուինոս՝ Փրիսկոս՝ և Սէ
րուիոս։

բն 11. Եւ գազանն որ էր և ոչ գոյ․ և նմ
ութ երրորդնէ, և 'ի եօթանցնէ, և 'ի սա
տակումն գնասցէ։

մեկ Այս է երրորդ գազանոյն սադայէլ։ Սա 'ի
յեօթանց թագաւորացնէ զօրմէ 'ի վերոյ
խօսեցաք․ զի այնք է թագաւորքն համա
խոհ քէին սատանայի։ Ի սատակումն գնաս
ցէ։ Ոչ է ընդ նեռանն 'ի դժոխս իջցէ։

բն 12. Եւ Ժ եղջիւրս զոր տեսեր Ժ թա
գաւորքն են որոց ոչ ևս էառեալ զթա
գաւորութիւն։ բայց զկարողութիւն որպ
զթագաւորս ժամ մի առցեն զկնի գազա
նին։

Տասն թագաւորքս այսոքիկ եղիցին 'ի մեկ
կատարածի աշխարհիս որպէս տէր աշխար
հի։ Որոց զերիսն սպանցէ նեռն և մնա
ցեալք է. ահաբեկեալք հնազանդեսցին
նեռանն։ Որքա՛ եղիցին զկնի գազանին։
Այսինքն հետևեսցին նեռանն։ Եւ ու
նիցին զթագաւորութիւն ժամի։ Այ
սինքն եղիցի կարճագոյն ժամանակն նոցա։
13. Սոքա զմի՛ խորհուրդ ունին, և զզօ բն
րութիւն և զկարողութիւնն իւրեանց գա
զանին տացեն։

Զմի՛ խորհուրդ ունին։ Այսինքն համա մեկ
խոհք են։ Եւ օգնեսցեն նեռանն։
14. Սոքա ընդ գառին պատերազմեսցին բն
և գառն յաղթեսցէ նոցա։ զի տէր տէրանցէ
և թագաւոր թագաւորաց։ և որք ընդ
նմա են՝ կոչին ընտրեալք և հաւատարիմք։
Ընդ գառին։ Այսինքն ընդ քրիստոնէից մեկ
ծառայք գառին ք̃ի պատերազմիցեն։ Եւ
գառն յաղթեսցէ նոցա։ Զի թէպէտ
ք̃ս ինքնին կարէ յաղթել. սակայն մինչ
տեսանէ թէ նեռն պաշտօնէիւք իւրովք
պատերազմի՛ ք̃ս ևս ծառայիւք իւրովք որք
են ընտրեալք և հաւատարիմք յաղթեսցէ
նոցա։

15. Եւ ասէ ցիս՝ ջուրսն զոր տեսա բն
նես ուր պոռնիկն նստի ժողովուրդք են
ազգք և լեզուք։

Պոռնկիս այսմիկ՝ Այսինքն հռոմայ ծա մեկ
ռայեսցեն ժողովուրդք ազգք և ազինք։

 Եւ

բն 16. Եւ ժ եղջիւրքն զորս տեսեր 'ի
գազանն, սոքա ատեսցեն զպոռնիկն՝ և կոր
ծանեսցեն զնա. և մերկացուսցեն զնա.
զմարմինն նր կերիցեն և զնա հրով այրեսցեն:
մեկ Վերոյ ասացեալք թագաւորքն ատեսցեն
զհռոմ քաղաք. կործանեսցեն զնա: Նոյ
նինքն քակեսցեն. կողոպտեսցեն զնա: Զբա
զումս հրով այրեսցեն: Զմարմինն նորա
կերիցեն: Նոյնինքն այնքան սաստիկ եղի
ցի ատելութիւնն. մինչ զի թուի թէ կա
միցին զմարմինն ուտել:

բն 17. Քանզի ած ետ 'ի սիրտս նոցա զի
արասցեն որ հաճոյ է նմա զի տասցեն զթա
գաւորութիւնն իւրեանց գազանին: մինչև
կատարեսցին բանքն այ.

մեկ Ած ետ 'ի սիրտս նոցա: Նոյնինքն ած
թոյլ տայ զի այրեսցեն կողոպտեսցեն. և
քակեսցեն զհպարտ և զպոռնիկ: Նոյնինքն
կռապաշտն հռոմ: Մինչև կատարեսցին
բանքն այ: Զի ած նախ ագուշակեաց
զայս աւերումս նախ 'ի ձեռն դանիէլի
հուսկ յետոյ 'ի ձեռս իմ յօհաննու ծա
ռային իւրոյ.

18. Եւ կինն զոր տեսեր է քաղաքն մեծ
որ ունի զթագաւորութիւն 'ի վերայ թա
գաւորաց երկրի:

Ե ւ տեսի զայլ հրեշտակ իջեալ յեր կնից՝ որ ունէր զկարողութիւն մեծ և երկիր լուսաւորեցաւ 'ի փա ռաց նորա։ բն
1.

Հրեշտակս այս է 'ի գլխաւոր հրեշտակաց մի 'ի յենն դասուց երկնից։ մեկ

2. Եւ աղաղակեաց զօրութեամբ մեծաւ
ասելով. Անկաւ անկաւ բաբելոն մեծ. բն
և եղև բնակարան դիւաց. և դարան պահ
պանից ամ̃ից անմաքրից ոգւոց. և ամ̃ից
անմաքուր թռչնոց. և ատելեաց։

Որպէս պատահեցի կուապաշտ հռոմ քաղաքին. որպէս պատահեցաւ բաբելոն քաղաքին. որ աստ զհռոմ ցուցանէ։ Յա ւուր միում մարգարէացաւ եսայիա վ̃ն անկմանն բաբելոնի ասելով։ Անկաւ բա բելոն այն փառաւորն 'ի թագաւորութ̃ն՝ հպարտ պանծալին քաղդէացւոց՝ որպէս կործանեաց ա̃ծ զսոդոմ և զգոմոր։ Նոյ ա̃մ իմանի վասն հռոմայ քաղաքին։ Եւ եղև բնակութիւն դիւաց՝ և դարան պահ պանից ա̃մ անմաքուր ոգւոյ՝ ա̃մ անմաքուր թռչնոյ։ Զայսմանէ ևս մարգարէացաւ եսայեայ ասելով. ժգ. գլուխ. և ժդ. թիւն. Ո՛չ հիմնեսցի մինչև յազգաց ազգ. Ո՛չ ևս դիցէ անդ արաբն զտաղաւար. և ոչ հո վիւքն։ Այլ հանգիցեն անդ գազանք. և լցցին տունն նորա վիշապօք. և բնակիցեն մեկ

անդ ջալամակ.ք. և մազոտք թաչիցեն անդ. ոզինք աղաղակեսցեն 'ի նմա. և ուշ կապարիք 'ի հեշտութեան նորա։ Ա.յտ քինկ.ք՝ բանքս՝ ոչ զայլ ինչ նշանակեն եթէ ոչ զանկումն զքակտումն՝ և զկործանումն հռոմայ. 'ի վախճանի աշխարհիս։ Որոյ քակտումն այնքան մեծ է լինելոց մինչ զի դարձցի յանապատ։ ուր վիշապ.ք և գա
զանք բնակեսցին.

բն 3. Օ ի 'ի գինւոյ պոռնկութեան նորա արբին ամ̅ հեթանոսք և թագաւորք երկրի ընդ նմա պոռնկեցան. և վաճառականք երկրի 'ի զօրութենէ փափկութեան
նորա մեծատունք եղեն.

մեկ Գ.ինին բարկութեան կոչէ զբաժակն վրիժուցն տանջանաց և կործանման զորս ամ̅ սակս պոռնկութեան. Ա.յսինքն վս̅ կռապաշտութեան տալոցէ հռոմայ։ և ստիպելոց զնա զի կամա ակամա արբցէ զնա։ Ա.ւ հռոմ զբաժակս այս զոր արբելոցէ ինքն. կարկառելոցէ զնոյն և այլոց. և արբուսցէ նոցա. Ա.յսինքն այնոցիկ զորս ընդ ինքեան եա պոռնկիլ. Ա.յսինքն զորս ստիպեաց 'ի կռապաշտութիւն. վաճառականքն որ.ք 'ի փափկութենէ հռոմայ մեծատունք եղեն. ցուցանէ զմեղս վաճառականացն հռոմայ.

Հարց։ Յօհաննէս զինչ պէտս կամ զինչ կարիս ունէր գրելոյ զապագայ անկումն հռոմայ։ Պատասխանի։ Ա.ռ 'ի մխիթա

քեղ զՀաւատացեալսն՝ որք յայնմիկ ժամա-
նակի 'ի ներքոյ դոմետիանոսի Հռոմայ կայ-
սերն տանջէին. զի մի' կործիցէին ը̃ք
մարտիրոսքն և այլք Հաւատացեալք թէ
աստուած զնոսա մոռանալոցէ.

Հարցն: Որով Հետև յօՀաննէս զդիտա-
ւորութիւն ունէր զայս գրելոյ. վասն էր
ոչ յիշէ զանունն Հռոմայ՝ այլ բաբիլոն
կոչէ զնա: Պատասխանի: Առ 'ի ոչ չար-
ժել 'ի յառաւել բարկութիւն զկայսրն
Հռոմայ՝ զի մի' աւելուցոյր սրտմտութիւն
դոմետիանոսի և այլոց իշխանացն Հռոմայ
դէպ 'ի Հաւատացեալ քրիստոնեայս:

4. Եւ լուայ զձայն յերկնից որ ասէր.
Ելէք 'ի նմանէ ժողովուրդք իմ. զի մի բն
մասնակիցք լինիցիք յանցանացն դորա և 'ի
Հարուածոց դորա:

Ազդէ քրիստոնէիցն զի փախիցեն 'ի կռա- մեկ
պաշտ Հռոմայ: յաւուրն վերջնում դա-
տաստանին. զի յաւուր յայնմիկ պարտէ
նմա կործանիլ: Այսպէս եսայի ազդէր
Հրէիցն փախչել 'ի բաբիլոնէ՝ ուստի յերկ-
րորդ գլուխն ասէ. Ելէք 'ի բաբիլոնէ
փախերուք 'ի քաղդէացւոց: Այսպէս և
ք̃ս ազդէ զՀաւատացեալսն՝ մատթէի 24
գլուխ ասելով. Յորժամ տեսանիցէք
զպղծութիւն աւերածոյն և այլն.

5. Քանզի Հասին մեղք դորա մինչև բն
յերկինս և յիշեաց տ̃ր զանօրէնութիւնս
դորա.

6. Հատուցէք դմա. որպէս և ինքն հա
տոյց ձեզ. և կրկնապատկեցէք ըստ գոր
ծոց իւրոց. 'ի բաժակս յորում խառնեաց
խառնեցէք դմա կրկնապատիկ.

Մեկ Որպէս երեմիաս զբաբիլոնէ ասէր. 'ի
Ծ երորդ գլուխս. Եւ որպէս արար բա
բիլոն զի անկցեն սպանեցեալքն 'իսրայէլ.
Որպէս 'ի բաբիլոնէ անկցին սպանե
ցեալքն յամ երկիր. Բաժակն ցուցանէ
զչափն հատուցման ըստ գործոց իւրաքանչ
իւր, ուրուք զորմէ տէրն ասէ. Որով չա
փով չափէք չափեսցի ձեզ. Կրկնապատիկ
Այսինքն ո՛վ տէք և հաւատարիմք ծա
ռայք իմք. որքան զձեզ վշտացոյց հռոմ
քաղաքն. քան զայն չափն առաւել վշտա
ցուցէք զդա. Զայնժամ վշտացնեն տէրք
զհռոմ. յորժամ յաւուրն դատաստանին
տեսցէ եղկելին զտէրսն փառաւորեցեալս
և զինքն պատժեցեալ. և իմասցէ բարւոք
զի ած զվրէժարեանն սրբոց խնդրէ.

բն 7. Օ ի փառաւորեաց զինքն՝ և 'ի փափ
կութեան եկաց՝ զայն չափ տուէք դմա
զտանջանս. և զսուգ. որ քան հաճեցաւ 'ի
հեշտութեան կալ. զի 'ի սիրտի իւրում
ասէ. Նստիմ թագուհի. և այրի ոչ եմ. և
զսուգ ոչ տեսից.

Մեկ Նստիմ թագուհի. Որդ աստ յայտէ զի
հռոմ 'ի վախճանի աշխարհիս առնլոցէ և
ունելոց զնախ կին և զանցեալ պայծառու
թիւնն կայսերական. և լինելոցէ տիրուհի

աշխարհի։ Ուստի տան Թագաւորք ե-
ղիցին ծառայք նորա։ Որպէս յայտ է 3
Թէ ուր աստ կինն նստի 'ի վերայ տան.
եղջերաւոր գազանի։ զորս և գինեաւն
պոռնկութեան իւրոյ արբեցոյց։ Իսկ սոքա
տան Թգ̃ւորքս զկնի ժամանակի ուրուք
պատերազմելոցեն ընդ պոռնիկ կնոջն և յաղ
Թելոց նմա. Այսինքն հռոմայ. և առեալ
զԹագաւորութիւնն նորա տացեն նեռանն
ՙՆստիմ Թագուհի։ Այսինքն Թէպէտ
արտաքսեցի և յինէն 'ի բաց ընկեցի զքա
հանայապետն հռոմայ որ էր այր իմ հոգևոր։
Այսինքն զփափն՝ սակայն ոչ եմ այրի՝ այլ
որպէս Թագուհի նստիմ. քան զի ունիմ
ընդ ինև բազում Թագաւորս. որք հնա
զանդին ինձ. վասն որոյ ոչ ես զուգ եմ
տեսանելոց։

8. Վասն որոյ յաւուր միում եկեսցեն բն
հարուածք նորա. մահ և սուգ. և սով. և
հրով այրեսցի. զի հզօր է ած. և դատես
ցէ զնոսա։

Այսինքն հանդոյն քաղդէացւոցն բաբե մեկ
լոնի, ոմանք տանջեսցին մահուամբ՝ ոմանք
սրով. ոմանք սովու. Օ ի զոր մահն սպա
նանէ. ոչ կարէ սուրն մ̃ռանել. բայց որ սո
վու տանջի. կարէ մահուամբ մեռանիլ։
Ուստի Ճշմարիտ է հին առակն որ ասէ.
Ո՛ւր ոսկի կայ՝ անդ ևս չքաւորութիւն
կարէ լինել։ ուր մեղր՝ անդ ևս լեղի. ուր
լերինք՝ անդ ևս դաշտք։ ուր զառ 'ի վեր՝


անդ.

անդ ևս զտու 'ի վայր։ Այսպէս ևս՝ ուր
վաւաշոտութիւն՝ անդ ևս տրտմութիւն.
ուր հեշտութիւն՝ ևս անդ ցաւ. ուր հպար
տութիւն. անդ ևս քամահանք. ուր յա
գուրմն. անդ ևս քաղց. ուր ուրախութիւն.
անդ ևս սուգ։

ըն 9. Եւ լացցեն և ողբասցեն 'ի վերայ նորա
թագաւորք երկրի. որք ընդ նմա պոռն
կեցան, և 'ի փափկութեան կացին. յորժամ
տեսցեն զծուխն հրդեհման նորա։

մեկ Թէպէտ. Ժ. թագաւորքն մեծամեծք
պատերազմեալք ընդ հռօմայ կործանեա
ցեն զնա. սակայն եղիցին այլք թագաւորք
փոքունք և իշխանք որք ողբասցեն և կո
ծեսցեն 'ի միոյ կողմանէ վասն կործան
մանն հռօմայ. Իսկ 'ի միւս կողմանէ վա̄
երկիւղին. զի մի ևս ընդ նոսա առնիցեն.
Ժ. թագաւորք զայն. զոր ընդ հռօմայ
արարին.

ըն 10. 'Ի բաց կացցեն վասն երկիւղին և աս
ասցեն. վա՛յ վա՛յ քաղաքին այնմիկ բաբե
լոնի. քաղաքին այնմիկ ամրոյ. զի 'ի միում
ժամու եկն դատաստան նորա

11. Եւ վաճառականք երկրի ողբասցեն
մեկ Զի թէպէտ այլ ուրեք կարեն ևս գնել
և վաճառել. սակայն զօգուտս առաւել
'ի հռօմայ առնուին,

12. Եւ շահն որ 'ի քէն ո՛չ ևս լիցէ ոս
կւոյ՝ և արծաթոյ՝ և ականց՝ պատուականաց
և մարգարտոյ՝ և բեհեզոյ՝ և ծիրանւոյ՝ և ոս

 կեթեղ

կէթելի, և որդան, և ամ փայտ խնկոց. և
ամ անօթ փղոսկրեայ. և ամ անօթ 'ի փայ
տէ պատուականէ ։
13. Եւ 'ի պղնձոյ՝ և յերկաթոյ՝ և 'ի կճոյ
և 'ի կինամոնոյ և խունկ. և իւղ. և կնդրուկ
գինի. և ձէթ, նաշիհ և ցորեան. և ստա
ցուածք ամ. արջառ. և ոչ խար. երիվա
րաց՝ և կառաց. որ վայելէ մարմնոյ և ոգւ
ոյ մարդկան ։
14. Եւ պտուղն ցանկութեան հոգւոյ
քո հեռացան 'ի քէն. և ամ պարարտք. և
պայծառք կորան 'ի քէն, և ոչ ևս գտցես
զնա ։
15. Վաճառականք այսոցիկ՝ որք մեծա
տուք եղեն, 'ի բաց կացցեն 'ի նմանէ վասն
երկիւղին տանջանացն նորա լալով և ող
բալով ։
16. Եւ ասասցեն վայ վայ քաղաքին այն
մեծ որ զգեցեալ էր զբեհեզն և զծիրա
նիս. զորդան. և զոսկէզօծս քարամբ պա
տուականաւ և մարգարտօք ։
17. Զի 'ի միում ժամու թողան այս
քան հարստութիւնք. և ամ որ 'ի լճի
նաւէ. և նաւաստիք և որք 'ի ծովու գոր
ծեն 'ի բաց կացին ։
18. Եւ աղաղակեցին տեսանելով զծխե
ղին հրդեհեցման նորա և ասացին ։ Ո՞ նմա
նի քաղաքիս այսմիկ մեծի ։
19. Եւ արկին զհող 'ի վերայ գլխոց իւ
րեանց. և աղաղակեցին ողբալով և կոծե

 լով

լով և ասացեն. վայ վայ քաղաքին այնմիկ
մեծի. յորում հարստացան ամենեքեան
որք ունէին զնաւս 'ի ծովու 'ի գնոց նո
րին. քանզի 'ի միում ժամու քակտեցաւ։
20. Ուրախ լերուք 'ի վերայ նորա երկինք
և ս͞բ առաքեալք և մարգարէք, զի դա
տեաց ա͞ծ զդատաստան ձեր 'ի նմանէ.
ըն 21. Եւ եառ հրեշտակ մի հզօր զքար մի
մեծ իբրև զերկան. և եարկ 'ի ծով ասե
լով. այսու արձակմամբ անկցի բաբելոն
քաղաք մեծ. և այլ ոչ ևս գտցի։
մեկ Զանազան և բազմադիմի՝ մեկնեն վարդա
պետք զտեղիս այս. Բայց ես ասեմ թէ
հրեշտակս այս էր ճշմարիտ հրեշտակ մինն
'ի հրեշտակաց երկնից. Այսու արձակմամբ
Այսինքն մեծաւ որոտմամբ. մեծաւ
դղրդմամբ. և ահագին ձայնիւ անկցի բաբի
լոն. Այսինքն հռոմ. որ ինմա եղեալ զամպա
րիշտոն նշխանակէ. 'ի ծով. Այսինքն՝ յանդունդ
դըժ դժոխոց. որպէս որոտայ ծովն և
դղրդայ յորժամ անկցի 'ի նմա երկանաքար
նմանէ տեսիլս այս բանիցն եսայեայ
որ վասն բաբելոնի ասէ 'ի ե. գլուխ։
Յորժամ կատարեսցես ընթեռնուլ զգի
րս այս՝ կապեսցես առնմ զքար. և արկցես
զնա 'ի մէջ եփրատայ և ասասցես. Այս
պէս ընկղմեսցի բաբելոն՝ և մի՛ յարիցէ յե
րեսաց չարեացն. զոր ես ածեմ 'ի վերայ
նորա և ցրուեսցի.
ըն 22. Ձայն երգեցչաց և երաժշտաց և

 թմբկահա

Թմբկահարաց եւ փող մի՛ լուիցի եւս 'ի քեզ.
եւ ամ արուեստաւոր եւ արուեստ մի՛ գտցի
եւս 'ի քեզ, եւ ձայն երկանի մի լուեսցի եւս
'ի քեզ.

Ձայն երկանի մի՛ եւս լուիցի 'ի քեզ. զի ոչ մեկ
ոք մնասցէ որ աղասցէ. քան զի յանմար
դաբնակ անապատ դարձցի Հռոմ.

23. Եւ լոյս ճրագի մի՛ լուսաւորեսցի այլ բն
եւս 'ի քեզ. եւ ձայն փեսայի եւ հարսին ոչ եւս
լուիցի 'ի քեզ. զի վաճառականք քոյք էին
իշխանք երկրի. զի 'ի դիւթութիւնս քո
մոլորեցան ամ ազինք.

Զի վաճառականք քոյք իշխանք էին եր մեկ
կրի. Այսինքն իշխանք քո այնքան տո
ւեալք էին զինքեանս ագահութեան. մինչ
զի 'ի յառ եւ 'ի տուր եւ 'ի յառնուլ զկաշառս՝
եւ զտոկոսս ոչ իշխանք եւ թագաւորք՝ այլ վաճա
ռականք թուէին. Ի դիւթութիւնս քո
մոլորեցան ամ ազինք. Դիւթութիւնն է
կռապաշտութիւնն հռոմայեցւոց. եւ այլ
կախարդութիւնս՝ որովք մոլորեցուցանէ
ին զազգս եւ զազինս.

24. Եւ 'ի նմին արիւնն մարգարէից եւ սր բն
բոց գտաւ. եւ ամից այնոցիկ որք սպանան
'ի նմին.

Արդ տես ո՛վ սիրելի եղբայր իմ. տես մեկ
ո՛վ իմաստուն ընթերցող. թէ զինչ է փա
ռքն աշխարհիս. Տես թէ որքան կարճ է
եւ թշուառական վախճանն բաբելոնի.
Այսինքն մեղաց եւ անօրէնութեան եւ աշ

 խարհիս

խարհիս։ Ո՞ւրդ ուրէ ներոն. ո՛ւրէ տրայ
իանոս՝ ո՛ւրէ փոմպէոս՝ ո՛ւրէ ռոմուլոս՝ ո՛ւրէ
յուլիոս. ո՛ւրէ դէոկղետիանոս՝ ո՛ւրէ դե
ճիոս՝ ո՛ւրէ սիլա՛. ո՛ւրէ օգոստոս։ Սոքա
ամենեքեան կայսերքէին հռոմայ. Բայց
կորեաւ յիշատակ սոցա. և կենդանւոյն
իջին 'ի դժոխս։ Ո՞ւրդ ո՛ւրէ նինուէ. ո՛ւրէ
բաբիլոն. ո՛ւրէ հեքբաթան. ո՛ւրէ սուսա՛
ո՛ւրէ եդէմ. ո՛ւրէ սոդոմ. ո՛ւրէ գոմոր։
ո՛ւրէ կռապաշտն հռոմ թագուհին աշ
խարհիս։ Ո՞ւրդ՝ այժմ հռոմ թաղեցեալ
կայ 'ի մէջ հռոմայ. զի այժմ հռոմն քրիստո
նեայ և ուղղադաւան կոխոտէ զհռոմն կռա
պաշտ։ Տես թէ զի արդ՝ մեծութին 'ի փոք
րութի՝ հարստութին յաղքատութի. ծիծաղն 'ի
սուգ. ուրախութիւնն 'ի տրտմութիւն.
փափկութիւնն 'ի ցաւ չուտով փոխի։
Սուգն տիրէ սկզբանն խնդութեան։
Որպէս անցանէ փառք աշխարհիս։ Վա՛յ
քեզ բաբիլոն. վա՛յ քեզ բաբիլոն. թէ զի
արդ 'ի յերկնից 'ի կործանումն իջեր. և 'ի
կործանմանէ 'ի դժոխս գահավիժեցար։
Ո՛ւրէ այժմ բաժակն քո ոսկեա՛։ Ո՛ւրէ
գինին պոռնկութեան քո որով արբեցու
ցանէիր զհեթանոսս։ Ո՛ւրէ բեհեզ և ծի
րանին։ Ո՛ւրեն եղջիւրքն քո. Ո՛ւրեն. ժ
թագաւորքն որ քեզ ծառայէին. ամենե
քեան անցին՝ որպէս զծուխ ցնդեցան. և
որպէս զստուեր փախեան. Եղեն կերա
կուր որդանց խորտիկք դիւաց. և փուքօք

 բորբոքե

բորբոքեցուցիչք հրոյն դժոխոց։ Ո՛հ թէ
ո՛րքան յունայն՝ որքան կարճ. որքան խա
բող. եւ որքան գարշելի է ա̃մ փառք աշ
խարհիս։ Ո՛վ ընթերցող եղբայր՝ փախիր՝
՚ի բաժակէն բաբիլոնի, որ թէպէտ ըն
սկզբան քաղցրացուցանէ սակաւ ինչ զբե
րանդ մարմնոյդ. սակայն որպէս զլեղի
դառնացուցանէ զհոգիդ յաւիտենականա
բար։ Այլ կամեաց ըմպել զբաժակն զայն
զոր ըմպեաց Ք̃ս. եւ համայնք ս̃բք նորա։
Մ՝ի ծառայեր բաբիլոնի՝ այլ եկեղեցւոյն
Ք̃ի. մի՛ սատանայի՝ այլ Ա̃յ, մի՛ մոլորութ̃ն
այլ առաքինութեան։ Ողջ լեր։

## Գլուխ ինն եւտասն երորդ.

1. Եւ յետ այսորիկ լուայ որպէս բն
զձայն խմբից բազմաց յերկինս
որք ասէին Ալէլուիայ. կեցու
թիւն՝ եւ փառք՝ եւ զօրութիւն
Ա̃յ մերում։
Ալէլուիա. Այսինքն օրհնեցէք զԱ̃ծ։ մեկ
2. Զի ճշմարիտք եւ արդարք դատաւորք բն
են նորա. որ դատեցին զպոռնիկն մեծ՝
որ ապականեաց զերկիր պոռնկութեամբ
իւրով. եւ խնդրեաց զվրէժ արեան ծառայ
ից իւրոց ՚ի ձեռաց նորա։
3. Եւ դարձեալ ասացին Ալէլուիա, եւ բն
ծուխն նորա ել յաւիտեանս յաւիտենից։
Այսինքն օրհնեցէք զԱ̃ծ. զի ծուխն՝ մեկ

 Որէ

Այսինքն տանջանքն բաբիլօնի մեծալոց է
յաւիտեանս յաւիտենից ։
4․ Եւ անկան․ իդ․ երիցունքն և․ դ․
կենդանիքն, և երկիրպագին այ․ նստողին
՚ի վերայ աթոռոյն ասելով․ Ամէն ։ Ալէ
լուիա ։
5․ Եւ ձայն յաթոռոյն ելաւ ասելով․ գո
վեցէք զած մեր ծառայք նորա, և որք
երկնչիք ՚ի նմանէ փոքունք և մեծամեծք ։
6․ Եւ լուայ որպէս զձայն ամբոխի մեծի
և որպէս զձայն ջուրց բազմաց․ և որպէս
զձայն որոտմանց մեծաց որք ասէին ։ Ալէ
լուիա․ զի թագաւորեաց տր ած մեր ամե
նակալ ։
բն 7․ Խնդասցուք և ցնծասցուք և տացուք
զփառս այ․ զի եկին հարսանիք գառին․
և կին նորա պատրաստեաց զինքն․
մեկ Այսինքն զի որպէս արտաշէս յորժամ ար
տաքսեաց զասթինենէս կինն իւր․ արար
զկին իւր տիրական զեսթեր․ և վնչ արար
զխրախճանմեծ, Սպ և ածն հայր քամա
հելով զժողովն հրէից՝ հարսնացոյց զեկե
ղեցին իւր ընդ որդւոյն իւրում ։ Եւ պսա
կն և հարսանիքն եղանելոցէ ՚ի կատարա
ծի աշխարհին․ որ մինչ մերձենայցեն ցըն
ծացեալք ուրախասցին ամենեքեան ։ Եւ
կինն նորա պատրաստեաց զինքն ։ Այսին
քն եկեղեցին զարդարեաց զինքն եօթեամբ
զարդուք․ Այսինքն՝ Նահապետօք․ Մար
գարէիւք․ Առաքելօք․ Վարդապետօք ․


Մարտիրո

Մարտիրոսօք. Խոստովանօղօք. և Կուսա
նօք։ Եւ այսօքիւք որպէս զանազանիւք
զգեստուք զարդարեցեալ դիմեսցէ յաւու
րըն դատաստանին յառագաստն յաւիտե
նական փեսային Քի։

8. Եւ տուաւ նմա զի զգենուցու բե
հեզս պայծառ և սպիտակ. զի բեհեզն է
սրբոց արդարութիւնն։

9. Եւ ասէ ցիս՝ գրեա երանի որք 'ի յըն ըն
թրիան հարսանեացն կոչեցեալ քեն. և ա
սաց ցիս՝ այսօքիկ բանքս այ ճշմարիտք են։
Զայս բանս ասաց յոհաննու հրեշտակն մեկ
այն որ զբոլոր յայտնութիւնս այս նոյնոյ
յոհաննու ծանոյց և յայտնեաց։ Զորմէ
'ի 18 գլուխ ասացաւ. Երանի որ առ յըն
թրիան հարսանեացն գառին կոչեալք են։
Բայս ցուցանէ զհարսանիսն՝ զոր Քս առնե
լոց է ընդ եկեղեցւոյն. Եւ ընթրիս կոչէ
զի որպէս ընթրիան լինի ըն վերջնում ժա
մուն աւուրն։ Այ ևս հարսանիքն Քի ընդ
եկեղեցւոյն լինելոց է 'ի կատարածի աշ
խարհիս. որ է վերջն և վախճան աշխար
հիս։

10. Եւ անկայ առ յոտս նորա որպէս զի ըն
երկիրպագցեմ նմա. և ասէ ցիս՝ տես մի ա
րասցես զայս. զի ծառայակից եմ քո. և
եղբարցն քոց ունօղացն զվկայութիւնս
յի։ Այ երկիրպագեա։ Զի վկայութին
յի է ոգի մարգարէութեան։
Բայենքն՝ վասն բարւոյ աւետեացն զոր մեկ


կա

եւ ինձ հրեշտակն յաղագս կործանմանն
բաբելոնի. և յաղագս մերձգոլոյն հարսա
նեացն գառին: մեծաւ խնդութեամբ ան
կայ առ յոտսն հրեշտակին. առ 'ի պագանել
զոտսն և շնորհակալ լինել: Իսկ ես յօհան
նէս համարէր թէ հրեշտակն զոր ինչ
յայտնելոցէր նմա զամ յայտնեաց և զամ
ասաց. ոչ ես է խօսելոց ընդ նմա. և եղև
վերջ և վախճան խօսակցութեան. վասն
որոյ յօհաննէս 'ի վախճանի կամեցաւ համ
բուրել զոտսն նորա և շնորհակալ լինել
զնմանէ. վասն այսքանեաց բարերարու
թեանց: Տես մի' արասցես զայդ զի ծա
ռայակից եմ քո. և եղբարցն քոց մարգա
րէից: Այսինքն դու ով յօհաննէս մարգա
րէ ես և առաքեալ քի, և քարոզատու մեծ
և ես ոչ եմ մեծ քան զքեզ. այլ հանգէտ
քո. զի որդ ուրեմն կամիս երկիրպագա
նել ինձ: Որք ունին զվկայութիւնն յի:
Այսինքն որք ունին զոգի մարգարէութե:
բն 11. Իսկ տեսի զերկինս բացեալ. և ահա
ձի սպիտակ. և որ նստէր 'ի վերայ նորա
կոչիւր հաւատարիմ և ճշմարիտ. և արդա
րութեամբ դատէ և պատժէ.
մեկ Հրեշտակն ցուցանէ զքս որ էրն յերկինս
ընդ հրեշտակաց. և ընդ երանեցելոց ոգ
հզօր պատերազմող. առ 'ի պատերազմել
ընդ նեռան. նախ քան զհռչակումն հար
սանեացն ընդ եկեղեցւոյն: 'Ի վերայ սպի
տակ ձիոյ նստի: սպիտակ գոյնս այս նշանէ
 երջանկու

երջանկութեան և յաղթութեան ։ վասն
որոյ առաջինք հեթանոսքն մինչ դառնայ
ին յաղթող 'ի պատերազմէն, զկառս յոր
նստէին սպիտակ ձիօք քարշել տային,
12. Իսկ աչք նորա որպէս զբոց հրոյ և բն
'ի գլուխ նորա պսակք բազումք. և ունի
զանուն գրեցեալ զոր ոչ ոք ծանեաւ ե-
թէ ոչ ինքն ։
Աչքն բոցակէզք ցուցանեն զսրտմտութ̅ մեկ
վրէժ խնդրութիւնն ք̅ի դէպի յամբարիշ
տսն. մեծ զօրութիւն կայանայ յաչսն կեն
դանեաց ։ Օ.ի ոտ̅ պղինձս ասէ ։ Որ արբ
օձն հայելով սպանանէ զմարդ. Իսկ հա
կառակ սմին. Ջայլամ հաւն և կրիայն քաղ
ցրաբար նայելով առ ձուս իւրեանց տա
ծեն զնոսա ։ Եւ պատճառ սորինէ. զի
որպէս ասէ դամասկացին. հոգին կեն
դանեացն 'ի ձեռն աչաց ներհեղուն ։
Աստի ք̅ս յաւուրն դատաստանի որպէս
հրաշխօք աչօք ահաբեկեսցէ զամբարիշտս ։
և քաղցրաբար նայելով առ արդարսն սփո
փէ զնոսա ։ Օ՛այս հայցէր դաւիթ ասե
լով. նայեաց առ իս և ողորմեաց ինձ ։ Եւ
'ի գլուխ նորա պսակք բազումք ։ Ունի ք̅ս
պսակս բազումս. քան զի ո՛չ է որպէս այլք
թագաւորք. որոց իւրաքանչիւրն միում
միայն թագաւորութեան տիրէ Այսինքն
իւրում թագաւորութեանն ։ այլ է տ̅ր տե
րանց և թագաւոր թագաւորաց. Ունէր
զանուն գրեցեալ 'ի պսակն ։ Այսինքն


բանն

բանն ա͞յ. և գոլն որդի ա͞յ զոր ոչ ոք կա
տարելապէս կարէ գիտել և ճանաչել ե
թէ ոչ ինքն միայն։

բն 13. Եւ զգեցեալ էր զհանդերձ ներկեալ
արեամբ. և կոչիւր անուն նորա բան ա͞յ։

մեկ Ներկեալ էր արեամբ զգեստն ք͞ն՝ արեամբ
ամբարշտաց զոր եհեղ՝ պատժելով զն͞ս և
զոր հեղլոցէ զկնի սակաւուց։ վ͞ս որոյ մինչ
եսայի եհարց զք͞ս և ասաց.63 գլ. Ընդէր են
կարմիրք ձորձք քոյք. Պատասխանեալ ք͞ն
ցեսայի ասաց. Զհնձան կոխեցի միայն՝
կոխեցի զնոսա ցասմամբ իմով. և ներկե
ցան արեամբ նոցա հանդերձք իմ։

բն 14. Եւ զօրքն որք էին յերկինս հետևէին
նմա սպիտակք ձիօք. զգեստաւորեալք
բեհեզօք սպիտակօք և մաքրիւք։

15. Եւ 'ի բերանոյ ելանէր սուր երկսայ
րի. զի նովաւ հարցէ զազգս. և հովուեսցէ
զնոսա գաւազանաւ երկաթեաւ. և կոխես
ցէ զհնձանն գինւոյն ցասմանն ա͞յ ամենա
կարողի։

մեկ Սուր երկսայրինէ սուր մի երկոյ բերանոյ
որ կտրէ յերկու կողմանէ. Ի.յս 'ի բերա
նոյն ք͞ն ելանէ առ ամբարիշտս յորժամ ք͞
մահուամբ պատժեսցէ զնոսա։ Ի.յինքն
սաստ մարմնով. և անդ հոգւով. Եւ եւս
ք͞. բերանի սուր ելանէ 'ի բերանոյն ք͞ն.
մինչ յաւուրն դատաստանի զերկուս իրս
կտրեսցէ բերանովն իւրով։ Ի.յինքն ըզ
յաւիտենական կեանն 'ի մեղաւորաց սաս

լով․ Մ՚ըրթայք յինէն անիծեալք․ նա՛ և
զյաւիտենական մահն յարդարոց ասելով․
եկայք օրհնեալք հօր իմոյ․ Սա՛ կոխեաց
զհնձան գինւոյն ցասմանն բարկութեան
ա̃յ ամենակարողին։ Այսինքն ըստ ամենա
կարող զօրութեանն կոխեալ տանջեաց
զնոսա։ Նա՛ հովեաց զնոսա գաւազանաւ
երկաթեաւ։ Փայտեա գաւազանն շուտով
կոտրի․ իսկ երկաթեայն յերկար մնայ․ և
ցուցանէ զյաւիտենականութիւնն տանջա
նաց։

16․ Եւ ունի 'ի հանդերձս իւրս և 'ի յան դամս իւր գրեցեալ․ Թագաւոր Թագաւո րաց և տ̃ր տերանց։ բն

Հարց․ Թէ ե̃էր յանդամսն ք̃ի գրեցեալ մեկ
կայր բանս այս՝ տ̃ր տերանց և Թագաւոր
Թագաւորաց։ Պատասխանի։ Զի ան
դամքն ք̃ի ցուցանեն զմարդկութիւնն ք̃ի
Վասն զի ք̃ս զմարդկութիւնն իւր յան
դամոցն յակոբայ և դաւթի էառ․ զի
ծննդական անդամն մարդոյ մերձէ առ
անդամսն որ մերձք են առ բարձսն ոտից
Ուստի քան զի ք̃ս զմարդկութիւնն իւր 'ի
յակոբայ և 'ի դաւթեայ ծննդական մասա
նէ էառ․ և այս ծննդական մասն մերձա
գոյն մասնէ անդամոցն։ Վասն որոյ մինչ
ք̃ս զմարդկութիւնն իւր 'ի ծննդական
մասանէ էառ գրէ թէ զնոյն մարդկութի̃ն
յանդամոց նոցին էառ։ Ուստի մինչ 'ի վե
րոյ ասելով թէ․ 'ի գլուխ նորա անուն

գրեցեալ զոր ոչ ոք ծանեաւ. եթէ ոչ
ինքն միայն. այսու եցոյց զտ՟րութիւն և
զթագաւորութիւն բանին ա՟ծութեանն։
Աստ մինչ ասէ թէ. Յանդամս գրեցեալ
տ՟ր տերանց և թագաւոր թագաւորաց.
ցուցանէ թէ Ք՟ս ո՛չ միայն ըստ ա՟ծութ՟ն
այլ և ըստ մարդկութեան է տ՟ր տերանց
և թագաւոր թագաւորաց։

բն 17. Եւ տեսի հրեշտակ մի որ կայր յարե
գական՝ և աղաղակեաց ՚ի ձայն մեծ ասելով
ցա՟մ թռչունս որք թռչէին ՚ի մէջ երկ
նից. Եկայք ժողովեցարուք առ ընթրի
ս մեծ ա՟յ։

մեկ Այն հրեշտակին յարեգական ցուցանէ թէ
զվրէժ խնդրութիւնս այս որով Ք՟ս պատ
ժէ զնեռուն և զնեռուայինսն. ո՛չ եղիցի
գաղտ և ծածուկ. այլ յաչս ամենից ստեղ
ծուածոց. Եւ կոտորումս այս նեռնայ
նոցն՝ այնքան մեծ և սաստիկ լինելոց. և
այնքան մեծ արիւնահեղութիւնն նոցա.
մինչ զի առ ՚ի գիշատել զդիս նոցա. յա՟մից
կողմանց աշխարհիս գայցեն համայն գի
շակերք թռչունք։ Ընթրիս կոչէ. զի
՚ի կատարածի աշխարհիս է լինելոց։ մեծ
ասէ. զի սաստիկ լինելոց։ Ա՟յ յորջորջէ
զի ա՟ծ է առնողն։ Զայս կամէր ծանու
ցանել ա՟ծ՝ որ յառաջմէ ՚ի ձեռն եզեկիէ
լի ասաց 39 գլուխ. Ասա ա՟մ թռչնոց.
և առ հասարակ հաւուն. Նա և համայնից
գազանաց ագարակի. ժողովեցարուք. մեր

 ձեցարուք.

ձեցարուք. համընթացէք յամենուսն ան-
ցուարակնիմ զոր ես մատուցանեմ ձեզ.
զնոխազ մեծ 'ի վերայ ամենից լերանց իս-
զի կերիցէք զմիսն. և ըմպիցէք զարիւնն.
18. Զի կերիցէք զմարմինս թագաւորաց ըն
և զմարմինսն հազարապետաց. և զմարմին-
սն հզօրաց. և զմարմինսն ձիանց. և նստե-
լոցն 'ի նոսա, և զմարմինսն ամենից ազա-
տաց, և ծառայից փոքունց և մեծաց.
19. Եւ տեսի զգազանն և զթագաւորս
երկրի և զզօրս նոցա ժողովեցեալս առ 'ի
յառնել զպատերազմ ընդ նմա որ նստեալ
նէր 'ի ձի. և ընդ զօրացն նորա. Զայսմա-
նէ խօսեցաք 'ի վախճանի 17 գլխոյն.
20. Ըմբռնեցաւ գազանն և ընդ նմին ըն
սուտ մարգարէն. որ արար զնշան առա-
ջի նորա. որովք պատրեաց զայնոսիկ՝ որք
առին զկնիքն գազանին՝ և որք երկիրպա-
գին պատկերին նորա. և կենդանւոյն ե-
դան այսոքիկ երկոքեանս 'ի լիճն հրոյ
բորբոքելոյ ծծմբամբ.
Գազանն է Նեռն՝ և սուտ մարգարէն կա- մեկ
րապետն նորա.
21. Եւ այնք սպանան սրովն նստողին
'ի ձի, որ ելն 'ի բերանոյ նորա և համայնք
հաւք յագեցան մարմնովք նոցա.

բն 1· Եւ տեսի այլ հրեշտակ իջեալ յեր
կնից՝ որ ունէր զփականս անդն
դոյ· և զշղթայս մեծ 'ի ձեռին
իւրում:

մեկ Հրեշտակս այս է հրեշտակ մի որպէս վե
րակացու 'ի վերայ դժոխոց· և ունի զփա
կանս· Այսինքն զկարողութիւն բանալոյ
զդժոխս՝ և 'ի նմին ներ փակել զսատանայն
Այսինքն՝ զսադայել: Ընդ և կապելոյ
զնա շղթայիւ մեծաւ: Այսինքն հրամա
նաւն այ̃:

բն 2· Եւ կալաւ զվիշապն՝ զօձն հին որ է
սատանայ և բանսարկու՝ և կապեաց զնա
զամս հազար:

մեկ Եւ կապեաց զնա զամս հազար Այսինքն
'ի քէ̃ մինչև ցնեռն: Եւ երկար ժամա
նակս այս: Այսինքն 'ի քէ̃ մինչև ցնեռն·
հազար ամ ասի· Վասն կատարելութե̃
այս թուոյս հազար զի ա̃ծաշունչ գիրն ըզ
հազար ամն փոխանակ բազմաց և ընդ
հանրական ժամանակի կալնու· Այսպէս
մինչ դաւիթ ասէ հազար ամ յաչս տն̃
որպէս օր երեկի· աստ ոչ իմանի հազար
ամ̃ն որպէս հազար ամ միայն· այլ հասա
րակ ժամանակն 'ի ստեղծմանէ աշխարհիս
մինչև 'ի վախճան նորա:

բն 3· Եւ էարկ զնա յանդունդն և փակեաց
և կնքեաց 'ի վերայ նորա զի մի այլ ևս մո


լորեցուս

լորեցուսցէ զազգս՝ մինչև կատարեսցին
հազար ամքն. և զկնի այսորիկ պարտ է
նմա արձակիլ սակաւ ժամանակաւ.

Որպէս շղթայն զհրամանն այ ցուցանէ. Մեկ
սոյնպէս և աստ փակումն և կնիքն զհաս
տատուն կամքն այ ցուցանէ որով սատա
նայն 'ի յանդունդս դժոխոց որպէս կա
պած և կնքած կացցէ. Ապա թէ ոչ զի
արդ կարէ կապիլ անմարմին սատանայն.
Եւ 'ի ժամանակի նեռանն արձակեսցի
թոյլ տուութեամբն այ. և մնասցէ սակաւ
Այսինքն զամս գ̃ և կէս.

4. Եւ տեսի զաթոռս և նստան 'ի վերայ բն
նոցա և դատաստան տուաւ նոցա. և տեսի
զհոգիս գլխատելոցն վասն վկայութեան
յի. և վասն բանին այ. և որք ոչ երկիրպա
գեցին գազանին և ոչ պատկերի նորա.
ոչ և առին զկնիք նորա 'ի ճակատս և 'ի
ձեռս իւրեանց. և կեցան և թագաւորե
ցին ընդ քի զամս հազար.

Աթոռք այսորիկ են աթոռք յորս բազ Մեկ
մեալք կան յերկինս ընդ քի հոգիքն նոցա
որք գլխատեցան վասն վկայութեանն յի
և վասն բանին այ. Ոչքա որպէս դատա
ւորք նստին՝ զի արդէն ետ տծ նոցա յա
ւուրն դատաստանի նստիլ ընդ քի և դա
տել զամբարիշտս և թագաւորեսցեն ընդ
քի զամս հազար. Այսինքն մինչև ցգա
լուստն նեռանն.

5. Այլք մեռելոցն ոչ կեցան՝. բն

Ճկ Այսինքն դատապարտեցելք ոչ կեցան 'ի
կենաս երանելիս. այլ գնացին 'ի մահն
առաջին, Այսինքն 'ի մահն հոգւոյն 'ի
դժոխս։ Մինչև կատարեսցին հազար ամքն
Այսինքն մինչև գայցէ օրն դատաստանին.
զի յայնժամ երթիցեն 'ի մահն երկրորդ։
Այսպէս. Զի մեղաւորքն զ Բ̅. մահ ու
նին զառաջին և զյետին. զնախկին և զերկ
րորդ։ Նախկին և առաջին մահն է մինչ
այժմ որ է ժամանակն հազար ամաց մե
ռանին և երթան հոգւով 'ի դժոխս. և
ունիցին զառաջին մահն։ Այսինքն հոգ
ւոյն միայն. Իսկ մինչ կատարին հազար
ամքն և եկեսցէ օրն նոքա երթիցեն 'ի
դժոխսն. ոչ միայն հոգւով. այլ և մարմնով.
և այս մարմնոյ մահս, կոչի երկրորդ մահ.
Իսկ համայնք. արդարքն ևս ունին զեր
կուս կենաս։ Նախ և առաջին կեանքն է
մինչ մեռանին. և հոգւով միայն կեան յար
քայութեան։ Իսկ մինչ կատարին հազար
ամքն. Այսինքն յորժամ եկեսցէ օրն դա
տաստանին՝ յայնժամ առցեն և զփառա
մարմնոյն՝ և այս փառս մարմնոյս եղիցի
երկրորդ կեանք։

Քն 6. Երանելի սրբոցն որք ունին զմասն 'ի
յարութեան առաջնում. զի 'ի վերայ
այսցիկ երկրորդ մահն ոչ ունի կարողութի.
այլ եղիցին քահանայք ա̅յ և Ք̅ի. և թագա
ւորեսցեն ընդ նմա զամս հազար.

7: Եւ յորժամ կատարեսցին հազար ամքն



արձակեսցի

արձակեսցի սատանայն 'ի բանտէ իւրմէ·
և ելցէ և մոլորեցուսցէ զազգս որք են 'ի
վերայ չորից անկեանց երկրի· զԳոգ և
զՄագոգ· և ժողովեսցէ զնոսա 'ի պատե
րազմ· որոց թիւն է որպէս զաւազ ծովու։
Յայս Գոգ և Մագոգ ոչ են տարածեցեալք Մեկ
'ի վերայ չորից անկեանց աշխարհիս· այլ
կերպ մի ազգքեն որք ունին զԹագա
ւոր իւրեանց զմինն 'ի տասանց Թագաւո
րացն։ Նաև Թուի Թէ այսորիկ Գոգ և Մա
գոգ եղելոցք են յոյժ պատերազմօղք՝
գազանաբարոյք՝ զօրեղք և բարբարոսք։
Վասն այսորիկ յոհաննէս զանուանէ կոչէ
միայն զնոսա։ Նաև հաւատալիէ զի սոքա
եղելոցք են յազգէն արաբացւոց· և սոքա
խոստաբար պատերազմեսցին վն՟ նեռին։
8· Նաև ելին 'ի վերայ լայնութեան երկ բն
րի՝ և պատեցին զբանակս սրբոց և զքա
ղաքն սիրական։
Յայսինքն ընդ կողմանս երկրի շրջեցան։ Մեկ
Պատեցին զբանակս սրբոց Յայսինքն զայն
տեղիս Թագստեայս՝ ուր հաւատացեալքն
երամ երամ Թագուցեալք կային։ որպէս
առնէին հրէայքն 'ի ժամանակի մակա
բայեցւոց։ Նաև զքաղաքն սիրական, Որդ-
սիրական քաղաքն է եդեմ։ Ո ի Թէպէտ
եդեմ եղելոցէ Թագաւորանիստ քաղաքն
նեռան։ Սակայն բազումք 'ի քրիստոնէից
գտցին անդ։ որպէս 'ի յերկրի սրբում
ուր բնակեցաւ քս։ Նաև բազումք ոչ մի


այն

ոյն քրիստոնեայք՝ այլ և բազումք ընդու-
նելոցք են զհաւատն քո. և երթալոցք են 'ի
յետմ առ 'ի լնել զքարոզութիւնն քո 'ի
Ենովքայ և Եղիայէ.

բն 9. Եւ էջ հուր յերկնից յԱյ. և եկուլ
զնոսա. և սատանայն որ մոլորեցուցանէր
զնոսա առաքեցաւ 'ի գուբն հրոյ. և ծծըմ
բոյ. ուր և գազանն.

10. Եւ սուտ մարգարէն տանջեսցին տիւ
և գիշեր յաւիտեանս յաւիտենից. Եւ թէ
ով է սուտ մարգարէն խօսեցաք 'ի վերոյ.

բն 11. Եւ տեսի զաթոռ մեծ սպիտակ. և
որ նստէր 'ի վերայ նորա 'ի դիմաց որոյ
փախեաւ երկին և երկիր. և տեղի ոչ գտաւ
նոցա.

մեկ Այսինքն աթոռ հռչակաւոր ուրախալի
և փառաւոր. Սպիտակութիւնն է զգեստն
սրբոց. և օրինակ փառաց. Որ նստէր 'ի
վերայ նորա է Քս տէրն մեր. 'ի դիմաց նր
փախեաւ երկին և երկիր. Այսինքն նախ
կին տեսակն և կերպն երկնից և երկրի.
Բան զի յայլ գեղեցկագոյն կերպ և տե
սակ փոխեսցին երկին և երկիր.

բն 12. Եւ տեսի զմեռեալս մեծս և փոքու
նս որք կային առաջի աթոռոյն. և գրեանք
բացան. և այլ գիր բացաւ. որ է գիր կե
նաց. և դատեցան մեռեալք. յայնցանէ,
որք գրեցեալ էին 'ի գիրս ըստ գործոց
նոցա.

մեկ Եւ տեսաք մեռեալս. Այսինքն որք յա



ռաջն

ռաջին մեռեալք էին. իսկ արդէն յարու-
ցեալք էին եւ կային առաջի Քի առ 'ի դա-
տիլ. մեծամեծք եւ փոքունք. Այսինքն թա-
գաւորք իշխանք՝ ծառայք եւ ռամիկք.
Գրեանք բացան. Այսինքն խղճմտանք մե-
ղաւորաց. Եւ այլ գիր կենաց բացաւ.
Այսինքն խղճմտանք արդարոց, եւ նախա-
սահմանեցելոց. Զայս գրելով սբն յոհան-
նէս մխիթարէ զմարտիրոսս՝ որպէս զի
համբերութեամբ տարցէին զտանջանս
զորս յայնժամ կրէին 'ի հռոմայեցւոց. նա՛
եւ զորս կրելոց քէին ապագայք մարտի-
րոսքն յաւուրսն Նեռան.

13. Եւ ետ ծովն զմեռեալսն որք 'ի նմա բն
կային. եւ մահն եւ դժոխն ետուն զմեռեալ-
սն իւրեանց որք 'ի նոսին էին.

Եւ ետ ծովն զմեռեալսն. Այսինքն որք մեկ
'ի ծով ընկղմեալք եւ 'ի յորովայնս ձկանցն
կային. մահն տացէ զմարմինս որք 'ի յեր-
կրի թաղեցեալք կային. Եւ դժոխն
տացէ զհոգիս զորս յինքեան ներ փակե-
ցեալ ունէր.

14. Եւ դժոխն եւ մահն՝ անկան 'ի լիճն բն
հրոյ. Այս է մահն երկրորդ.

Դժոխն ցուցանէ զսատանայն որ է բան- մեկ
տապան դժոխոց. Եւ մահն ցուցանէ
զնեռն որ զբազումս միայն մարմնով մա-
հացոյց. Այսինքն զմարտիրոսսն. եւս բա-
զումս մարմնով եւ հոգւով. Այսինքն զհա-
ւատացողսն ինքեան. Եւ այս եղիցի մահն


երկրորդ

երկրորդ։ Երկրորդ է վասն սատանային՝ զի դարձեալ իջցէ 'ի լիճն հրոյ գեհեննոյն ուր նախ կապեցեալ էր. Եղիցի երկրորդ ևս վասն նեռւին որոյ առաջին մահն եղի ցի մարմնոյն. և երկրորդն հոգւոյն։

Ով մանկանացու ընթերցող եղբայր տես թէ զինչ գրես 'ի գիրն քոյին խիղճմտացդ որ յաւուրն դատաստանին պարտէ առա ջի բոլոր աշխարհիս ընթեռնանիլ։ Տես թէ զինչ ես պատասխանելոց յաւուրն յայն մեկ. ուր 'ի յաջմէդ տեսցես զմեղս. որք մատնեսցեն զքեզ. 'ի ձախմէ տեսցես զան թիւ դևսն՝ 'ի ներքոյդ եղիցի վիհն սար սափելի դժոխոցն. և 'ի վերուստ զդատա ւորն բարկացեալ. արտաքուստ տեսցես աշխարհս հրդեհեցեալ. և 'ի ներքուստ ըզ խիղճմտացդ կիզեցեալ։ Ուրդ եթէ արդա րըն հազիւ կեցցէ, ո՛հ ո՛հ ամբարիշտդ ուր արդեօք երևեսցիս։ եթէ անդ սուրբք երկնից դողասցեն ապա՛ զինչ արասցես եղ կելիդ. փախչիլ ոչ կարես՝ թաքչիլ ոչ կարես. և երևիլդ առաջի դատաւորին ան տանելի է. զինչ արասցես. յո՛ երթիցես։

Մանուկ մի. ԺԵ. ամաց 'ի տեսլեան ետես զի քս դատաստան առնէր. և մինչ յարեաւ 'ի քնոյն ետես զի ամ հերք գլխոյն և մօ րուացն 'ի սաստիկ ահէն սպիտակացեալք էին։ Ուրեմն արա՛ զայն զոր պօղոս ուսու ցանէ ասելով։ եթէ մեք զմեզ դատեսցուք ո՛չ ևս դատիցիմք։ Ողջ լեր, և պատրաստ



տեա

տեամ զքեզ յընթեռնուլ ճա. և. ճէ. գլու
խն յայտնութեանս այսորիկ. որք խօսին
զերկնից արքայութենէ։

## Գլուխ ի. և. ա. Երրորդ.

Եւ տեսի զերկինք նոր և զերկիր նոր։ բն
ղ. Զի առաջին երկին և առա
ջին երկիրն գնաց. և ծով
ոչ այլ ևս գոյր։

Երկինքն ցուցանէ զհոգին. և մեկ
երկիրն զմարմինն. որք զարմա
նաբար նորոգեսցին սոքա յաւ
ուրն յարութեան մարմնոց։ Արդ՝ մարդս
՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ է բաղկացեալ, և
քան զի մարմինն է երկրային բնակութիւն
հոգւոյն. իսկ հոգին է երկնային ոգի։
Վասն այսորիկ ըստ իրաւանց հոգին եր
կինք. և մարմինն երկիր ասի։ Արդ նախ
կին գործն երկնից։ Այսինքն հոգւոյն եր
այս։ Այսինքն վասն փրկութեան իւրոյ
և այլոց՝ պարտէր աղօթել քարոզել ուսու
ցանել խոստովանացնել և որպէս զցօղ եր
կնից յերկիր ցօղել։ Արդ՝ յաւուրն յարու
թեան համայնք սոքա բարձցին. և փոխա
նակ սոցա տրի վարձ։ Այսինքն արքայու
թիւն և ա͞ծային տեսութիւն. և եղիցի
նոր երկին։ Ամին հանգոյն, նախկին գործ
նախկնոյ երկրին։ Այսինքն մարմնոյն եր
այս՝ Այսինքն պահել հսկել ապաշխարել


զինքն

զինքն տանջել և այլն ։ Արդ յաւուրն հա
տարակի յարութեանն այսոքիկ համայնքս
բարձցին ․ և փոխանակ սոցա տրին հան
գիստ և անկրելութիւն և անմահութիւն ․
և եղիցի երկիր նոր ։ Բայց զինչ կամի ա
սել թէ ծովն ոչ գոյր՝ կամի ասել թէ կաց
ցէ և մնասցէ ծովն ․ բայց ոչ այսպէս ոպ̃
է այժմուս թանձր աղի՝ դառն՝ անհամ ․
և հողմատատան ։ Արդ յայնժամ եղիցի
պարզ մաքուր, համեղ խաղաղ ․ և բարի ։

բն 2 ․ Եւ ես յօհաննէս տեսի զսբ̃ քաղաքն
եէ̃մ զնոր որ իջանէր յերկնից յա̃յ ․ պատ
րաստեցեալ որպէս զհարսն զարդարեցեալ
առն իւրում ։

մեկ Արդ՝ երկնից արքայութիւնն կոչի քաղաք
ա̃յ ․ զի թէպէտ ա̃ծ յա̃մ տեղիս գտանի ․
սակայն յատուկ կերպիւ իւիք յերկինս բնա
կի ։ Եւ որպէս քաղաքն երբեմն նշանա
կէ զքաղաքացիս ․ և երբեմն զտեղին և ըզ
շինուածս նորին ։ Այնպէս և աստ յօ
հաննէս անուամբ քաղաքի և եէ̃մի ․ եր
բեմն խօսի զարդարոցն որք յերկինս բնա
կին ։ Եւ երբեմն զտեղւոյն ․ Այսինքն
զեթերականնէ երկնէ ։ Արդ՝ եէ̃մս այս է
երկինքն եթերական հանդերձ բնակչօքն
իւրովք ։ Այսինքն խմբիւն երանեցելոց նոր
կոչէ զքաղաքս այս՝ ոչ թէ նոր շինեսցի՝
այլ համեմատելով զսա հնոյն եէ̃մայ ։ Այ
սինքն ժողովարանին հրէից ․ և եկեղեցւոյն
պատերազմողի ․ եկեղեցւոյս մերոյ ․ որք

 զվերին

զվերին եջմն նշանակեն։ Որ իջանէր
յերկնից յայ̄ ։ Աստ հարցցես՝ մանաւանդ-
արդարքն ելցեն յերկինս. և ոչ երկինքն
իջցէ առ արդարսն. որպէս ուրեմն ասի
իջանէր յերկնից։ Պատասխանեմ թէ այ
սու կամի ցուցանել թէ շնորհքն այ̄ որ
յերկնից առ արդարս իջանէ, նոյն շնոր
հօքն կարեմք երթալ յարքայութիւնն։
Վասն այսորիկ ասէ. իջանէր։ Վա̄ որոյ
ասէ մ̄ծն Օգոստինոս։ Ո՛չ կարէ նա՛ ելա
նել յերկնից արքայութիւն. որ հաւա
տայց թէ թարց շնորհացն այ̄ կարէ ելա
նել։ Արդ՝ յորժամ մօսէս էառ զօրէնս 'ի
յերկնից. ասէ ցժողովուրդն 'ի կողմանէ
այ̄։ Օ պատուիրանս այս զոր ես հրամայ
եմ քեզ այսօր՝ ո՛չ է վեր քան զքեզ. ո՛չ
ևս հեռի եղեալ. ոչ ևս 'ի յերկինսն է. զի
մի՛ կարիցես ասել։ Ո՞ 'ի մէնջ կարէ յեր
կինս ելանել. զի բերցէ զնա առ մեզ.
Սոյն գունակ. զի մի՛ քրիստոնեայ ոք կա
րասցէ ասել։ Ես մարմնաւոր եմ. ես տկար
եմ. ես հողեղէն եմ. զի արդ կարացից
ելանել յերկինս։ Վասն այսորիկ ետես յօ
հաննէս իջեալ զարքայութիւնն յերկնէ.
զի առեալ զարդարսն տարցէ ընդ ինքեան
յերկինս։

3. Եւ լուայ զձայն մեծ յաթոռոյն որ ըն̄
ասէր. Ահա խորան ընդ մարդկան. և բնա
կեսցէ ընդ նոսա. և նոքա ժողովուրդ
նորա եղիցին. և ինքն ա̄ծ ընդ նո̄ եղիցի
ա̄ծ նց̄։

 Եւ

մեկ Եւ յաթոռոյն քին։ Այսինքն որ բաժ
մեալ ունի 'ի յերկինն եմ։ Արդ աղաղա
կէ և ասէ։ Ահա խորան։ Այսինքն ով
մարդիկք՝ դուք որք մինչ կայիք 'ի խորանն
աշխարհի. ուր վասն սիրոյ իմոյ կրեցիք
զքաղց և զծարաւ. զցուրտ և զպաղ. և
զպատերազմ ընդ սատանայի. և մարմնոյ.
և աշխարհիս։ ունելոցէք զտաղաւարնիմ
յերկինս։ Եւ նոքա ժողովուրդ նորա ե-
ղիցին։ Զի արդարքն ոչ ուրուք եղիցին է
թէ ոչ ա՟յ։ Զի ոչ ոք ունիցին զտ՟ր՝ եթէ
ոչ զա՟ծ։ Ոչ ումեք ծառայեսցեն՝ եթէ
ոչ ա՟յ։ Զի ոչ ոք տեսանիցեն եթէ ոչ զա՟ծ
Ոչ ումեք հնազանդեսցին՝ եթէ ոչ ա՟յ։
Եւ լինքն ա՟ծ ընդ նոսա։ Եղիցի ա՟ծ ընդ
արդարոցն որպէս թագաւոր. ընդ ժողո
վրդեանն. որպէս հայր ընդ որդւոց՝ որ՟
վարդապետ ընդ աշակերտաց։ Զմայլե
ցուցանէ, ուրախացուցանէ, մխիթարես
ցէ, զինքն նոցա ցուցցէ. և խօսի ընդ ն՟ն
բերան առ բերան։ Եղիցի ա՟ծ նոցա.
Այսինքն՝ եղիցի վասն նոցա, զմայլումն
անմահութիւն. խնդութիւն, փառատրումն
ա՟ծելից տրամութեանց և ա՟մ բարի։ Վասն
որոյ ասասցեն՝ Զի ինչ կայ բնաւ իմ յեր
կինս՝ կամ 'ի քէն զինչ ևս խնդրեցից յեր
կրի. ա՟ծ սրտի իմոյ և բաժին իմէ ա՟ծ
յաւիտեան։

բն 4. Եւ սրբեսցէ տ՟ր ա՟ծ զա՟մ արտասուս
յաչաց նոցա. և մահ մի՛ ևս եղիցի. ոչ ևս


սուգ

սուգ. ո՛չ ևս աղաղակ. ո՛չ ևս ցաւ եղիցի.
զի առաջինքն անցին։

Որպէս մայրքն քաղցրագունեղք զարտա Մե̃կ
սուս յաչացն տղայոցն սրբեն. գըգուեն.
համբուրեն, և մխիթարեն, և գրկեն զն̃ս,
սոյնպէս և ս աստուած արասցէ մանկանց
իւրոց այսինքն սրբոց։ Աւստի ասէ ս̃բն
Լեոնարդոս՝ Ո՛հ երանելի արտասուք՝ որ
ձեռամբ ստեղծողին քոյոյ սրբիս։ Եւ
Թերթուղիանոս՝ ասէ. սրբեսցէ ա̃ծ զարտա
սուս յաչացն այնոցիկ՝ որք լացան յառաջմէ
զմեղս իւրեանց. և ո՛չ երբեք կամիցեին
դադարել ՚ի լալոյ. եթէ ոչէին արտասու
քն. ո՛չ էին առեալ զթողութիւն։ Եւ
մահ ո՛չ ևս եղիցի՝ ո՛չ ևս աղաղակ. Ո՛չ ևս
եղիցի սուրն ներոնի՝ ո՛չ հուրն նաբուգո
դոնոսորայ. և ո՛չ բանտ և շղթայք բռ
նաւորաց. Ո՛չ եղիցի աղաղակ։ Այսինքն
աղքատաց զորս մեծատունք նեղացնէին.
ո՛չ ևս աղաղակ մշակաց, որոց զվարձ կտ
րեն. ո՛չ ևս աղաղակ քահանայից զորս մահ
մետականք չարչարեին։ Զի առաջինքն ան
ցին։ Այսինքն՝ առաջին կեանքն որ ոչ էր
կենարար այլ մահարար. որ մանաւանդ մա
հէր քան թէ կեանք. անցին հանդերձ հա
մայնիւք վշտօք. և ո՛չ ևս եմք տեսանելոցք
5. Եւ ասաց որ նստէր յաթոռ ահա նոր բն
առնեմ զա̃մ. Եւ ասաց ցիս՝ գրեա. Այ
սոքիկ բանքս հաւատարմագունեղքեն. և
ճշմարիտք։ Ահա նոր առնեմ զա̃մ։

Մեկ Այսինքն այն նախկին և թշուառական
կեանքն էանց ընդ հին և թշուառական
մարդոյն՝ և ոչ գոյ։ Այլ այժմ զամ̃ նորո
գեմ։ Այսինքն փոխարկեմ զմահ 'ի կեանս
զսուգն յուրախութիւն, զտրտմութիւնն
'ի խնդութիւն. և զվիշտն 'ի հանգիստ։

Բն 6. Եւ ասէ ցիս. եղև. Ես եմ սկիզբն
և վախճան, Ես ծարաւոյաց տացից յաղ
բերէն ջրոյ կենդանւոյ ձրի։

Մեկ Եղև Այսինքն զոր ինչ ած̃ 'ի յաւիտենից.
զաշխարհէ. զարդարոց. զնեռանէ տրամադ
րեալ էր. Եղև զոր ինչ ած̃ 'ի վախճանի
աշխարհիս առնելոց էր. եղև և կատարե
ցաւ ամ̃։ Ես եմ սկիզբն և վախճան։
Այսինքն ես եմ սկիզբն արդարոց ստեղ
ծագործութեամբ. ես և եմ վախճան նց̃.
զի 'ի վախճանի աշխարհիս ես զիս տամ
'ի տեղի վարձուց նոցա։ Ես ծարաւոյաց
տաց։ Այսինքն որք ծարաւին այ̃ և ար
դարութեան. և քանզի աստ ոչ կարեն
զմայլիլ տեսութեամբն միշտ ծարաւիք
մնան. միշտ պապակին. որպէս դաւիթ
ասէր։ Որպէս ծարաւի եղջիւր յաղբերց
ջուրց այնպէս ծարաւի է անձն իմ առ
քեզ ած̃։ Զի մեղաւորքն ծարաւին հեշ
տութեանց և յունայնութեանց աշխարհիս
և շուտով հասանին առ նոյնն։ Բայց ար
դարքն միշտ ծարաւին. քանզի թէպէտ
ճաշակեն զսակաւ ինչ. և զկաթիլ ինչ 'ի
կենդանի աղբերէն. որպէս քս̃ ասէ. եթէ

ոչ ծարաւի իցէ եկեսցէ առ իս և արբցէ։
սակայն ոչ շիջուցանէ զծարաւն. այլ յա
ւելու։ Որպէս եկլէսիաստն 24 գլուխ
ասէ։ Որք ըմպեն զիս տակաւին ծարաւի
ցին։ Զրի. Ո՛. յսինքն թէպէտ արդարքն
ստանան զարքայութիւնն երկնից բարեօք
գործօք իւրեանց. սակայն զայն բարի գործ
ոն օգնականութեամբ և շնորհօք իմօք առ
նեն։ Պարձեալ ձրի ասի՛ զի բարեգործ
ութիւնն արդարոց կարի սակաւքեն. և
ոչ են արժանիք արքայութեանն երկնից.
որպէս և պօղոս ասէ։ Ոչ են արժանիք
չարչարանքն այսորիկ աշխարհիս. առ ա
պառնի փառքն։

7. Որ յաղթէ ստանայցէ զայսոսիկ, և բն
եղէց նմա Ած, և նա եղիցի ինձ որդի.
Ո. յսինքն թէպէտ ձրի տամ սակայն յաղ մեկ
թօղացն տամ։

8. Իսկ երկչոտացն. և ան հաւատից. մար բն
դասպանից և պոռնկաց. և կախարդաց. և
կռապաշտից և դեղատուաց. և ամ̃ից ստոց
ամբարշտաց մասն նոցա եղիցի 'ի լճի հրա
բորբոք և ծծմբային, որ է մահն երկրորդ։

9. Եւ եկն մինն 'ի յեօթեանց հրեշտակաց բն
ունողացն զ. Է. սկաւառակսն. լի՛ եօթամբք
հարուածօք նորագունեղօք, և խօսեցաւ
ընդ իս ասելով. Եկ և ցուցից քեզ զհարսն
զկինն գառին։

Հրեշտակս այս է՛ մինն յայնց հրեշտակաց մեկ
որ ընդ այլոց հրեշտակացն զսկաւառակն

իւր եհեղ յամբարիշտս. 16. գլուխ. Այս-
պէս յարմարապէս այնոցիկ նորագունից
հարուածոցն. Որպէս Յոհաննու աստ ըզ-
վարձս սրբոց եցոյց. Եւ թէպէտ յառաջ
մէ ետես յօհաննէս զհարսն գառին. սա-
կայն ոչ ետես զնմ. այսինքն զփառս ար-
դարոց մի ըստ միոջէ զն̃մ. այլ աստ կամի
ցուցանել մի ըստ միոջէ.

բն 10. Եւ եհան զիս ոգւով ՚ի լեառն մեծ
եւ բարձր եւ եցոյց ինձ զքաղաքն սբ.

մեկ Այս է լեառն այն. զորմէ եսայի ՚ի վա-
ղուց հետէ ասաց. Եղիցի յաւուրս յե-
տինս պատրաստեցեալ լեառն տանն այ ՚ի
գագաթն լերանց. Արդ այս լեառնս ոչ
էր արտաքոյ քաղաքին. այլ էր լեառն նոյն
քաղաքին. եւ նա հրեշտակն զյօհաննէս
առ լեառնս այս. որպէս զի անտուստ բար-
ւոք տեսանիցէ զոր ինչ ՚ի քաղաքն կայր.
Այսինքն զորմունս զհրապարակն, եւ զն̃մ
շինուածս.

բն. 11. Եւ ունէր զպայծառութիւն այ. եւ
լոյս նորա նման քարի պատուականի. որ-
պէս զասպիս՝ որպէս զբիւրեղ.

մեկ Ունէր զպայծառութիւն այ. Այսինքն
փառս այ. Որպէս զասպիս. Յասպիսն
քարմիրէ կանաչ եւ հաստատ, եւ կայուն. եւ
ցուցանէ թէ որպէս կանաչնէ աչաց տե-
սութեան բերկրեցուցիչ. սոյնպէս տեսու-
թիւնն այ բերկրեցուցանէ զտեսութիւնն
արդարոց. եւ այս միալոցէ հաստատուն.

Այսինքն յաւիտեանս յաւիտենից։ Եւ յասպիսս այս՝ նմանէ բիւրեղի։ Զի բիւրեղն է պայծառ և ցուցանէ թէ պայծառութեամբքն լուսոյն նոյ տեսանեմք զած· որպէս դաւիթ ասէ· լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

12. Եւ ունէր զորմն մեծ և բարձր· և ունէր զդրունս բժան· և՚ի դրունս հրեշտակս բժան· և անուանք նր գրեցեալ· որք են անուանք բժան ցեղիցն իղի· բն

Որմս այս ցուցանէ զան յաղթելի հաստատութիւնն եկմի երկնայնոյ· բժան ցեղն իղի ցուցանէ զհաստարակութիւն սրբոց։ Այսինքն զառաքելսն· զի ամենեքեան եմք յայսոց բժան ցեղիցն։ Եւ ունէր իւրաքանչիւր դուռն զհրեշտակն իւր· որք ցուցանեն զպահապան հրեշտակսն սրբոց· որք զպահեցեալսն յինքեանց հոգիս մուծանեն 'ի դուռն արքայութեան· որպէս ասի զղազարոսէ 'ի սբ աւետարանին· թէ եղև մեռանել աղքատին և հրեշտակաց տանել զնա 'ի գոգն աբրահամու։ մեկ

13. Յարեւելից դրունք· գ· 'ի հիւսիսոյ դրունք· գ· 'ի հարաւոյ դրունք· գ· և'ի յարեւմտից դրունք· գ· բն

Այս տեղիս ցուցանէ թէ 'ի չորից կողմանց աշխարհիս հասցեն մարդիկ 'ի դրունս արքայութեան երկնից։ մեկ

14. Եւ որմն քաղաքին ունէր զհիմունս բժան· և'ի նոսին բժան անուանք բժանից բն



առաքելոցն

առաքելոցն գառին ։

բն 15. Եւ որ խօսէր ընդ իս ունէր զչափ եղեգեան ոսկեղէն զի չափեսցէ զքաղաքն զդրունս նորա և զորմն ։

մեկ Չափն ոսկեայ զփառս երկնայինն ցուցանէ

բն 16. Եւ քաղաքն էր քառակուսի. և երկայնութիւն նորա այնքան որքան և լայնութիւնն. և չափեաց զքաղաքն ոսկեայ եղեգամբ ՛ի ստասն և ԺԲ Ռ ասպարէզ. և երկայնութիւն և բարձրութիւն և լայնութիւն հաւասարք են.

մեկ Արդ եղեգն չափոյ է. Ժ. ոտնաչափ. և. Ե. ոտնաչափն առնէ զքայլ մի. և. Ռ. քայլն ասէ մղոն մի. Ապա ուրեմն այսու թուով ասպարէզն որ է չափ. ՃԻԵ. քայլ և. Ը. երորդ մասն մղոնի. յոհաննու տեսեալ քաղաքն առնէ հազար Շ. մղոն. Այնութիւնն է տարածումն խնդութեանն՝ երկայնութիւնն է յաւիտենականութիւնն ։

բն 17. Եւ չափեաց զորմն. ՃԽԴ. կանգնոյ չափով մարդոյ՝ որ է հրեշտակի.

մեկ Զկնի չափելոյն զերկայնութիւնն և զլայնութիւնն պարսպին այժմ չափէ զբարձրութիւնն նորա ։ Պարիսպն որ պարունակէ նէնքեան. հովանաւորութիւնն է այ. որ զփառս արդարոցն յաւիտենականաբար պահպանէ ։ Պարիսպնէ յոյժ բարձր ։ Այսինքն ՃԽԴ. կանգնոյ. զի յամենուստ բարձրագունեղէ և հաստատագունեղ ։ Չափն մարդոյ որ է հրեշտակի. Այսինքն



հրեշտակն

հրեշտակն չափէ նովիմբ չափով որով
մարդիկքն սովորեն չափել։
18. Եւ էր շինուածք պարսպի նորա ՚ի բն
քարէ յասպիսէ. իսկ ինքն քաղաքն էր ոս
կի մաքուր նման ապակեայ մաքրոյ։
Յասպիս քարն է կարմիր ամուր և զդևսն մեկ
վանէ. և ցուցանէ զհաստատ նախախնա
մութիւնն այ̃. որով նախախնամէ զար
դարսն յերկինս. ուստի արտաքսեաց ըզ
դևսն. քաղաքն այն՝ էր ոսկի մաքուր նը
ման մաքուր ապակւոյ։ Ոսկիս մեր ոչ ունի
զապակւոյ պայծառութիւնն. ոչ ևս ապա
կին զոսկւոյ հաստատութիւնն. բայց եր
կնային երէմ̃ն ունի զերկաքանչիւրսն։ Զի
ոսկին նորա պայծառէ որպէս զապակի.
և ապակին նորա հաստատէ իբրև զոսկի.
Ոսկիէ քաղաքն այն՝ զի համայն ճոխութիւնք
և ճշմարիտք հարստութիւնք անդ գտա
նին զորս ոսկին ցուցանէ։ Եւ ապակին
ցուցանէ զպայծառութիւնն մտաց արդա
րոց. որով զխորհուրդս միմեանց տեսա
նեն և իմանան։ Որպէս մեք մարմնաւոր
աչօք տեսանեմք զերս նիւթաւորս։ Ոչ ինչ
մինն սկսէ խոկալ և խորհել զեր իմն.
՚իսկոյն գիտէ և իմանայ միւսն։
19. Եւ հիմունք պարսպի քաղաքին ամ̃ բն
քարամբք պատուականօք զարդարեալք.
Ա հիմն առաջին յասպիս։ Երկրորդն՝ շա
փիւղայ։ Երրորդն՝ քաղկեդոնիոն։ Չորրորդն
զմրուխտ։



Ուրբ

Մեկ Սուրբ առաքեալն յօհաննէս զերկնային
ե՟մի քարանց պատուականաց նմանեցու-
ցանէ ։ Զի 'ի վերայ երկրի ո՛չ լինի գոյ
քան զնոսա պատուականագոյն ։
Նա՛ և ասա պարտէ գիտել․ զի ժ̅բ̅ան քար
ինքն զժ̅բ̅ան առաքելոյն նշանակեն․ և
զժ̅բ̅ան մասունս հաւատամքին․ զորս
նոյնք ժ̅բ̅ան առաքեալքն շարադրեցին ։
Գ. Նախ յասպիս քարնէ գունով կանաչ․
Նա՛ թէպէտ սպիտակ և դեղին և այլ գու-
նով ևս գտանին, սակայն պատուականա-
գոյնն է կանաչ․ Երկրորդ է՝ հաստատա-
գոյն և ամուր․ Երրորդ փոխուցանէ զան-
պատեհ երևակայութիւնսն ։ Դ.րդ՝ նախ-
կին քարն յասպիս 'ի հիմունս ցուցանէ զս̅բ̅
պետրոս առաքեալն․ զի էիշխանն առա-
քելոց․ և եկեղեցւոյն ։ Վասն այսորիկ 'ի
վերայ հիմանս այսորիկ խոստացաւ ք̅ս շի-
նել զեկեղեցի իւր․ Զի որպէս կանաչէ
յասպիս ։ Նոյնպէս ևս կանաչէ և միշտ
կանաչ և հաստատ․ և անթառամ մնալոցէ
կարողութիւնն նր̅, և քահանայապետական
իշխանութիւն նր̅ 'ի մեծն հռոմ ։ Երկրորդ՝
հանգոյն յասպիսի ամուրէ և հաստատ ։
Զի զկնի յարութեն իւրոյ տր̅ մերք̅ս յոր
մէ հետէ հաստատեաց զնա քահանայապետ
հաստատագունեաղ մնաց 'ի հաւատն ք̅ի ․
մինչև զի ո՛չ միայն մարդիկ՝ այլ ո՛չ ևս դը-
ռունք դժ̅ խոց զնա յաղթահարել կարեն
Երրորդ՝ պետրոս և փոխանորդքն նր̅ հան

 գոյն

գոյն յասպիս քարին փախուցին և փո խու
ցանեն զա̃մ չար երևակայութիւնս հերե
տիկոսաց մոլորութեանց։ երկրորդ առաջին
քարս այս հիմանցն երկնաւոր երուսաղէ
մայ. նշանակէ զառաջին մասն հաւատամ
քին՝ զոր պետրոս շարադրեաց՝ որ է այսէ
հաւատամ ՚ի յա̃ծ հայրն ամենակարող.
ստեղծօղն երկնի և երկրի. Այս նախ կին
մասս ըստ իրաւանց նմանի յասպիս քարին
որ է յառաջնում հիման երկնաւոր եէմայ
Նախ հանգոյն յասպիսն է կանաչ. զի ա̃ծ
ութիւնն միշտ անթառամ մնացէ. Երկ
րորդ՝ հաստատագոյն ՚ի խոստմունս իւր.
և ՚ի պահպանութեան աշխարհիս. Երրորդ
այս նախ կին մասս որ հաւատայ ՚ի մի ա̃ծ
միայն, փախուցանէ զերևակայութիւնս
կռապաշտից. որք զբազում ա̃ծս պաշտեն։
Երկրորդ քարն որ կոչի շափիւղայ՝ որ և Բ.
կայ յերկրորդ հիմն վերնոյն եէմայ՝ չորս
յատկութիւնս ունի. նախ զտեսութիւն
աչացն սրէ։ Երկրորդ՝ զտրտմութիւնն
փախուցանէ. Երրորդ՝ օգտէ կարճահա
րաց։ Այսինքն որոց կարիճն հարցէ։ Չոր
րորդ՝ զգոյն երկնից ունի։ Այսմիկ քարիս
նմանի ս̃բ Անդրէաս առաքեալն. եղբայ
րըն պետրոսի սրբոյն։ Նախ հանգոյն քա
րիս այսմիկ շափիւղայի զտեսութիւն ա_
չացն սրէ. զի և քայլի զմայցուց և հեթանո
սաց բազմաց լուսաւորեաց զաչս մտաց առ
հաւատն ք̃ի։ Երկրորդ՝ զտրտմութիւն

փախուցանէ. քանզի զարմանալեաւ խնդ-
ութեամբ ելից զսիրտս աշակերտաց իւ-
րոց. և այլոց հաւատացելոց. յորժամ գո-
լով աւուրս երկուս կախեցեալ 'ի խաչէն
ասէր. Ո՛վ բարի խաչ. որ զվայելուչ գե-
ղեցկութիւնն յանդամոցն տն ընկալար.
երկարօրէն ցանկացայ քեզ. մեծաւ սիրով
սիրեցի. անդադարաբար խնդրեցի. և
այժմ հազիւ գտի զքեզ. Ընկալ զիս 'ի
մարդկանէ, և հասո զիս առ վարդապետն
իմ. զի քև զիս ընկալցի՝ որ քև զիս փր-
կեաց. Երրորդ՝ առողջացոյց զբազում
կարծահարս. Այսինքն զորս սատանայն
օձն դժոխոց խայթեալէր կռապաշտութե.
Չորրորդ նմանէր երկնից. այսինքն քի վա-
րուք. Երկրորդ քարս այս շափիւղայ որ
'ի յերկրորդ հիմն երկնից էՆմայ կայ՝ ցու-
ցանէ զերկրորդ մասն հաւատամքին. զոր
Անդրէաս առաքեալն ասաց՝ որ է այս. Եւ
'ի յՍ Քս որդին նորա միածին տրն մեր.
Արդ՝ Քս նմանի շափիւղայի. վասն չորից
յատկութեանցն՝ զորս շափիւղայն ունի.
Առաջ զի Քս սրբեաց զտեսութիւնն աչաց
բազմաց՝ ոչ միայն մարմնաւորապէս այլ և
հոգևորապէս. Երկրորդ զտրտմութիւնս
հոգևորս՝ և մարմնաւորս փարատէ. վասն
որոյ պօղոս զնա կոչէ զած ամենից մխիթա-
րութեանց. Երրորդ՝ բժշկէ զօձահարսն
որպս յայտէ 'ի պղնձեայ օձն անապատի. Չոր-
րորդ՝ նմանէր երկնից. այսինքն հօրն երկնա-
ւորին.



Երրորդ

Երրորդ քարն որ կայ յերրորդ հիմն է մին Գ·
վերնոյ՝ է քարն քաղկեդոնոս՝ որ յանծ աշուն
չն մեր պղնձագոյն ասի։ Այս քարս
կարկեհան քարն՝ կամ տեսակ իմն նմին․
կարկեհան ասի․ գրէ թէ կրակահան։
Արդ՝ զերիս ունի յատկութիւնս․ կարկե
հան քարս այս․ Նախ ոչ հուր վառի։
Երկրորդ՝ ճառագայթէ ՚ի գիշերի․ և
լուսովն իւրով լուսաւորէ զտեղին ուր կայ։
Վասն որոյ ասեն զլուսնթանացուց թա
գաւորէն թէ սա յաւուրն տօնի մարմնոյ
և արեանն քի․ եդ ՚ի ժամու գիշերայնում
զկարկեհան քար մի ՚ի ճակատ ձիոյ իւրոյ՝
որ յո́ և երթայր ոչ ՚ի ցերեկի լուսաւորէր
Երրորդ՝ յորժամ շփեն զնա ձեռօք․ քար
չէ առ ինքն զշիւղ։ Երրորդ քարս այս
ցուցանէ զյակոբոս առաքեալն։ Նախ ոչ
զհուր սիրոյն այ և մերձաւորին վառիւր։
Երկրորդ՝ ՚ի գիշերի կռապաշտութեն լու
սաւորեաց զմմսն լուսոյն հաւատոցն քի։
Եւ որ քան առաւել շփիւր ձեռօք․ այս
ինքն որ քան առաւել տանջիւր ձեռօքն
հալածչացն՝ այնքան առաւել քարշէր ըզ
սիրտս անհաւատիցն առ քն։ Եւ եւս քարս
այս ցուցանէ զերրորդ մասն հաւատամքին
զոր յակոբոս առաքեալն ասաց։ Որ յղա
ցաւ ՚ի յոգւոյն սրբոյ ծնեալ ՚ի մարիամայ
կուսէն։ Զարմարապէս նմանի երրորդ
մասս կարկեհան քարին։ Նախ ոչ հուր
վառեցաւ։ Այսինքն խորհուրդն մարդե

ղութեանն քո. եղև հրաբորբոք սիրովն
ա͞յ՝ ո͞պ ասէ առաքեալն։ Որպէս սիրեաց
ա͞ծ զաշխարհս մինչ զի զորդին իւր ետ՝
և այլն։ Երկրորդ՝ լուսաւորեաց զխաւա
րային գիշերն կռապաշտութեան։ Երրորդ
որքան առաւել շփեցաւ ք͞ո ձեռամբ
մարդկան. այսինքն տանջեցաւ ձեռամբ
հրէից՝ այնքան առաւել քարշեաց զմար
դիկ առ յինքն ո͞պ ինքն ասաց։ Յորժամ
բարձրացայց. զա͞մն քարշեցից առ իս։

Դ. Չորրորդն զմրուխտ՝ քարս այս եբրայեցե
րէն կոչի բարեկէթ. որ թարգմանի փայլա
տակող. և ինքն բնական փայլունէ. Երկ
րորդ կանաչութե͞ իւրով գերազանցէ ըզ
կանաչ խոտ։ Երրորդ՝ որպէս զերկաթ
ամուրէ. և ՚ի երկաթահանս գտանի։
Քարս այս նմանի յոհաննու աւետարան
չին. դ͞. յատկութեամբ։ Նախ զի էր փայ
լուն վարուք և առաքինութեամբ վասն
որոյ և կոչի որդի որոտման, յորմէ ծնանի
փայլատակումն։ Երկրորդ՝ կանաչ և ա_
նապական մնաց կուսութեամբ։ վասն ո_
րոյ յոյժ սիրականէր ք͞ի։ Երրորդ՝ ամու
րէր ո͞պ զերկաթ. վասն որոյ մինչ արկին
զնա յեռացեալ կաթսայն ոչ բեկեցաւ հա
ւատ նորա. ոչ և մնացաւ մարմնով։
Չորրորդ՝ մասն հաւատամքին ասաց յոհան
նէս։ Զարչարեցեալ ՚ի ներքոյ պոնտացւոյ
պիղատոսի՝ խաչեցեալ մեռեալ և թաղե
ցեալ։ Այս չորրորդ մաս նմանէ չորրորդ


քարին

քարիս զմխիթարոյ վասն երից պատճառաց։
Նախ չարչարանքն քո էր փայլուն՝ զի փայ
լեցմամբ իւրով ոչ միայն լուսաւորեաց
մթացեալ հոգւոյ աչսն աւազակին՝ այլ եւ
բազմաց՝ որք գոլով լուսաւորեցեալք կո
ծէին զկուրծս եւ ասէին։ Երդ արեւ որդի
այ էր այրս այս։ Երկրորդ՝ չարչարանաց
քո գոյն եւ ողորմութիւնն այ զկանաչ
ձիթենի կանաչ եւ անթառամէր։ զորմէ
ասի. իւղ թափեալ անուն քո։ Երրորդ՝
պինդ էր եւ ամուր՝ զոր ոչ ոք կռուան տանջա
նացն բեկել կարաց։

20. Հինգերորդ Սարդոնիկ։ Սարդո բն
նիկ՝ որ յաձաշունչն մեր եղեգնաքար ասի
Հինգերորդ քարս այս՝ որ եդեալէ ըն մեկ
հիմանն եէմայ երկնայնոյ՝ է տեսակ ըղնկան Ե
մարդկան՝ զի ՚ի ներքուստ ունի զտեսակ
մսոյ. եւ արտաքոյ ունի զգոյն ըղնկան որ
զմիսն ծածկէ։ Երդ՝ սարդոնիկս այս՝ զե
րիս գոյնս ունի. զի վերին ծայրնէ կար
միր. միջինէ սպիտակ. եւ սպիտակութեամբ
այ գօտեաւ շրջապատեցեալ. իսկ ներքին
մասնէ սեաւ։ Հինգերորդ քարս այս
ցուցանէ զե երորդ առաքեալն այսինքն
զփիլիպպոս։ Նախ զի սպիտակ. եւ մաքու
րէր վարուք։ Երկրորդ կարմիր էր սի
րովն այ եւ մարտիրոսական արեամբ։ եր
րորդ զներքին մասն ունէր սեաւ. զի ներ
քին մասն մարմնոյ որ է ոտն. նովաւ կո
խեաց զպատանոյ որ է սեաւ եւ խաւարային

Հինգ երրորդ քարըս այս ցուցանէ և ըզ
հինգ երորդ մասն հաւատամքին․ զոր փի
լիպպոս ասաց․ էջ ՚ի դժոխս․ Սաստ այս
նմանի եղէգնաքարի․ սակս նմանութեան
զոր ընդ քարիս ունի․ զի մասն կարմիր
ցուցանէ զք͞ս արեամբ կարմրով ներկե
ցեալ․ նիւթն և նոյն եղէգնաքարն զք͞ե
հարսն լիմպոսին․ և սպիտակ գօտին որ
շրջապատեալէ զքարն զլիմպօսն նշանակէ
իսկ սեաւ մասն ներքին ցուցանէ զդժոխսն
ուր իջեալ ք͞ս սպառնալեօք ահա բեկեաց
և փակեաց անդ զսատանայ և զա͞մ անզեղ
ջս որ կային անդ․

Զ Վեց երրորդ քարըն է սարդիոն․ այսորիկ
են յատկութիւնք սարդիոնին․ Նախ գու
նովն կարմիր նման մսոյ․ երկրորդ զօրս
ցուցանէ զտեսութիւն աչաց․ երրորդ ծը
նանի ՚ի քարուստ տեղիս․ չորորդ ահա ցու
ցանէ զգաղան․ Հինգ երորդ ոչ ունի զբիծ․
Քարս այս նմանի վեց երրորդ առաքե
լուն այսինքն բարդուղիմէոսի․ նախ վասն
գունոյն զի ո͞պ սարդիոնն կարմիրէ այնպէս
յորժամ հանին զմորթ նորա երևեցաւ
կարմիր միսն նորա․ երկրորդ ո͞պ զսարդի
ոն ահա բեկեաց զդևսն և զթշնամիս հա
ւատոյ․ երորդ լուսաւոր և պայծառա
գոյն ունէր զաչս հոգւոյն․ զի բարդուղի
մէոս է նաթանայէլն այն որ ասաց ք͞ի․
վարդապետ դու ես որդին ա͞յ․ դու ես
թագաւորն իսրայէլի․ չորորդ ո͞պ սարդի


ոնն

տմն ոչ ունի զբիծ այսպէս եւ բարդուղի
մէոս ոչ զարատ ունէր եւ ոչ զբիծ. վասն
որոյ ասաց Տէրն ցնա. Ահա ճշմարիտ
իսրայէլացի որում նենգութիւն ոչ գոյ.
Հինգերորդ ոպ̃ սարդիոն 'ի քարուտ տե
ղիս սոյնպէս եւ սա 'ի մէջ չարչարանաց եւ
խաչի զի զքարացեալ սիրտս մարդկանց
կակղացուցանիցէր եւ 'ի պայծառ միտս իւր
դարձուցանիցէր. Եւ եւս նմանի քարս
այս վեցերորդ մասն հաւատամքին. զոր
բարդուղիմէոս ասաց. Յարեաւ ի մեռելոց
'Նախ յարուցեալն Քս̃ ունէր զտեսակ մար
մնոյ եւ զճշմարիտ մարմին հետեւապէս. եւ
զկարմիր գոյն մարմնոյ. երկրորդ սրատես
արար եւ զուարճացոյց զաչս աշակերտացն.
յորժամ երեւեցաւ նոցա փառաւոր յարու
թեամբն. երրորդ յարեաւ 'ի քարուտ տե
ղոջէ այսինքն վիմափոր գերեզմանէ. չո
րորդ յարութեամբն ահաբեկեաց. զգա
զանսն. այսինքն զպահապանսն եւ զդեւս.
Հինգերորդ ոպ̃ իսարդոնիում. ոչ գոյ
բիծ կամ արատ. սպ̃ եւս 'ի քս̃ յարուցեալ
ոչ գոյ ցաւ ոչ տրտմութի եւ ոչ վիշտ.
Եօթներորդ քարն երկնային երուսաղէ Է
մայ կոչի ոսկի քար. 'ի սկութիւն քարիսէ
նախ. 'ի տուընջեան. 'ի գոյն ոսկւոյ եւ 'ի գի
շերի. 'ի գոյն հրոյ երեւի. Երկրորդ փա
րատէ զփոքրահոգութիւնս. Երրորդ զօ
րացուցանէ ընդդէմ դիւաց այսինքն փա
րատէ զտրտմութիւնն որով փորձէ դեւն
զմարդիկ.

զմարդիկ։ Եօթն երորդ քարս այս նմա
նի է երորդ առաջերոյն քն այսինքն մատ
թէոսի. որ ասաց զեօթն երրորդ մասն
հաւատամքին։ Սա նմանի ոսկէքարի. զի
սա քան զայլ աւետարանիչս. երկարօրէն
գրեաց զաւետարան իւր որով ոչ զջահ
հրաբորբոք զխաւար աշխարհիս հալած
եաց։ Եւ ևս նմանի քարս այս եօթն ե-
րորդ մասին հաւատամքին զոր մատթէոս
ասաց։ Համբարձաւ յերկինս և նստաւ ընդ
աջմէ հօր։ քանզի ոչ սպիտակ գոյն նշա
նակէ զբարութիւն փառուց սոյնպէս և
ոսկոյ գոյնն զոր ոսկէ քարս. այս ունի. նշա
նակէ թագաւորական մեծութե ախոյա
նին քն որ մինչ համբարձաւ յերկինս փա
ռօք և պատուօք պսակեցաւ. նա և նստաւ
ընդ յաջմէ հյ ոչ ընկերակից թագաւորու
թեան հյ։ Երկրորդ ոչ ոսկէքարն որ
տաքսէ զփոքրահոգութիւն և զտրտմու
թիւն սոյնպէս ևս համբարձումն քն և նս
տումն նորա ընդ աջմէ հօր փարատէ ըզ
տրտմութիւնս մարդկան. զի նստելով ընդ
աջմէ հօր բարեխօսէ վասն մարդկան. զի
զյոյս և զթողութիւն մեղաց ստանայցեն
վասն որոյ սոյն ոհանէս ասէ. եթէ ոք
մեղանչիցէ ունիմք բարեխօս առ հյ զյս
քս զարդարն և զանարատն։

Ութն երորդ քարն հիմանն երուսաղէմին
Ը երկնայնոյ է բիւրեղն։ Սորա 'ի սկուբթին
է. Նախ զպատերազմօղն արեգացուցանէ։

 Երկրորդ

Երկրորդ է լուսաւոր. Երրորդ՝ է մա
քուր և պարզ: Նմանի քարս այս ութ ե_
րորդ առաքելոյն. այսինքն Թովմասու: Սակս
զի ունեաց զաչս պարզ և մաքուր ոչ զբնա
րեղ. զի զկնի յարութեն քն ետես զվէրս
նր որ թէպէտ սակաւ մի յամեաց 'ի հաւա
տալն զյարութիւնն, սակայն յետոյ ետես
ոչ միայն զմարմնաւոր վէրսն, այլ և զած
ութիւնն նորա, վսյ և ասաց. Տր իմ և ած
իմ: Ըրդ էր լուսաւոր, զի զբազում լուսա
ւորեաց: Այս քարս նմանէ ևս ութ ե_
րորդ մասանն հաւատամքին զոր Թովմաս
ասաց: Անտի գալոցէ 'ի դատել զկենդա
նիս և զմեռեալս: Նաև ոչ բիւրեղն ա_
րիացուցանէ զպատերազմողսն. ոչ մտա
ծումն աւուրն դատաստանին արիացուցա
նէ զպատերազմօղսն ընդդէմ սատանայի.
աշխարհի և մարմնոյ: Երկրորդ է լուսա
ւոր. զի յաւուրն դատաստանին երևես
ցին համայնք ծածկեալք խորհուրդք սր
տից: Երրորդ՝ մաքուրէ և պարզ. զի ոչ
գտանի 'ի դատաւորն երեսպաշտութիւն,
կամ կաշառառութիւն:

Իններորդ քարն կոչի Տպազիոն. Տպա Թ
զիոն ասի. զի գտանի 'ի կղզին տպազիոն
կոչեցեալ: Երկուքեան տեսակք տպազիոն
քարիս: Մինն է ոսկեգոյն և լուսաւոր:
իսկ միւսն է կանաչ: Եւ յատկութիւնք
սորա են: Սակս թէպէտ ըստ ինքեան
փայլունէ. սակայն առաւել փայլէ, յոր


ժամ

ժամ շող արեգական առ նա հասանէ։
Երկրորդ՝ ջնջէ և նուաճէ զախտս և զզ
ջար ցանկութիւնս մարմնոյ։ Երրորդ՝ կա
կղաբարոյ է քան զամ ակունս։ Քառորդ այս
նմանի թ երորդ առաքելոյն. այսինքն յա
կոբայ տն եղբօրն վասն երից պատճա
ռաց։ Նախ ոպ տպազիոնն ունելով զնմա
նութիւն շողոյն արեգականն, առաւել
փայլէ շողովն նոյն արեգականն. Սոյնպէս
յակոբ փայլէր և լուսաւորեցաւ ճառա
գայթեր վարուք շողովն. այսինքն շնոր
հօքն արդարութեան արեգականն. այս
ինքն քրիստոսի։ Եւ այնքան նմանէր քի
ոչ միայն վարուք, այլ և մարմնաւոր նմա
նութեամբ. մինչ զի որ ոք տեսանէր զնա
ոպ թէ զնոյն ինքն քս տեսանէր. վսյ բա
զումք երթային յերուսաղէմ առ 'ի տեսա
նել զնա։ Երկրորդ յոյժ նուաճէր զմար
մինն իւր. և սանձէր զշարժմունս ցանկու
թեան։ Զի բոկոտամբք շրջէր. զհաց մի
այն ուտէր. և զջուր միայն ըմպէր. և այն
քան հանապազորդ աղօթէր, մինչ զի
ծունկք իւրք ոպ զծունկս մորթամաշ
ուղտու նմանէին։ Երրորդ՝ էր կակղաբա
րոյ և կակղասիրտ. վսյ ոպ զգետ հեղանէ
ին արտասուքն յաչաց։ Սոյն թ երորդ
քարս նմանի թ երորդ մասանն հաւա
տամքին զոր յակոբոս ասաց։ Հաւատամ
'ի յոգին սբ։ Զի ոպ տպազիոնն ծնանի
'ի շողոյն արեգականն և փայլէ նովաւ. Սպ

հոգւն սբ ոչ շող արեգական բղխէ 'ի
հօրէ և 'ի յորդւոյ: Երկրորդ յանհնապէս
առաւել քան զտպագրոնն սանձէ և նուա
ճէ զաղտս մարմնոյ, և զանպատեհ ցանկու
թիւնս հոգւոյ: Երրորդ, կակղացուցանէ
զսիրտս, և առնէ արտասուեղ զմարդս:
Դարձեալ ասեն թէ, այս տպագրոն քարս
'ի գիշերի գտանի: Որպէս և հոգին սբ
'ի գիշերի: այսինքն 'ի վիշտս և 'ի նեղութիս
գտանի, և հասանի յօգնութն վշտացելոց:
Տասն երրորդ քարն երկնայնոյ երուսաղե ԺԳ
մայ կոչի քրիսոպրաս: Քարս այս ունի
զգոյն կանաչ և զայսոսիկ յատկութիւնս:
Նախ թէպէտ կանաչագոյնէ, սակայն ոչ
զոսկէ ցոլս 'ի վր ինքեան սրսկեցեալս ունի:
Երկրորդ, փարատէ զցաւն աչաց:
Քարս այս նմանի տասն երրորդ առաքե
լոյն, այսինքն թադէոսի: Զի էր կանաչ,
այսինքն առաքինի յոյժ: և սրսկեցեալ էր
ոսկէ կաթիւք: զի ոչ զոսկի փայլիւր սի
րոյն այ և մարդկան: Այն քարս և նմա
նի տասն երրորդ մասանն հաւատամքին,
զոր թադէոս ասաց: Ի սբ կաթուղիկէ
եկեղեցին, հաղորդութիւն սրբոց: Նախ
զի ոչ կանաչ գոյնն և ոսկեցօղքն զարդա
րեն զքրիսոպրայն, սոյն քս և հոգին սբ
զարդարեն զսբ եկեղեցին: Երկրորդ փա
րատէ զաչացաւութիւնն: այսինքն հերձ
տիկոսութեանն և մոլորութեան:
Անտասան երրորդ քարնէ յակինդ: Յա ԺԴ

կինդ քարս այս ունի զկապուտ գոյն նը
ման երկնից․ Սմանի սիմէոն առաքելոյն
որ կանանացի մերակոչի։ Զի ունէր վարս
երկնային․ և լի նախանձու բարեաց․ վնյ
և նախանձայոյզ կոչեցաւ․ Եւ ես նմանի
քարս այս մետասան երրորդ մասանն հաւա
տամքին զոր սիմէոն ասաց․ ՚Ի թողութի
մեղաց։ Զէ ոպ յանկինդն ունի զգոյնս
երկնային, սպ ես թողութեամբ մեղաց
եղանիմք երկնայինք․ վնյ առաքեալն կողո
սացւոց առաջին գլուխ։ ասէ․ Անցոյց
զմեզ յարքայութիւնն որդւոյն իւրոյ սի
րելոյ որով ունիմք զփրկութիւն արեամբ
նորայ ՚ի թողութիւն մեղաց։ Արդ, յան
կինդն բժշկէ զորտացաւութիւնն․ սպ ես
ապաշխարութիւնն զհոգին․ Յակինդն
ազատէ զմարդ ՚ի կայծակէ․ Նոյնպէս
ապաշխարանքն ՚ի բարկութենէ այ․

ԺԲ․ Երկոտասան երրորդ քարն որ եդեալէ
յԲժան հիմանն երկնաւոր երուսաղեմայ է
քարն ամէթոս։ Ամէթոս։ քարս այս է
ծիրանագոյն նման գունոյն մանուշակի․
Յատկութիւն քարիսէ, որ ոք զայս քարս
առ ինքն պահէ, հաճելի մարդկան եղի
ցի։ արբեցողութեան ընդդիմանայ։

Քարս այս նմանի երկոտասան առաքե
լոյն մատաթիայի։ Զի քարս այս ունի
զգոյն մանուշակի, և մանուշակ ծաղիկն գո
լով փոքր, և ունելով զգլուխն կորացեալ
զխոնարհութիւնն ցուցանէ․ Այսպէս զմա

 տաթիա

տաթիա ցուցանէ․ զի զկնի ամենեցունց
՚ի տեղի յուդայի մատնչին, յառաքելութին
ընտրեցաւ, և այս յետին ընտրումս զխո
նարհութիւնն ցուցանէ։ Խոնարհութիւն
է որ զմարդս հանդոյն ամէթոսի հաճելի
այ առնէ։ և զքունն փախուցանէ, այս
ինքն հսկողս ՚ի բարեգործութիւնս առնէ։
Որպէս մատաթիա առաքեալն էր հա
ճոյ այ․ հսկող ՚ի գործս բարիս, և ընդ իմ
անայր արբեցողութեան, այսինքն հպար
տութեան։ Իսկ ես բժան երորդ քարս
այս ցուցանէ զբժան երորդ մասն հաւա
տամքին զոր մատաթիա ասաց։ Յարու
թիւն մարմնոյ, և կեանք յաւիտենական․
Օ ի ամէթոս քարս ունի զգոյն մանուշա
կի, և մանուշակն հաստատեցեալ արտաքսէ
զծանրութիւն գլխոյն որ յարբեցողութէ
պատճառի։ Այնպէս և մտածումն յա
ւիտենական կենացն արտաքսէ զմմ ցան
կութիւնս կենցաղոյս անցաւորի։ Բդ-
ծիրանի գունն ցուցանէ զհանդերձս թա
գաւորաց, որք բեհեզս և զծիրանիս զգե
նուն։ և ցուցանէ զյաւիտենական կեանսն,
որ զարդարան․ որդիս այ և թագաւորս
առնէ։

21․ Եւ ժբ դրունքն ժբ մարգարիտք բն
են միաձև․ և իւրաքանչիւրոցն դրունք
էին մի մի գուռն ՚ի միոյ միոյ մարգար
տոյ․ և հրապարակ քաղաքին ոսկի մաքուր
որպէս զապակի պայծառ․

մեկ Արդ, հաւնի գտանի սատափ մարգարտի,
որ ընծայեաց զմի միայն մարգարիտ, և
այն սատափն որ զմի միայն ընծայէ, պա
տուականագոյն է քան զայն յորում բա
զումք մարգարիտք ընծայեն։ Երկոտա
սանք դրունքն են ժբ առաքեալքն,
և այլք այրք առաքելական վարուք զար
դարեցեալք։ Եւ դրունք ասին, զի քա
րոզութեամբ նոցա և հետևելով վարուց
նոցա մտանեն մարդիկ յարքայութիւնն։
Մարգարտեայք են դրունքն. զի են պա
տուականք առաջի այ։ Եւ իւրաքան
չիւր դուռն էր 'ի միոյ մարգարտէ,
այլ ոչ 'ի բազմաց և 'ի զանազանից մարգար
տաց։ ցուցանէ թէ քարոզատուքն և այլք
մ̃րք արք որք ցանկան զայլս մուծանել
'ի դուռն արքայութեան, պարտին ունել
զմի միայն հաւատն միոյ և միայնոյ եկեղե
ցւոյ կաթուղիկէի։ և լինել մի սիրտ և մի
հոգի։ Հրապարակք քաղաքին ոսկի այս
ինքն լի սիրովն արդարոց։

բն 22. Զտաճար ոչ տեսի 'ի նմին զի տր ած
ամենակարողն տաճար նորա է, և գառն։

մեկ Նրաւի, յերկինս ոչ գոյ տաճար։ զի
աստ պիտոյէ տաճար վասն պատարագի,
նուիրանաց և աղօթից։ Բայց 'ի յերկինս
ոչ է պիտոյ տաճար, զի ոչ գոյ անդ
պատարագ և ոչ նուիրումն։ Ած է տաճար
նորա։ զի յածում տեսանեն զա̃ծ և զք̃ս
բարքիս ոգ̃ 'ի տաճարի։

23. Եւ քաղաքն ոչ կարօտանայ արեգա բն
կան ոչ եւ լուսնի, զի ծագեսցեն 'ի նմա,
զի պայծառութիւնն Այ լուսաւոր է զնա
եւ ճրագ նորա է գառն։
24. Եւ շրջեսցին հեթանոսք լուսով Նր,
եւ թագաւորք երկրի բերցեն զփառս իւ
րեանց եւ զպատիւ 'ի նմա։
Յայսինքն լուսովն երուսաղեմայ երկնայ մեկ
նոյ։ Եւ թագաւորք երկրի բերցեն ըզ
փառս իւրեանց այսինքն թագաւորքն եր
կրի որք գնացին յերկնային երուսաղէմն
փառօք հաստատին։ զի որք յաշխարհիս
անցողականքէին, անդ յաւիտենական մնայ
ցեն։
25. Եւ դրունք Նր ոչ փակեսցի 'ի տուընջ
ջեան, զի գիշեր ոչ եղիցի 'ի նմին։
26. Եւ բերցեն զփառս եւ զպատիւս ազ
գաց 'ի նմա։
27. Ոչ մտցէ 'ի նա աղտեղի ինչ։ կամ
պղծարար իմն. ոչ սուտ, եթէ ոչ նոքա,
որք գրեցեալք են 'ի գիրս կենաց գառինն։

## Գլուխ ԻԲ երորդ.

1. Եւ եցոյց ինձ զգետ ջրոյ կենդա բն
նւոյ պայծառ որպէս զբիւրեղ որ
բղխէր յաթոռոյն Այ եւ գառինն։
Գետս այս ցուցանէ զառատութիւն շնոր մեկ
հաց ելեալ յԱյ եւ Քի եւ բղխեցեալ առ ար
դարսն յարքայութեան։ զորմէ դաւիթ

 ասէ.

ասէ ։ Մօրքցեն նոքա 'ի պարարտութենէ
տան քոյ, և զուխս փափկութեան քոյ տա
ցես ըմպել նց̃ ։ Նմանէ այս գետոյն գետն
դրախտին երկրաւոր, որ ոռոգանելով զնա
գեղեցկացուցանէր բոլորովիմբ զա̃մ տուն
կս նր̃ ։ Այնպէս ևս երանաբար շնորհն և
տեսութիւնն այ̃ ոռոգէ զտունկսն երկնից
արքայութեան, որքենարդ արքն ։ և զո
ւարճացուցեալ ուրախացուցանէ զնոսա
զորմէ դաւիթ ասէ ։ Գնացք գետոց ու
րախ առնեն զքաղաքն այ̃ ։ Այծառ ոչ̃
զարեգակ, և ոչ̃ զբիւրեղ ։ զի երանութին
երկնից զուտէ, մաքուր և թարց խառնման
վշտաց և տրտմութեան ։

բն Հ. 'Ի մէջ հրապարակի նորա, և 'ի յերկուց
կողմանց գետոյն կայր փայտ կենաց, որ
առնէ զպտուղս ԺԲ̃ ժան ։ և յամսէ յամիս
տայր պտուղ իւր ։ և տերևք փայտին էին
բժշկութիւնք հեթանոսաց ։

մեկ Փայտն կենաց ցուցանէ ծառինս կենսա
բերս ։ զի թէպէտ եզականաբար յիշէ ըզ
փայտն, սակայն ոչ զմի, այլ զբազումս
ցուցանէ ։ քան զի մի և նոյն ծառն ոչ կարէ
լինել համանգամայն յայսկոյս և յայնկոյս
գետոյն ։ Արդ է գիտել ։ զի 'ի յերկրաւոր
դրախտում կային բազումք տեսակք ծա
ռոց, որոց մինն միայն կոչիւր ծառ կենաց ։
Բայց 'ի յերկնային համայնք ծառքն են ծառք
կենաց, որք զկեանս և զանմահութիւնս
պարգևեն ։ Իբրաւի անմահքն արդարքն

 յերկնայ

յերկինս, երջանկութեամբ և խնդութե̃
հանդերձ․ յո՛ և դառնան յո՛ և երթան յեր
կուց կողմանց յաջ եւ յահեակ զծառինս կե
նաց շուրջ զինքեամբ ունին, որոց պտղոքն
միշտ յագենան և զմայլին։ Ա. յամիկ կենաց
ծառոց նմանի ծառին արմաւենւոյ, որ յիւ
րաքանչիւր ծնունդն լուսնի, զոստ մի յին
քենէ հանէ, և տալով զբ̃ժան ոստս, տա
րին կատարի։ Յամնէ յամիս տայր զպտուղ
այսինքն երանութիւնն սրբոց մնալոցէ միշտ
և տեսանելոցեն միշտ զնոր իմն խնդութի
յա̃մ ամ․ յա̃մ ամիս․ յա̃մ օր։ յա̃մ ժամ և
յա̃մ վայրկեան։ Եւ պտուղ նորա 'ի բժշ
կութիւն հեթանոսաց։ Յերկինս ոչ գոյ
աղտաժէտութիւն, որ զկարիս բժշկութե̃
ունիցի, այլ կամի ասել թէ, միանգամ
առեցեալ բժշկութիւնն ոչ երբէք 'ի տկ
րութիւն է դառնալոց։

3․ Եւ ա̃մ անէծք ոչ ևս եղիցի, այլ ա- բն
թոռն ա̃յ և գառին եղիցին և ծառայք նր
ծառայեսցեն նմա։

Այսինքն ոչ եղիցի անդ մեղք, որ է պատ մե-կ
ճառ անիծից և նզովից։

4․ Եւ տեսցեն զերեսս նորա, և զանուն
նորա 'ի ճակատս իւրեանց։

5․ Եւ գիշեր ոչ ևս եղիցի և ոչ կարօ
տասցին լուսոյ ճրագի․ ոչ ևս լուսոյ ար
գական․ քանզի տէր ա̃ծ լուսաւորեսցէ
զնոսա, և թագաւորեսցեն յաւիտեանս յա
ւիտենից։

 Եւ

6. Եւ ասաց ցիս. բանքս այսոքիկ հաւա
տարմագոյնք են և ճշմարիտք. և տ̃ր ա̃ծ
ոգւոցն մարգարէից. առաքեաց զհրեշտակ
իւր առ 'ի ցուցանել ծառայից իւրոց որ
պարտ է եղանել վաղվաղակի:

քն̃ 7. Ահա գամ վաղվաղակի. երանի որ
պահէ զբանս մարգարէութեան գրոյս այ
սորիկ:

մեկ Աստ աւարտեցաւ բանն և տեսիլն վասն
երկնից արքայութեանն.

8. Եւ ես յովհաննէս որ լուայ և տեսի զայ
սոսիկ: և յորժամ լուայ զայս ա̃մ, անկայ
զի երկիր պագանել առաջի ոտիցն հրեշ
տակին, որ ինձ զայսոսիկ ցուցանէր.

9. Եւ ասաց ցիս. տես մի' արասցես զայդ-
զի ծառայակից քո եմ, և եղբարց քոց
մարգարէից, և նոցա որք պահեն զմար
գարէութիւնն գրգոյս այսորիկ. ա̃յ եր
կիր պագեա:

քն̃ 10. Եւ ասէ ցիս. մի' կնքեսցես զբանն
մարգարէութեան գրոյս այսորիկ, զի ժա
մանակն մերձ է:

մեկ Մի՛ կնքեսցես այսինքն մի գաղեր, մի'
թագուցաներ զոր ինչ տեսեր և լուար յի
նէն. այլ քարոզեա ամենեցուն, զի ամենե
ցուն շահէ և օգուտ: Զմարգարէութիւնն
զայն որ ոչ էր ա̃ծ կատարելոց շուտով,
հրամայէր կնքել և ծածկել մինչև 'ի ժա
մանակն այն յորում կատարելոցէր մար
գարէութիւնն այն, ո̃ր յայտէ 'ի դանիէլի

12. գլուխ։ Բայց մարգարէութիւնն որ
շուտով էր կատարելոց, հրամայէր ոչ կնքել և ոչ թագուցանել, այլ շուտով հրապարակել։ Արդ, քան զի բազումք մարգարէութիւնք գրոյս այսորիկ կատարեին և կատարելոց էր ՚ի ժամանակի նոյն Յովհաննու, վնկ ասէ։ Մի կնքեր, զի ժամանակն մերձ է։

11. Որ մնասէ մնասեսցէ տակաւին, և որ յաղտեղութեան կայ, յաղտեղասցի տակաւին, և որ արդար է արդարասցի տակաւին, և սբն սրբեսցի տակաւին։ բն

Զի ոչ կամի զաղտեղութիւն, և զմնասուստի աստ ոչ տայ զհրաման թէ մարդիկք մնասիցեն միմեանց, կամ աղտոտիցեն մեղօք․ այլ սպառնայ մեղաւորաց զզրկումն յարքայութէ։ Բան բարւոք իմանալոյ տաց քեզ զօրինակս այս․ Կայ այր մի որոյ ՚ի ցեն բ որդիք, և այրս այս յոյժ ատէ զստախաղութիւնն։ Մինն յերկուց որդւոցն ոչ խօսի զսուտ․ իսկ միւսն է ստասաց․ Այնմիկ որ ոչ խօսի զսուտ․ զգեցուցանէ զհանդերձ կերպասեայ, և զստասացն զրկէ․ Բայց սակայն, նախ քան զգեցուցանելն ճշմարտախօս որդւոյն, առեալ զկերպասեայ սգեստն ՚ի ձեռն ցուցանէ զայն ստախօս որդւոյն և ասէ․ Արդ եթէ այսուհետև որդեակ իմ, և հետևեսցես ստութե քում դու գիտասցես․ Իրաւի որ զայս ասելով հայրն ոչ տայ հրաման ստասացութեան, մեկ

այլ զայն առնելով ցուցանէ զմնասն զոր
որդին կրէ վասն սատասացութեանն, զի
զրկի 'ի զգուշութէն այնմանէ ։ Նյպէս եւ,
մծ նախ յայտնեաց զփառս արքայութե
զոր խոստացաւ տալ արդարոց եւ սրբոց ·
յորմէ եւս զրկելոցէ զմնասիչս եւ զաղտե
զխսն ։ Աւստի մինչ ասէ ։ Որ մնասէ մնա
սեսցէ տակաւին, եւ որ յաղտեղութեան
կայ, աղտեղասցի տակաւին, զայս ասելով
ոչ տայ հրաման աղտեղանալոյ եւ մնասելոյ,
այլ ցուցանէ զմնասն զոր մնասելով եւ աղ
տեղացուցանելով զհոգիս կրելոց քեն · զի
կորուսանեն զփառս արքայութեանն, զոր
խոստացաւ անմնասից եւ մաքրից ։ Որ ար
դարն է արդարասցի, եւ որ սրբ է սրբեսցի
տակաւին այսինքն ով արդարք եւ սրբք,
առաւել բազմացուցէք, եւ առաւել աճե
ցուցէք զարդարութիւնն եւ զսրբութիւնն
ձեր, զի առաւելասցի վարձն եւ արդիւնն
ձեր ։

12 · Նա ես գամ վաղվաղակի, եւ վարձք
իմ ընդ իսէ, հատուցանել իւրաքանչիւրու
մեք ըստ գործոց նոցա ·

13 · Ես եմ ալֆա եւ օմեգօ, սկիզբն եւ կատարած ։

բն 14 · Երանի որք լուանան զպատմուճանս
իւրեանց արեամբ գառին · զի եղիցի կարո
ղութիւնն նոցա 'ի փայտն կենաց · եւ ընդ
դրունս մտցեն 'ի քաղաքն ։ Օ ի եղիցի կա
րողութիւն նոցա 'ի փայտն կենաց ։

մեկ Այսինքն զի կարիցեն զմայլիլ փայտին


կենաց

կենաց, այսինքն տեսութեամբն նյ։
15. Եւ ելցեն արտաքս շունք, և դեղա
տուք. մարդասպանք. և կռապաշտք. և
ամենեքեանք որք սիրեն զստութիւն։
16. Ես յս̃ առաքեցի զհրեշտակ իմ վկայ
ել ձեզ զայս յեկեղեցիս, ես եմ արմատն
և ազգն դաւթի. աստղ պայծառ և առա
ւօտեան։
17. Եւ ոգին և հարսն ասեն. Եկ. Եւ ըն̃
որ լսէ ասասցէ. Եկ. և որ ծարաւի է. ե
կեսցէ. և որ կամի, առցէ զջուր կենաց
ձրի.
Հոգի այսինքն հոգին ս̃բ. և հարսն այս մեկ
ինքն եկեղեցին, տան մեզ ասել ց ք̃ս թէ.
Եկ շուտով 'ի դատաստան, յորում զմեզ
հանդերձ մարբն մերով. այսինքն ս̃բ ե
կեղեցեաւն հասուսցես յառագաստն երկ
նային։ Եւ որ լսէ զայս ձայնս և զկյազ
դումս հոգւոյն սրբոյ և եկեղեցւոյն 'ի սրտի
իւրում, ասասցէ. Եկ տ̃ր յս̃, և մի՛ յամե
նայր։ Եւ որ ծարաւի է արդարութեանն
և արքայութեան. ո̃վ զեղջիւր ծարաւեալ
ասասցէ առ ք̃ս։ Ո̃պ ծարաւի եղջիւր
աղբերց ջուրց, այնպէս ծարաւի անձն
իմ առ քեզ ա̃ծ. յայնժամ ա̃ծ զջուրն
կենաց ձրի արբուսցէ նմա։
18. Վկայեմ ես ա̃մի, որ լսէ զբանս մար
գարէութեան գրոյս այսորիկ, եթէ ոք
յաւելցէ առ այս, յաւելցէ ա̃ծ 'ի վերայ
նորա զհարուածս գրեցեալս 'ի գիրս այս։

19. Եւ եթէ ոք պակասեցուսցէ 'ի բա
նիցն մարգարէութեան գրոյս այսորիկ,
բարձցէ ա̃ծ զմասն նորա 'ի գրոյն կենաց,
և 'ի քաղաքէն սրբոյ, և յայսցանէ, որք գը
րեցեալք են 'ի գրի այսմիկ.

բն 20. Ասէ որ վկայէ այսոցիկ. Այո՛ գամ
վաղվաղակի. Ամէն: Եկ տ̃ր յ̃ս:

մեկ Գամ ասէ ք̃ս վաղվաղակի առ 'ի հատու
ցանել արդարոցն զկեանս յաւիտենական,
և մեղաւորացն զտանջանս յաւիտենականս:
Զայս լուեալ յօհաննու, ասաց. Ամէն:
Եկ տ̃ր յ̃ս զի ծարաւիմք քեզ ծարաւով
սաստկաւ: Ե՛կ յ̃ս սէր իմ: Եկ յ̃ս խնդու
թիւն սրտիս: Եկ յ̃ս լոյս աչացս: Եկ յ̃ս
բաղձանք հոգւոյս: Եկ յ̃ս, զի առ քեզ
նային աչք իմք. առ քեզ տարածին բա
զուկք իմք. առ քեզ աղաղակէ բերան իմ.
և առ քեզ հառաչէ սիրտ իմ: Զայս ևս
մեզ ուսոյց ասել ծերունին ս̃բն յօհաննէս
վ̃նկ 'ի մ̃ջէ թիւն ասաց. Որ լսէ այսին
քն որ ծարաւի է և ցանկայ յ̃ն, ասասցէ.
Եկ: Եւ որ ոք, ը̃ս սրտի ասասցէ ցք̃ս
թէ. Եկ: Դու̃ ևս ասասցէ նմա յաւուրն
հոգևարքին, թէ. Եկ. վ̃յ գրէ ը̃ս գրի
գոր փափին թէ. կոյս ոմն մինչ կայր հի
ւանդ, երևեցաւ նմա ս̃բն պետրոս առա
քեալն. և տեսեալ զնա սրբուհի կոյսն, ա_
սաց լալագին աչօք առ ս̃բ առաքեալն:
Զի է տ̃ր, թողան արդեօք մեղք իմք:
Ա̃ռ յոր առաքեալն ասաց այո թողան

մեղք քոյք եկ․ զոր լուեալ աւանդեաց
զհոգին 'ի ձեռն առաքելոյն սրբոյ։
21․ Շնորհ տն՟ մերոյ յի՟ քի՟ ընդ ձեզ
ամենեսեան Ամէն։

## Վախճան գրոյս։

---

## Աղօթք առ յս՟․

Ս՛կ տր՟ յն՟, և առաջնորդեա զմեզ 'ի մըր կացև 'ի յալէկոծեալ ծովուս այսմանէ․ յորում այսքանք նաւաբեկեալք ընկղմին, և ած զմեզ 'ի նաւահանգիստն կենաց։ Հան զմեզ տր՟ յն՟ 'ի չար աշխարհէս այսմանէ, և ած զմեզ յերկնայինն քո արքայութիւն․ Հան զմեզ տր՟ յն՟ 'ի յայսմանէ կենցաղոյս, յորում որդիքս ադամայ հանապազորդ մեռանիմք, հեծեմք, և ոգւոց հանեալ հառաչեմք, և ած զմեզ 'ի դրախտըն քո, յաղագս որոյ զմեզ ստեղծեր․ Ս՛կ տր՟ յն՟ և ազատեա զմեզ յաքսորանացս, և ած զմեզ 'ի հայրենին․ յերկրէ յերկինս․ 'ի մահուանէ 'ի կեանս, 'ի ժամանակէ յաւիտենականութիւնն, և 'ի մահկանացութենէ առ երանելի անմահութիւնն, ուր կարեցեմ ուրախտաբար երգել և ասել․ Հաներ յինէն զքուրձ իմ, և ինձ զգեցուցեր զուրախութիւն։ Ս՛կ տր՟ յն՟ եկ։ Ս՛կ ով կեցութիւն և փրկութիւն մեր․ ով սէր մեր։ խնդութիւն մեր։ ոգի բերանոյ մերոյ․ լոյս աչաց մերոց։ Ս՛կ տր՟ յն՟, եկ ով հայր որբոց․ մայր զրկեցելոց․ յոյս տառա



պելոց

պելոց. մխիթարիչ տրտմեցելոց. և քաղցր
պանտուխտ ար հոգւոց. Ե՛կ տր յս եկ,
զի օրսէ տարաժամեալ. և մերձեցեալ է
որ մահուան քարշեալ զմեզ զկնի քո, զի առ
շաւիցուք զկնի քո հոտով օծանելեաց քոց
զի և ղիցուք քաղաքացիք երկնային քա
ղաքին երուսաղէմայ. ընտանիք, և ժա
ռանգակիցք և որդիկք քոյք. Որ ի վ՟նջ 'ի
յաւիտենից զմեզ նախասահմանեցեր. Ե՛կ
ուրեմն առ մեզ ով հայր գթած, և խրա
տեա զմեզ. եկ առ մեզ ով մայր մեր և
գգուեա զմեզ. եկ առ մեզ ով վարդա
պետ մեր, և ուսո մեզ. Ե՛կ տր յս, եկ,
և ցոյց մեզ զողորմութիւնս քո. Արդ,
զինչ կայ բնաւ մեր 'ի յերկինս, կամ իքէն
զինչ ևս խնդրեցից յերկրի. Նուաղեցաւ
սիրտ իմ և մարմին իմ, ած սրտի իմոյ, և
բաժին իմ յաւիտեան. Ե՛կ յս ցանկութի
սրտից մերոց. Ե՛կ յս ցնծութիւն հոգ
ւոց մերոց. Եկ, եկ յս, եկ ով ճշմարիտ
սէր, սիրական երջանկութիւն, և երջա
նիկ յաւիտենականութիւն. Ամէն.

Ես Մելքիսէթ Վարդապետ կարո
ղութբն և շնորհօքն այ Պատրիարգս
մայրաքաղաքին Կոստանդինուպօլսի տեսի
զմեկնութիւնս զայս և հաւանեցայ. զի գը
տի զսա ըստ մեկնութե սրբոց մեծաց
վարդապետաց եկեղեցւոյ վն որոյ ետու
զհրաման զի տպագրեսցի.

Ամենազօր շնորհօքն այ յանկեցեալ աւար
տեցաւ գիրքս մեկնութե տեսլեանն
յոհաննու. ըստ մեկնութե սրբոց վարդա
պետաց ածաբանից եկեղեցւոյ. զոր և
թարգմանեցեալ եղև սա 'ի Լատին լեզուէ
'ի հայ բարբառ. 'ի Պետրոսէ Վարդապե
տէ Թիֆլիզեցւոյ 'ի խնդրոյ ումեմն պայ
կար բանասիրի. առ 'ի լուծումն տարա
կուսութե սրտի իւրոյ և մանկանց սրբոյ ե-
կեղեցւոյ եղբարց իւրոց սիրելեաց:

Աւ քան զի թէպէտ գտանիւր սա 'ի մէջ
ազգիս մերոյ. սակայն էր յոյժ սակաւ և
դժուարագիւտ. և այն ևս դժուար իմաց
և յաձախաբան. զոր ամ ոք ոչ կարէր պար
զպէս իմանալ. վն որոյ և սա դիւրիմաց
ոճով և կարճառօտ կերպիւ շարադրեցեալ
եղև զի մի ոք փափաքող սորին անարդիւն
լիցի 'ի մեկնութենէ սորին:

Գիտեմ զի գոն բազումք ևս որք հմուտ
քեն և կամ տեսեալ են զմեկնութիւն գր
քոյս այսմիկ այլ յաձախագոյն քան զայս,
սակայն խնդրեմք զի մի անգոսնեսցեն զկար
ճագոյնս. նկատելով միայն 'ի յաձխութե
տեսեցելոյն և հմտացելոյն. վն զի բազմու
թե բանից ոչ տարաբաւանայ զտարակու
սութե սրտի. այլ բանն. և զօրութե մտա
ցն. որոյ ընթերցողն մտադրութբ և թարգ
նախանձու, վերալնանի բազմաւ բանիւ
և զօվանայ մտօք, և ապահով լինի սխտին
'ի յամենից տարակուսութեցն որ 'ի մէջ գր
քոյս այսմիկ ունին.

Մանաւանդ այնոցիկ որք փոքր բանիւ կարողին և յօժար իմանալ զբազումս որոց յաղագս շարադրեցաւ և տպագրեցաւ եղև սա. լիով բանիւ և զօրութ̃բ և կար ճագոյն բանիւ։

Կամակցութ̃բ և հաւանութ̃բ մեծաւորաց 'ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլիս. 'ի տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սար գսի զօրավարին։

Որ և աւարտն առին եղև 'ի Յունիսին փրկչին. 1701։ Իսկ ըստ հայոց. ՌՃԾ 'ի մայիսի ԻԷ։ Աս̃ որոյ աղաչեմ զամենեսեան զի որք հան դիպիք այսմ ա̃ծ այնոյ մատենիս յիշեսջիք աւ տ̃ր միով հայր մեղայիւ և ողջունիւ զայնոսիկ որք աշխատեցան և կամ օգնու թ̃ի հասին արդեամբք և կամ աւելիթք եղին ջանիւք. 'ի թարգմանիլն և 'ի տպելն. սորին և որք յիշէք յիշեալ լիջիք 'ի միուս անգամ գալստեան տ̃ն մերոյ։

Ամ̃ն Հայր մեր որ յերկինս ես. ս̃բ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութ̃ի քո. եղիցի կամք քո որ̃պ յերկինս և յերկրի. զհաց մեր հա նապազորդ՝ տուր մեզ այսօր. թող մեզ զպար տիս մեր. որ̃պ և մեք թողումք մերոց պա տապանաց. և մի՛ տանիր զմեզ 'ի փորձու թ̃ի. այլ փրկեա զմեզ 'ի չարէ։

Ողջոյն քեզ մարիամ լի շնորհօք տ̃ր ընդ քեզ օրհնեալ ես դու 'ի կանայս. և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ Յս̃. ս̃բ Մարիամ մայր Ա̃յ բարեխօսեա վ̃ն մեր մեղաւորացս այժմ և 'ի ժամու մահու մերում Ամ̃ն.

…, զի մի փքանայցեմք ընդ [illegible]-
տասանս,

Թէ որպէս կալի է և ասելի 'ի յերս ըղ- ժ
նաւս ըղձալիս։

Թէ ճշմարիտ մխիթարութիւնն ընդ միայ- ժզ
նում աստուծում խնդրելի է։

Թէ ամ̃ք հոգք ընկենլիք են յաստուած, ժէ

Թէ թշուառութիւնք կենցաղականք ըստ ժը
օրինակին Քի՛ ըղջմտաբար են տանելիք։

Յաղագս տանելութեան անիրաւութեց։ ժթ
և թէ ոք ճշմարիտ համբերողիցէ փորձիցի

Յաղագս խոստովանութեան սեփականի ի
տկարութեան, և կենցաղոյս այսորիկ թը-
շուառութեան։

Յաղագս թէ յաստուծում 'ի վեր քան իա
զա̃մ բարի, և պարգև յարահանգչելի է։

Յաղագս յիշման բազմապատկաց բա- իբ
րարութեանցն աստուծոյ։

Յաղագս չորից ներբերողաց զմեծ խա- իգ
ղաղութիւն։

Յաղագս խոտելոյ հոգւանակի ներխուժ- իդ
ման վարուց այլոց։

Սորս արդեօք հաստատուն խաղաղութի իե
և ճշմարիտ շահավէտութիւն կայանայցէ։

Յաղագս գերազանցութեան ազատակա- իզ
նի մտի, զոր մանաւանդ աղօթն թախան-
ձական, քան թէ ընթերցումն արդիւնա-
ւորի։

Թէ անձն առանձնական յամենայնէ իէ